

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը սահմանում է Կառավարության կազմը, կառուցվածքը և գործունեության կարգը՝ Սահմանադրության 147-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև Կառավարության անդամների գործունեության երաշխիքները:

**Հոդված 2. Կառավարության կազմը և կառուցվածքը**

1. Կառավարությունը կազմված է վարչապետից, առաջին փոխվարչապետից, երկու փոխվարչապետներից և նախարարներից:

2. Կառավարության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ նախարարությունները՝

- 1) աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը.
- 2) առողջապահության նախարարությունը.
- 3) արդարադատության նախարարությունը.
- 4) արտակարգ իրավիճակների նախարարությունը.
- 5) արտաքին գործերի նախարարությունը.
- 6) բնապահպանության նախարարությունը.
- 7) գյուղատնտեսության նախարարությունը.

- 8) էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը.
  - 9) կրթության և գիտության նախարարությունը.
  - 10) մշակույթի նախարարությունը.
  - 11) պաշտպանության նախարարությունը.
  - 12) սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը.
  - 13) սփյուռքի նախարարությունը.
  - 14) տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը.
  - 15) տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը.
  - 16) տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը.
  - 17) ֆինանսների նախարարությունը:
3. Նախարարություններին վերապահված գործունեության ոլորտները սահմանվում են սույն օրենքի հավելվածում:

## **ԳԼՈՒԽ II. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**

### **Հոդված 3. Կառավարության կազմավորման կարգը և ժամկետները**

1. Կառավարությունը կազմավորվում է վարչապետ նշանակվելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Իր նշանակումից հետո վարչապետը հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին է ներկայացնում առաջին փոխվարչապետի, փոխվարչապետների և նախարարների թեկնածու նշանակելու մասին գրավոր առաջարկություն, որը ներառում է համապատասխան թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը և համապատասխան պաշտոնը, որը ~~ունի~~ առաջարկվում է նշանակել նրան:

2. Վարչապետի գրավոր առաջարկությանը կից Հանրապետության նախագահին ներկայացվում են նաև՝

1) թեկնածուի գրավոր հայտարարությունը՝ Կառավարության անդամ համապատասխան պաշտոնում նշանակվելու համաձայնության մասին.

2) տեղեկանք՝ թեկնածուի՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին.

3) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված տեղեկանքը.

4) թեկնածուի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

5) [թեկնածուի](#) համառոտ կենսագրությունը.

6) Կառավարության անդամ նշանակելու մասին Հանրապետության նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը:

3. Սույն հոդվածի իմաստով հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ է համարվում ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված հայոց լեզու առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած լինելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների կողմից տրված վկայականը, ատեստատը կամ դիպլոմը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկանքները տրամադրվում են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացվելուց հետո Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում առաջարկված թեկնածուին Կառավարության անդամ նշանակելու վերաբերյալ կամ դիմում է Սահմանադրական դատարան:

6. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ առաջարկված թեկնածուն համապատասխանում է Կառավարության անդամի համար Սահմանադրությամբ նախատեսված պահանջներին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում Կառավարության անդամին նշանակելու վերաբերյալ:

7. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ առաջարկված թեկնածուն չի համապատասխանում Կառավարության անդամի համար Սահմանադրությամբ

նախատեսված պահանջներին, ապա վարչապետը հնգօրյա ժամկետում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով առաջարկում է նոր թեկնածու:

8. Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի կատարում սույն հոդվածի 5-6-րդ մասերում նշված գործողությունները, ապա [համաձայն](#) Սահմանադրության 150-րդ հոդվածի [համաձայն](#)՝ համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով, որի մասին վարչապետը անհապաղ գրավոր հայտարարություն է տարածում: Գրավոր հայտարարությունը ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

9. Կառավարությունը համարվում է կազմավորված, եթե նշանակվել են Կառավարության անդամների առնվազն երկու երրորդը:

#### **Հոդված 4. Կառավարության անդամների լիազորությունների ստանձնումը**

1. Կառավարության անդամն իր լիազորությունները ստանձնում է Հանրապետության նախագահի հրամանագրի հրապարակման պահից: Հանրապետության նախագահի հրամանագիրը հրապարակվում է Հանրապետության նախագահի պաշտոնական կայքէջում: Իրավունքի ուժով նշանակված Կառավարության անդամն իր լիազորությունները ստանձնում է [համարվում](#) է [համարվում](#) սույն օրենքի 3-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված գրավոր հայտարարության հրապարակման պահից:

2. Լիազորությունները ստանձնած Կառավարության անդամները տալիս են [հետևյալ](#) երդումը՝ «Հանուն համազգային նպատակների իրականացման և հայրենիքի հզորացման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջև ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և շահերի պահպանմանը, հավատարիմ մնալ [Կառավարության Կառավարության](#) անդամի բարձր կոչմանը:»:

3. Կառավարության անդամները երդվում են Հանրապետության նախագահի ներկայությամբ Հանրապետության նախագահի նստավայրում: Իրավունքի ուժով

նշանակված Կառավարության անդամները երդվում են վարչապետի ներկայությամբ վարչապետի նստավայրում:

4. Կառավարության անդամի փոփոխության դեպքում Կառավարության նոր անդամը լիազորությունները ստանձնում է սույն հոդվածով սահմանված կարգով:

### **Հոդված 5. Կառավարության կազմում փոփոխությունները**

1. Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:

2. Վարչապետը պարտավոր է Հանրապետության նախագահին առաջարկել Կառավարության կազմում փոփոխություն, եթե Կառավարության անդամի համար առկա են սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված հիմքերը:

3. Վարչապետը Հանրապետության նախագահին, որպես կանոն, միաժամանակ ներկայացնում է Կառավարության անդամի նոր թեկնածուին սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

4. Եթե Կառավարության նոր անդամի թեկնածուն միաժամանակ չի ներկայացվում, ապա վարչապետը Կառավարության նոր անդամի թեկնածուին Հանրապետության նախագահին է ներկայացնում 15-օրյա ժամկետում:

5. Եթե Հանրապետության նախագահը Կառավարության նոր անդամ նշանակելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը եռօրյա ժամկետում իր առարկություններով վերադարձնում է վարչապետին, իսկ վարչապետը եռօրյա ժամկետում չի ընդունում այդ առարկությունը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ստորագրում Կառավարության անդամին նշանակելու վերաբերյալ կամ դիմում է Սահմանադրական դատարան:

6. Սահմանադրական դատարան դիմելու դեպքում կիրառվում են սույն օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերը:

7. Կառավարության անդամին պաշտոնից ազատելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրամանագրի հրապարակման պահից: Եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում

պաշտոնից չի ազատում վարչապետի կողմից առաջարկված Կառավարության անդամին, ապա համապատասխան փոխվարչապետի կամ նախարարի լիազորությունները դադարեցված են համարվում իրավունքի ուժով, որի մասին վարչապետն անհապաղ գրավոր հայտարարություն է տարածում: Գրավոր հայտարարությունը ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

### **Հոդված 6. Կառավարության հրաժարականը**

1. Սահմանադրության 158-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունը Հանրապետության նախագահին ներկայացնում է իր հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի, Կառավարությանը վստահություն չհայտնելու, Կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը:

2. Վարչապետը պարտավոր է հրաժարական ներկայացնել հետևյալ դեպքերում՝

1) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

2) նա խախտել է սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները:

3. Համարվում է, որ վարչապետի պաշտոնը թափուր է այն դեպքերում, երբ՝

1) վարչապետը մահացել է.

2) վարչապետի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ.

3) վարչապետին անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

4. Եթե վարչապետն իր նշանակումից հետո հնգօրյա ժամկետում Հանրապետության նախագահին չի առաջարկում ~~փոխվարչապետների~~ և նախարարների Կառավարության անդամների թեկնածուների՝ առնվազն երկու երրորդին, ապա համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել:

5. Վարչապետի հրաժարականի դեպքում Հանրապետության նախագահն անհապաղ հրամանագիր է ընդունում Կառավարության հրաժարականն ընդունելու մասին:

### **ԳԼՈՒԽ III. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Հոդված 7. Վարչապետը**

1. Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք պարտադիր են Կառավարության անդամների համար:

2. Վարչապետը ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը:

3. Վարչապետը հետևում է Կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացմանը:

4. Վարչապետն ապահովում է Կառավարության գործունեության միասնականությունը:

5. Կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով վարչապետն ընդունում է որոշումներ, ինչպես նաև տալիս է հանձնարարականներ:

6. Վարչապետն իր որոշմամբ սահմանում է յուրաքանչյուր փոխվարչապետի կողմից համակարգվող՝ Կառավարության գործունեության ոլորտները:

7. Վարչապետն իրավասու է ընդլայնել նախարարության գործունեության ոլորտները:

8. Վարչապետը նախարարի առաջարկությամբ սահմանում է փոխնախարարների թիվը, նշանակում է փոխնախարարներին, հաստատում է նախարարությունների կանոնադրությունը, ~~եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,~~ և սահմանում է աշխատողների թվաքանակը:

9. Վարչապետը ձևավորում է իր աշխատակազմը, որի խնդիրն է ապահովել վարչապետի և փոխվարչապետների լիազորությունների իրականացումը, այդ թվում Կառավարության նիստերի անցկացումը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարին

նշանակում և ազատում է վարչապետը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում վարչապետի աշխատակազմի հանրային ծառայության [այլ պաշտոններում](#); [Լներանց](#) ազատում այդ պաշտոններից:

10. Վարչապետի աշխատակազմը [սույն օրենքով սահմանված իր իրավասության սահմաններում](#) հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Վարչապետի աշխատակազմը ստեղծվում, վերակազմակերպվում [կամ և նրա](#) գործունեությունը դադարում է վարչապետի որոշմամբ:; [Վարչապետի աշխատակազմը](#) գործում է օրենքների, [Կառավարության](#) — [Կառավարության](#) աշխատակարգի և իր կանոնադրության հիման վրա: Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը [և կառուցվածքը](#) հաստատվում է վարչապետի որոշմամբ:

11. Վարչապետը Կառավարության աշխատակարգով սահմանված կարգով ապահովում է հանրությանը Կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար փոխանցումը:

12. Վարչապետը սահմանում է իր բացակայության ժամանակ առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու կարգը, այդ թվում՝ վարչապետին փոխարինող առաջին փոխվարչապետի լիազորությունների ծավալը: Այդ կարգով պետք է սահմանվի նաև վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու կարգը:

13. Առաջին փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու անհնարինության դեպքում վարչապետին փոխարինում է մեկ այլ փոխվարչապետ՝ վարչապետի կողմից սահմանված կարգով:

14. Վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության մասին որոշումը կայացնում է Կառավարությունը՝ Կառավարության անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով:

15. Վարչապետն իրավասու է իր նախաձեռնությամբ վերանայել նախարարներին, Կառավարությանը [և](#); [ինչպես նաև](#) վարչապետին ենթակա մարմիններին ղեկավարներին որոշումները:



16. Վարչապետն իրավասու է կազմավորել խորհրդակցական մարմիններ, որոնց ղեկավարումը կարող է հանձնարարել համապատասխան փոխվարչապետին:

17. Վարչապետի նստավայրը Երևան քաղաքում է:

### **Հոդված 8. Փոխվարչապետը**

1. Փոխվարչապետը վարչապետի հանձնարարությամբ իրականացնում է Կառավարության գործունեության առանձին ոլորտների համակարգումը:

2. Կառավարության գործունեության՝ իրեն վերապահված առանձին ոլորտների համակարգումը ներառում է փոխվարչապետի կողմից ձեռնարկվող այնպիսի գործողություններ, որոնց նպատակն այդ ոլորտներում գործող նախարարությունների գործունեության համաձայնեցումը և ներդաշնակեցումն է:

3. Փոխվարչապետին վարչապետը կարող է վերապահել իր համակարգման ոլորտում Կառավարության անդամներին, [Կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարներին](#) և վարչապետի աշխատակազմի աշխատակիցներին կոնկրետ հարցերով հանձնարարություն տալու իրավասություն:

4. Փոխվարչապետը վարչապետի հանձնարարությամբ կարող է իր համակարգման ոլորտի շրջանակից դուրս հանձնարարություններ տալ Կառավարության անդամներին, [Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարներին, ինչպես նաև](#) և վարչապետի աշխատակազմի աշխատակիցներին:

5. Փոխվարչապետը վարչապետի հանձնարարությամբ ներկայացնում է Կառավարությունը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ միջազգային կազմակերպությունների հիմնադիր փաստաթղթերով ստեղծված մարմիններում՝ իրականացնելով այդ մարմինների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված գործառույթներ:

6. Փոխվարչապետի հրապարակային ելույթները պետք է համահունչ լինեն Կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններին:

7. Փոխվարչապետն ունի գրասենյակ, որն ապահովում է փոխվարչապետի ընթացիկ գործունեության իրականացումը:

## **Հողված 9. Նախարարը**

### 1. Նախարարը՝

1) ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և իրականացնում է Կառավարության՝ նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի քաղաքականությունը.

2) իրականացնում է նախարարությանը ենթակա մարմինների, ինչպես նաև նախարարությանը ենթակա կազմակերպությունների կառավարումը և վերահսկողություն է իրականացնում նրանց նկատմամբ.

3) վարչապետին առաջարկություններ է ներկայացնում նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի հիմնական ուղղությունների վերաբերյալ.

~~4) \_\_\_\_\_ 4) Կառավարության քննարկմանն է ներկայացնում օրենքների և Կառավարության որոշումների նախագծեր.~~

~~4)5) վերանայում է նախարարությանը ենթակա մարմնի որոշումները:~~

2. Նախարարի հրապարակային ելույթները պետք է համահունչ լինեն Կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններին:

3. Նախարարի հիվանդության, արձակուրդում գտնվելու կամ արտասահմանում գործուղման մեջ լինելու դեպքում՝ նախարարին փոխարինող փոխնախարարն ամբողջ ծավալով իրականացնում է նախարարին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ Ազգային ժողովում:

## **ԳԼՈՒԽ IV. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԸ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

### **Հողված 10. Կառավարության նիստերը**

1. Կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է կոլեգիալ, նիստերի միջոցով:

2. Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:

3. Կառավարության նիստերը, որպես կանոն, հրավիրվում են շաբաթը մեկ անգամ:

4. Կառավարության նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է Կառավարության անդամների կեսից ավելին, բացառությամբ այն նիստի, որի ժամանակ քննարկվում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու հարցը, որը իրավազոր է անկախ քվորումից:

5. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակահատվածում նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին մասնակցում է Կառավարության անդամների առնվազն մեկ քառորդը:

6. Կառավարության անդամները պարտավոր են մասնակցել Կառավարության նիստերին և նիստերից կարող են բացակայել վարչապետի համաձայնությամբ:

7. Կառավարության նիստերին ներկա գտնվելու իրավունք ունեն Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, պետական եկամուտների, քաղաքաշինության, միջուկային անվտանգության կարգավորման, վիճակագրական, [անշարժ գույքի կադաստրի](#) կոմիտեների և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, վարչապետի մամուլի քարտուղարը, ինչպես նաև վարչապետի կողմից հրավիրված այլ անձինք:

8. Կառավարության նիստի օրակարգում ընդգրկված գաղտնի հարցերի քննարկմանը ներկա գտնվելու իրավունք ունեն Կառավարության անդամները և վարչապետի որոշմամբ՝ այլ պաշտոնատար անձինք:

9. Կառավարության նիստերում քննարկման են ներկայացվում, մասնավորապես՝

1) օրենքների նախագծեր.

2) Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծեր.

3) Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված այլ հարցեր:

10. Կառավարության նիստի օրակարգը վարչապետի ներկայացմամբ հաստատում է Կառավարությունը: Մինչև օրակարգի հաստատումը Կառավարության անդամները կարող են առաջարկություններ ներկայացնել դրա վերաբերյալ:

11. Կառավարության նիստի օրակարգում ներառվելիք հարցերը, որպես կանոն, նախապես քննարկվում են նախարարական կոմիտեներում, որոնց կազմը,

կառուցվածքը, գործունեության շրջանակն ու կարգը սահմանվում են Կառավարության աշխատակարգով:

12. Եթե վարչապետը գտնում է, որ Կառավարության նիստի օրակարգ ընդգրկելու համար առաջարկվող որևէ հարցի քննարկման անհրաժեշտություն չկա, ապա տվյալ հարցը Կառավարության նիստում քվեարկվում է առանց քննարկման, եթե Կառավարության անդամներից որևէ մեկը չի առարկում: Առարկելու դեպքում հարցը քննարկվում է ընդհանուր կարգով:

13. Կառավարության նիստի օրակարգի հարցերը զեկուցվում են Կառավարության անդամների, իսկ վարչապետի թույլտվությամբ՝ փոխնախարարների, Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների կողմից:

14. Կառավարության նիստն ընթանում է մինչև օրակարգի սպառումը:

15. Կառավարության նիստերը դռնփակ են: Վարչապետի որոշմամբ նիստի մի մասը կարող է անցկացվել դռնբաց: Կառավարության նիստերն արձանագրվում են վարչապետի աշխատակազմի կողմից: Նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը վարչապետի հանձնարարությամբ կարող է հրապարակվել:

16. Կառավարության նիստերն արձանագրվում են վարչապետի աշխատակազմի կողմից: Կառավարության նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը վարչապետի հանձնարարությամբ կարող է հրապարակվել: Կառավարության նիստերը դռնփակ են: Վարչապետի որոշմամբ նիստի մի մասը կարող է անցկացվել դռնբաց:

17. Կառավարության նիստի օրակարգի նախագիծը ենթակա է հրապարակման Կառավարության նիստից առնվազն մեկ օր առաջ, ընդ որում, օրակարգում ներառված՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող հարցերի վերնագրերի փոխարեն նշվում է «գաղտնի» բառը:

187. Կառավարության անդամն, ինչպես նաև Կառավարության նիստին ներկա եղած այլ անձն իրավունք չունի առանց վարչապետի թույլտվության տեղեկատվություն հրապարակել Կառավարությունում քննարկված որևէ հարցի քննարկման ընթացքի մասին:

## **Հոդված 11. Կառավարության որոշումները**

1. Կառավարության որոշումները, բացառությամբ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ որոշումների և Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, ընդունվում են նիստին մասնակցող Կառավարության անդամների ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ: Օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու վերաբերյալ որոշումները և Կառավարության ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Կառավարության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ: Նիստին մասնակցող Կառավարության անդամները պարտավոր են մասնակցել քվեարկությանը: Կառավարության անդամները կարող են քվեարկել կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում վարչապետի ձայնը որոշիչ է:

2. Եթե վարչապետը գտնում է, որ Կառավարության նիստի օրակարգ որևէ հարցի ընդգրկման անհրաժեշտությունը չկա, ապա տվյալ հարցի վերաբերյալ վարչապետի հանձնարարությամբ կազմակերպվում է գրավոր քվեարկություն: Կառավարության որոշումն ընդունվում է Կառավարության անդամների ձայների մեծամասնությամբ: Կառավարության անդամները կարող են քվեարկել կողմ կամ դեմ, կամ ներկայացնել առաջարկություն հարցի քննարկումը Կառավարության նիստում իրականացնելու վերաբերյալ: Վարչապետին նման առաջարկություն ներկայացվելու դեպքում սույն մասում նշված Կառավարության որոշումը համարվում է չընդունված և հարցը քննարկվում է Կառավարության նիստում՝ ընդհանուր կարգով:

3. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումը, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության ժամանակահատվածում Կառավարության բոլոր ~~որոշումները~~ որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Կառավարության անդամների ձայների մեծամասնությամբ՝ բանավոր քվեարկությամբ: Կառավարության անդամները կարող են քվեարկել կողմ կամ դեմ:

4. Վարչապետին փոխարինող փոխվարչապետի ձայնը քվեարկության ժամանակ հաշվարկվում է միայն որպես վարչապետի ձայն:

5. Կառավարության որոշումները ստորագրվում են վարչապետի կողմից:

6. Կառավարության որոշումների նախագծեր կարող են ներկայացնել Կառավարության անդամները:

7. Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները կարող են վարչապետին առաջարկել Կառավարության որոշումների նախագծեր:

8. Այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները Կառավարության որոշումների նախագծեր կարող են առաջարկել Կառավարության համապատասխան անդամին:

### **Հոդված 12. Կառավարության աշխատակարգը**

1. Կառավարությունը գործում է սույն օրենքի և վարչապետի ներկայացմամբ Կառավարության կողմից հաստատված աշխատակարգի համաձայն:

2. Կառավարության աշխատակարգով սահմանվում են Կառավարության գործառույթների և լիազորությունների իրականացման ընթացակարգերը:

### **Հոդված 13. Հանրապետության նախագահին իրազեկելը**

1. Կառավարությունը պարբերաբար իրազեկում է Հանրապետության նախագահին Կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման, իսկ Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ՝ առանձին հարցերի վերաբերյալ:

**ԳԼՈՒԽ Կ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

### **Հոդված 14. Կառավարության անդամի պաշտոնի անհամատեղելիությունը**

1. Սահմանադրության 148-րդ հոդվածին համապատասխան՝ Կառավարության անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և

ստեղծագործական աշխատանքից, որը չպետք է խոչընդոտի Կառավարության անդամի լիազորությունների իրականացմանը:

2. Կառավարության անդամի լիազորությունները ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Կառավարության անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

3. Կառավարության բնականոն աշխատանքն ապահովելու ~~համար~~ [նպատակով](#) Կառավարության անդամը վարչապետին տեղյակ է պահում համատեղությամբ կատարվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի մասին:

### **Հոդված 15. Կառավարության անդամի պաշտոնեական գործունեությունը**

1. Կառավարության անդամի հիմնական աշխատանքային ժամանակը ներառում է Կառավարության, նախարարական կոմիտեների նիստերի անցկացման, ինչպես նաև Կառավարության անդամի այլ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

2. Կառավարության անդամի հիմնական աշխատանքային ժամանակը նորմավորված չէ:

3. Կառավարության անդամի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

4. Կառավարության անդամի լիազորությունների ժամկետը հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ: Կառավարության անդամի ընդհանուր ստաժը չի ընդմիջվում, եթե նա իր լիազորությունների ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում, անցնում է այլ աշխատանքի:

5. Կառավարության անդամին իր լիազորությունների ժամկետով տրամադրվում են վկայական և դիվանագիտական անձնագիր:

**Հոդված 16. Կառավարության անդամի՝ ~~պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը, նրա ազատումը զորահավաքներից ու վարժական հավաքներից~~**

1. Կառավարության անդամն իր լիազորությունների ժամկետում ~~ստանում է տարկետում պարտադիր զինվորական ծառայությունից և ազատվում է~~ զորահավաքներից, ու վարժական հավաքներից:

**Հոդված 17. Կառավարության անդամի բնակարանային պայմանների ապահովումը**

1. Կառավարության կողմից սահմանված դեպքերում իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված Կառավարության անդամի նստավայր քաղաքում բնակարան չունեցող Կառավարության համապատասխան անդամին իր դիմումի հիման վարիամածայն տրամադրվում է տվյալ քաղաքում վայրում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված փոխհատուցման տրամադրման կարգը, առավելագույն չափն ու ժամկետը սահմանում է Կառավարությունը առավելագույն չափը սահմանում է վարչապետը:

**Հոդված 18. Կառավարության անդամի արձակուրդը**

1. Կառավարության անդամն ունի ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ:

2. Հիմնական արձակուրդային վճարից բացի, Կառավարության անդամին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

3. Վարչապետի համաձայնությամբ Կառավարության անդամին կարող է տրամադրվել մինչև 15 օր տևողությամբ չվճարվող արձակուրդ:



4. Կառավարության անդամներին արձակուրդ տրամադրվում է վարչապետի որոշմամբ:

### **Հոդված 19. Եզրափակիչ դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-79-Ն օրենքը:

### **Հոդված 20. Անցումային դրույթներ**

1. Կառավարության աշխատակարգն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

2. Վարչապետին փոխարինելու կարգը վարչապետի կողմից սահմանվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

3. Կառավարության աշխատակազմը գործում է մինչև վարչապետի աշխատակազմի ստեղծումը: Վարչապետի աշխատակազմի ստեղծման մասին վարչապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից Կառավարության աշխատակազմը լուծարվում է (գործունեությունը դադարում է): Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայող հանդիսացող պաշտոնատար անձինք քաղաքացիական ծառայության կարճաժամկետ ռեզերվ չեն ուղարկվում:

4. Կառավարության աշխատակազմի պաշտոնատար անձինք, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողները, Կառավարության աշխատակազմի լուծարումից հետո շարունակում են պաշտոնավարել որպես տվյալ պաշտոնի պաշտոնակատարներ և այդ ժամանակահատվածը համարվում է պետական ծառայության չընդհատված ստաժ, մինչև օրենքով սահմանված կարգով պաշտոնից ազատվելը կամ ~~վարչապետի աշխատակազմում~~ նոր պաշտոնում նշանակվելը: Նոր պաշտոնում նշանակվելու դեպքում վերը նշված ստաժը շարունակվում է առանց ընդհատման: Սույն մասով

նախատեսված ժամանակահատվածի համար նշված պաշտոնատար անձինք վճարվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սահմանված չափով:

5. Կառավարության աշխատակազմի պաշտոնատար անձանց, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների հետ վերջնահաշվարկ կատարվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով պաշտոնից ազատվելու դեպքում: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով պաշտոնից ազատվելու դեպքում 6 ամիս ժամկետով սահմանվում է վարձատրություն՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան բարձրագույն խմբի 1-ին ենթախմբի առավելագույն դրույքաչափը: Վարձատրության վճարումն ապահովում է վարչապետի աշխատակազմը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

6. Վարչապետի աշխատակազմի ստեղծման մասին վարչապետի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում աշխատակազմի ձևավորման փուլում Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները՝ վարչապետի աշխատակազմի փոխ-նոր պաշտոններում նշանակվումներն իրականացվում են առանց մրցույթի հայտարարվելու՝ սվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից:

7. Վարչապետի աշխատակազմը հանդիսանում է Կառավարության աշխատակազմի իրավահաջորդը և՛ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ստանձնած, ինչպես նաև միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու մասով:

8. Մինչև Կառավարության աշխատակազմի պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը Կառավարության աշխատակազմի բյուջետային գլխավոր կարգադրիչի լիազորությունները վերապահվում են վարչապետի աշխատակազմին:

**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՆԵՐԸ**

1. ~~Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում ու իրականացնում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության, բնակչության զբաղվածության, ժամանակավոր անաշխատունակության դեպքում սոցիալական ապահովության, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերում հանրային ծառայությունների համարանիշերի կիրառման ապահովման, պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության, սոցիալական ապահովության ոլորտի պետական նպատակային ծրագրերի իրականացման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության, բնակչության զբաղվածության և աշխատանքային միգրացիայի, ժամանակավոր անաշխատունակության դեպքում սոցիալական ապահովության, պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, Ժողովրդագրական պետական քաղաքականության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:~~

2. Առողջապահության նախարարությունը մշակում և իրականացնում է առողջապահության, բժշկական օգնության որակի և արդյունավետության բարձրացման, առողջապահական համակարգի արդյունավետ գործունեության

նպատակով առողջապահական կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության ապահովման, առողջապահության համակարգի արդյունավետ գործունեության, կազմակերպման, կառավարման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների ներդրման, կայուն ֆինանսավորման ապահովման, մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցման, առողջապահության բնագավառում միջազգային և միջգերատեսչական համագործակցության ապահովման, աշխատողների առողջության և անվտանգության պահպանման, առողջապահության ոլորտում լիցենզիաների, թույլտվությունների և հավաստագրերի տրամադրման ապահովման, մոր և մանկան առողջության պահպանման, արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության ապահովման, հանրապետությունում արտադրվող և ներմուծվող դեղերի անվտանգության, որակի և արդյունավետության ապահովման, հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, լիցենզավորման և դեղերի պետական գրանցման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

3. Արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է արդարադատության, այդ թվում՝ դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, և միջազգային իրավական փոխօգնության, ~~և~~ հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը, ապահովում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը:

4. Արտակարգ իրավիճակների նախարարությունը մշակում և իրականացնում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման ու իրականացման, քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծման ու զարգացման ապահովման, ռազմական գործողությունների ընթացքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և հակառակորդի անմիջական շփման գոտուց դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության նպատակով խաղաղ ժամանակ տարածքային պաշտպանության համակարգի ձևավորման ապահովման և այդ աշխատանքների համակարգման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման ու որոշումների մշակման և ընդունման աշխատանքների, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, պետական պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման ոլորտներում կառավարության քաղաքականությունը: Արտակարգ իրավիճակների նախարարությունը մշակում և իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ինչպես նաև բնածին և մարդածին աղետների ռիսկերի, հետևանքների նվազեցման և վերացման, իրականացման համակարգման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման և առաջնային, անհետաձգելի, վթարավերականգնողական աշխատանքների համակարգման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության տարահանման գործընթացների պետական կարգավորման ու դրա իրականացման աշխատանքների համակարգման, նշված ոլորտների խնդիրները լուծելու նպատակով տեղեկատվության ստացման, ամփոփման ու որոշումների մշակման և ընդունման աշխատանքների, նշված ոլորտներում կառավարման իրականացման և համակարգման, հումանիտար արձագանքման գործողությունների իրականացման համակարգման, պետական

պահուստի պաշարների պահպանման ու սպասարկման, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման, հիդրոոդերուլոթաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովման, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների համակարգման, պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության ապահովման, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզիաների տրամադրման, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարման, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման, հաշվառման, ինչպես նաև լիցենզավորման ծառայությունների մատուցման ապահովման, արտակարգ իրավիճակների, աղետների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բուժօգնության ցուցաբերման և բուժտարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպչական և ռազմավարական հիմունքների մշակման, Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման մասնակցության (խաղաղ ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովման ուղղությամբ քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, դրանց ծավալման և կիրառման պլանավորումը և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում այդ ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի) ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

5. ~~Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների պատշաճ և հետևողականորեն ներկայացման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման, աշխարհի քաղաքական և տնտեսական~~

դրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության ուսումնասիրության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին արտաքին և ներքին քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների պատշաճ և հետևողականորեն ներկայացման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման, համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:»:

6. Բնապահպանության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների

~~վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև  
բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման, անտառների  
պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման,  
Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրվող և օգտագործվող  
վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների էկոլոգիապես անվտանգ  
կառավարման պայմանների ապահովման, շրջակա միջավայրի ու բնական  
ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) մասին տվյալների  
միասնական հանրապետական ֆոնդերի, կադաստրների ու ռեգիստրների վարման  
ապահովման, բնապահպանության ոլորտում լիցենզավորման, թույլտվությունների և  
համաձայնեցումների տրամադրման ապահովման, շրջակա միջավայրի վրա  
ազդեցության պետական փորձաքննության ապահովման, էկոլոգիական գիտության,  
կրթության և իրազեկման ապահովման ոլորտներում կառավարության  
քաղաքականությունը: Բնապահպանության նախարարությունը մշակում և  
իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի  
պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման, մթնոլորտի,  
ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ  
պահպանվող տարածքների, անտառների վրա վնասակար ներգործությունների  
կանխարգելման կամ նվազեցման, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն  
ուղղված, ներառյալ՝ հարմարվողականության, ինչպես նաև բնական ռեսուրսների  
ողջամիտ օգտագործման, վերականգնման և վերարտադրության, բնության հատուկ  
պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության,  
պաշտպանության, վերարտադրության և օգտագործման, շրջակա միջավայրի  
մոնիթորինգի իրականացման, Հայաստանի Հանրապետության տարածքում  
արտադրվող և օգտագործվող վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների  
էկոլոգիապես անվտանգ կառավարման պայմանների ապահովման, շրջակա  
միջավայրի ու բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների  
պաշարների) մասին տվյալների միասնական հանրապետական ֆոնդերի,  
կադաստրների ու ռեգիստրների վարման ապահովման, բնապահպանության ոլորտում  
լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների տրամադրման, շրջակա  
միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ապահովման,~~



էկոլոգիական գիտության, կրթության և իրազեկման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

7. ~~Գյուղատնտեսության նախարարությունը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ագրոպարենային, գիտատեխնիկական միասնական քաղաքականության հիման վրա Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ներուժի առավելագույն օգտագործման միջոցով գյուղատնտեսության զարգացման ապահովման, սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Գյուղատնտեսության նախարարությունը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության ներուժի առավել արդյունավետ օգտագործմանը և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված՝ առավարության քաղաքականությունը գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, անասնաբուժության, բուսասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության, —գիտատեխնիկական ապահովման և խորհրդատվության, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման, գյուղատնտեսական հողերի մոնիթորինգի և ոլորտի գյուղատնտեսությանը պետական աջակցության ոլորտներում բնագավառներում՝ նպատակաուղղված գյուղատնտեսության ներուժի առավել արդյունավետ օգտագործմանը և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման Կառավարության քաղաքականությունը:~~

8. ~~Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը մշակում և իրականացնում է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի, ընդերքի ոլորտների, Հայաստանի Հանրապետության էներգետիկական անկախության, ատոմային էներգիայի՝ խաղաղ նպատակներով օգտագործման, ընդերքօգտագործման, ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելուն ուղղված, երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման և տնօրինման, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Էներգետիկ~~

ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը մշակում և իրականացնում է էներգետիկայի, ընդերօգտագործման և ընդերքի պահպանության բնագավառների, միջուկային էներգետիկայի, վերականգնվող էներգետիկայի, էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում անվտանգության ապահովման, Հայաստանի Հանրապետության էներգետիկական անկախության, էներգախնայողության և էներգաարդյունավետության զարգացմանը և ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործմանը նպաստելուն ուղղված, երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման և տնօրինման, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման ոլորտներում պետական քաղաքականությունը:

9. ~~Կրթության և գիտության նախարարությունը մշակում և իրականացնում է կրթության և գիտության, հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդման, ազգային և համամարդկային արժեքների պահպանման և զարգացման, կրթության և գիտության համակարգի բնականոն գործունեության ապահովման, կրթության և գիտության բնագավառների պահպանման ու զարգացման ապահովման, կրթության և գիտության համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգի և գնահատման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:~~ Կրթության և գիտության նախարարությունը մշակում և իրականացնում է կրթության և գիտության, հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդման, ազգային և համամարդկային արժեքների պահպանման և զարգացման, գիտական և գիտատեխնիկական, կրթության և գիտության համակարգի բնականոն գործունեության ապահովման, կրթության և գիտության բնագավառների պահպանման ու զարգացման ապահովման, կրթության և գիտության համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգի և գնահատման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

10. ~~Մշակույթի նախարարությունը մշակում և իրականացնում է մշակույթի, մշակույթի զարգացմանը նպաստելու, մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահոշակմանն ու ծառայությունների մատուցմանը նպաստելու ոլորտներում~~

Կառավարության քաղաքականությունը: Մշակույթի նախարարությունը մշակում և իրականացնում է մշակույթի զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, օգտագործման, հանրահոշակման, հասարակության կողմից մշակույթի՝ որպես զարգացման միջոցի գիտակցման, նոր արժեքների ու նոր գաղափարների ներդրման, հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման ու զարգացման համար պայմանների ստեղծման, մշակույթի բնագավառում միջազգային համագործակցության ու փոխանակումների ընդլայնման, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, մշակույթի ոլորտում ազատ ու մատչելի ծառայությունների մատուցման պայմանների ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

11. Պաշտպանության նախարարությունն Անվտանգության խորհրդի կողմից սահմանված պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում մշակում և իրականացնում է պաշտպանության, Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության, պետական սահմանի անձեռնմխելիության ու անվտանգության պաշտպանության ապահովման, օրենքով սահմանված կարգով ռազմաքաղաքական իրադրության, տարածաշրջանային իրավիճակի, Հայաստանի Հանրապետության ռազմավարական և ռազմական շահերին առնչվող հիմնախնդիրների ու գործընթացների, ռազմական սպառնալիքների և վտանգների, պաշտպանվածության աստիճանի ուսումնասիրման, գնահատման ու անհրաժեշտ միջոցառումների իրականացման ապահովման, ռազմարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման ապահովման, միջազգային ռազմաքաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական հարաբերությունների իրականացման ու հավաքական պաշտպանության մեխանիզմների զարգացման, զինված ուժերի միջազգային ներգրավման, զինված ուժերի համակողմանի ապահովման, զինվորական անձնակազմի պատրաստության, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության ապահովման, Հայաստանի Հանրապետության և նրա պաշտպանական համակարգի դեմ ուղղված տեղեկատվական քարոզչության

կանխարգելման ու հակաքարոզչական միջոցառումների իրականացման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

12. ~~Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է սպորտի և երիտասարդության հարցերի, բնակչության առողջացման, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի ստեղծման, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում գիտամեթոդական ու հետազոտական աշխատանքների իրականացման, գիտական հետազոտությունների անցկացման ծրագրերի համադասման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:~~Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի, բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական դաստիարակության գիտականորեն հիմնավորված համակարգի ստեղծման, մարզիկների պատրաստման, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության, սպորտի բնագավառում գիտամեթոդական ու վերլուծական աշխատանքների իրականացման, ծրագրերի համադասման ապահովման, երիտասարդության ներուժի իրացման և զարգացման համար արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման, երիտասարդների մասնակցային գործընթացների խթանման, հոգևոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, հայրենասիրական դաստիարակության, իրավագիտակցության մակարդակի բարձրացման, սոցիալական, տնտեսական, իրավական երաշխիքների ստեղծմանն ուղղված Կառավարության քաղաքականությունը:

13. Սփյուռքի նախարարությունը մշակում և իրականացնում է հայկական սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացման, հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանման նպատակով սփյուռքի կազմակերպությունների հետ համատեղ լեզվամշակութային ծրագրերի մշակման, յուրաքանչյուր հայի համար Հայաստանի մասին տեղեկատվության մատչելիության ապահովման, հայկական սփյուռքի և Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվամիջոցների համագործակցության ապահովման, այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմամշակութային արժեքների պահպանման, հայ համայնքների

զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման, համահայկական ծրագրերի մշակման ու իրականացման, հայրենադարձությունը խթանող ծրագրերի մշակման, Հայաստանի ներքին խնդիրների լուծման համար սկյուռքի ներուժի ներգրավման կայուն և արդյունավետ կառուցակարգերի մշակման ու ներդրման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

14. ~~Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը մշակում և իրականացնում է տարածքային կառավարման և զարգացման, տարածքային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, Երևանում տարածքային կառավարման իրականացման ապահովման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման միասնական տեղեկատվական համակարգի կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովման, տարածքների զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի ձևավորման, Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության համակարգի զարգացման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը մշակում և իրականացնում է տարածքային կառավարման և զարգացման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, Երևանում տարածքային կառավարման իրականացման ապահովման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման միասնական տեղեկատվական համակարգի կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովման, մարզերի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակման, վարչատարածքային արդյունավետ բաժանման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովման, Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի դրույթների իրականացման նկատմամբ հսկողության իրականացման, համայնքային ծառայության համակարգի զարգացման ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:~~

15. ~~Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը մշակում և իրականացնում է մրցակցային տնտեսության զարգացման պայմանների ապահովման, սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացման, արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացման և տուրիզմի զարգացման, գործարարության, ներդրումների և արտահանման, գիտելիքի տնտեսության ձևավորման և նորարարության խթանման, տարածքային զարգացման համաչափության ապահովման ոլորտներում Կառավարության տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը մշակում և իրականացնում է գիտելիքի և նորարարության ձևավորման խթանման, արտահանման շուկաների հասանելիության ապահովման և արտահանման զարգացման, ներդրումների խթանման, գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման, արդյունաբերության մրցունակության բարձրացման, զբոսաշրջության, տարածքային համաչափ զարգացման, մրցակցային պայմանների բարելավման, սպառողների շահերի պաշտպանության համակարգի զարգացման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:~~

16. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը մշակում և իրականացնում է տրանսպորտի, կապի, տեղեկատվայնացման, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության, տրանսպորտի և փոստի, լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման, տրանսպորտի, կապի, համացանցի տեղեկատվայնացման և ճանապարհաշինական բնագավառներում միջպետական համագործակցության, Հեռահաղորդակցության միջազգային միությունում և Համաշխարհային փոստային միությունում, ոլորտային այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ձևավորման, ռազմական դրության դեպքում էլեկտրոնային հաղորդակցության բոլոր ցանցերի կամ ծառայությունների կամ դրանցից յուրաքանչյուրի շահագործման և կառավարման, ինչպես նաև տեղեկատվական և փոստային կապի ցանցերի գործունեության

ապահովման, թվային տնտեսության և նորարարության ձևավորման խթանման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

17. ~~Ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման և պետական ֆինանսների կառավարման, բյուջետային գործընթացի կազմակերպման, միջազգային ֆինանսական համագործակցության, ֆինանսատնտեսական, վարկային, հարկաբյուջետային, ֆինանսական շուկայի միասնական քաղաքականության մշակման և իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովման, կապիտալի, ֆինանսական շուկայի, այդ թվում՝ աուդիտորական, վիճակախաղերի, խաղատների և շահումով խաղերի, թանկարժեք մետաղների ոլորտում գործունեության կարգավորման մասին իրավական ակտերի մշակման, հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ապահովման, Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման, գնումների գործընթացի պետական կարգավորման և համակարգման և պետական պարտքի կառավարման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: Ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է հարկաբյուջետային՝ պետության եկամուտների ձևավորման և ծախսման, հանրային ֆինանսների կառավարման, այդ թվում՝ բյուջետային գործընթացի կազմակերպման, ներքին ֆինանսական հսկողության (ներառյալ ներքին աուդիտի), գնումների գործընթացի պետական կարգավորման և համակարգման, ֆինանսաբյուջետային վերահսկողության, պետական պարտքի կառավարման, հաշվապահական հաշվառման, աուդիտորական գործունեության, միջազգային ֆինանսական համագործակցության, խաղային գործի, ինչպես նաև ֆինանսատնտեսական, վարկային, ֆինանսական շուկայի միասնական քաղաքականության մշակման և իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովման, թանկարժեք մետաղների ոլորտում գործունեության կարգավորման մասին իրավական ակտերի մշակման, համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:~~

Կ-265<sup>1</sup>-12.02.2018-ՊԻՄԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գործատուների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-115-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:



Կ-265<sup>2</sup>-12.02.2018-ՊԻՄԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-135-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

Կ-265<sup>3</sup>-12.02.2018-ՊԻՄԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

Կ-265<sup>4</sup>-12.02.2018-ՊԻՄԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

Կ-265<sup>5</sup>-12.02.2018-ՊԻՄԻ-011/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի ([այսուհետ՝ օրենք](#)) 7-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությունը հանել:

**Հոդված 2.** [Օրենքի 56-րդ հոդվածը լրացնել նոր նախադասությամբ.](#)

[«Կենտրոնական բանկը կազմակերպություններին չի տրամադրում դրամաշնորհ և նվիրաբերություն:»:](#)

**Հոդված 2. Հոդված 3.** [Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:](#)

|

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.  
— «2.1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև Կառավարության անդամ նշանակված քաղաքացուն՝ Կառավարության անդամի լիազորությունների ողջ ժամկետով:»:

**Հոդված 2.** Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) — 2-րդ մասի 3-րդ կետի «ա» ենթակետում «22-րդ հոդվածի 2-րդ» բառերը փոխարինել «22-րդ հոդվածի 2-րդ, 2.1-ին» բառերով, իսկ «դ» ենթակետում «22-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «22-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերով» բառերով:

2) — 3-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետում «22-րդ հոդվածի 2-րդ» բառերը փոխարինել «22-րդ հոդվածի 2-րդ, 2.1-ին» բառերով:

3) — 7-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետում «22-րդ հոդվածի 2-րդ» բառերը փոխարինել «22-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի «գ» ենթակետից հանել «կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորրոտի Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

##### **Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ սույն օրենքը կարգավորում սահմանում է պետական կառավարման համակարգի մարմինների շրջանակը և կազմավորման կարգը:

##### **Հոդված 2. Պետական կառավարման համակարգի մարմինները**

1. Սահմանադրության 159-րդ հոդվածին համապատասխան՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները:

~~Պետական կառավարման համակարգի մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:~~

2. Արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման համակարգի մարմինների փոխգործակցության կարգը կարող է սահմանվել Կառավարության որոշմամբ:

##### **Հոդված 3. Նախարարությունը**

1. Նախարարությունը մշակում և իրականացնում է իրեն վերապահված գործունեության ոլորտում Կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունների ցանկը սահմանվում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

##### **Հոդված 4. Կառավարությանը ենթակա մարմինը**



1. Կառավարությանը ենթակա մարմինն ապահովում է Կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում Կառավարության քաղաքականության մշակմանը:

2. Կառավարությանը ենթակա մարմիններն են՝

- 1) Պետական եկամուտների կոմիտեն.
- 2) Քաղաքաշինության կոմիտեն.
- 3) Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն.
- 4) Վիճակագրական կոմիտեն.
- 5) Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն.
- 6) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը.
- 7) ~~Հրդեհային-Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային և տեխնիկական~~ անվտանգության տեսչական մարմինը.
- 8) Բնապահպանական և ընդերքի տեսչական մարմինը.
- 9) Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը.
- 10) Կրթության տեսչական մարմինը.
- 11) Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը:

#### **Հոդված 5. Վարչապետին ենթակա մարմինները**

1. Վարչապետին ենթակա մարմինները գործում են ազգային անվտանգության, ոստիկանության, պետական պահպանության և պետական վերահսկողության ոլորտներում:

2. Վարչապետին ենթակա մարմիններն են՝

- 1) Ազգային անվտանգության ծառայությունը.
- 2) Ոստիկանությունը.
- 3) Պետական պահպանության ծառայությունը.
- 4) Պետական վերահսկողական ծառայությունը:

#### **Հոդված 6. Նախարարությանը ենթակա մարմինը**

1. Նախարարությանը ենթակա մարմինը գործում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում և ապահովում է նախարարության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտի առանձին ուղղությունների իրականացումը:

2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝

- 1) Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը.
- 2) Քրեակատարողական ծառայությունը.
- 3) Պրոբացիայի ծառայությունը.
- 4) Փրկարար ծառայությունը.
- 5) Սոցիալական ապահովության ծառայությունը.
- 6) Պետական արարողակարգի ծառայությունը.
- 7) Միգրացիոն ծառայությունը.
- 8) Ջրային կոմիտեն.
- 9) Գիտության կոմիտեն.
- 10) Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն.
- 11) Զբոսաշրջության կոմիտեն.

12) Զինված ուժերի գԳլխավոր շտաբը.

12)13) Ռազմարդյունաբերության կոմիտեն.

13)14) Պետական գույքի կառավարման կոմիտեն.

14)15) Բարձրագույն որակավորման հանձնաժողովը կոմիտեն.

15)16) Անտառային կոմիտեն.

16)17) Լեզվի կոմիտեն:

3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:

## **Հոդված 7. Պետական կառավարման համակարգի մարմնի կազմավորման կարգը և կանոնադրությունը**

1. Պետական կառավարման համակարգի մարմինն ստեղծվում, վերակազմակերպվում և դրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

2. Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարին վարչապետի

առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը՝ բացառությամբ տեսչական մարմինների:

3. Տեսչական մարմնի ղեկավարին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

4. Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի տեղակալին ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Վարչապետին ենթակա մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

6. Վարչապետին ենթակա մարմնի ղեկավարի տեղակալին ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

7. Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

8. Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի տեղակալին ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

9. Նախարարության, ինչպես նաև նախարարությանը ենթակա մարմնի աշխատողների թվաքանակը, համապատասխան նախարարի առաջարկությամբ, սահմանում է վարչապետը: Կառավարությանը և վարչապետին ենթակա ~~Գեոտեխնիկական կառավարման համակարգի~~ մարմինների աշխատողների թվաքանակը սահմանում է վարչապետը:

10. Նախարարության կանոնադրությունը հաստատում է վարչապետը՝ համապատասխան նախարարի առաջարկությամբ, ~~եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:~~

11. Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմնի կանոնադրությունը հաստատում է վարչապետը:

12. Նախարարությանը ենթակա մարմնի կանոնադրությունը հաստատում համապատասխան նախարարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

13. Նախարարության հաստիքացուցակը հաստատում է համապատասխան նախարարը:

14. Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմնի հաստիքացուցակը հաստատում է տվյալ մարմնի ղեկավարը:

15. Նախարարությանը ենթակա մարմնի հաստիքացուցակը տվյալ մարմնի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համապատասխան նախարարը:

16. Պետական կառավարման համակարգի մարմնի կանոնադրությունը, ի թիվս այլնի, ներառում է պետական կառավարման համակարգի մարմնի՝

1) անվանումը և գտնվելու վայրը.

2) [գործունեության նպատակները, խնդիրներն ու գործառույթները.](#)

3) կառավարման և ղեկավարման կազմակերպումը.

~~3) գործունեության կարգը.~~

4) կառուցվածքը:

176. Պետական կառավարման համակարգի մարմնի կանոնադրության օրինակելի ձևը սահմանում է Կառավարությունը:

### **Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

~~2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 1-ից:~~

3.2. Նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնումից հետո կազմավորված Կառավարությունը մեկամսյա ժամկետում սահմանում է պետական կառավարման համակարգի մարմնի կանոնադրության օրինակելի ձևը:

4.3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝

1) Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն գործում է որպես Պետական եկամուտների կոմիտե.

2) Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն գործում է որպես Քաղաքաշինության կոմիտե.

3) Կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն գործում է որպես Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե.

4) Ազգային վիճակագրական ծառայությունը գործում է որպես Վիճակագրական կոմիտե.

5) Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն գործում է որպես Անշարժ գույքի կադաստրի կոմիտե.

5)6) Կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայությունը գործում է որպես Ազգային անվտանգության ծառայություն.

6)7) Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը գործում է որպես Ոստիկանություն.

7)8) Պետական պահպանության ծառայությունը գործում է որպես Պետական պահպանության ծառայություն.

8)9) արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը գործում է որպես Հարկադիր կատարման ծառայություն.

9)10) արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը գործում է որպես Քրեակատարողական ծառայություն.

10)11) արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը գործում է որպես Պրոբացիայի ծառայություն.

11)12) գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը գործում է որպես Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին.

12)13) արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայությունը գործում է որպես Փրկարար ծառայություն.

13)14) աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը գործում է որպես Սոցիալական ապահովության ծառայություն.

14)15) արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալությունը գործում է որպես Պետական արարողակարգի ծառայություն.

15)16) տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը գործում է որպես Միգրացիոն ծառայություն.

16)17) էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն գործում է որպես Ջրային կոմիտե.

17)18) բնապահպանության նախարարության անտառային պետական կոմիտեն գործում է որպես Անտառային կոմիտե.

18)19) կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն գործում է որպես Գիտության կոմիտե.

19)20) կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը գործում է որպես Քաղաքացիական ավիացիայի կոմիտե.

20)21) տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն գործում է որպես Զբոսաշրջության կոմիտե.

22) պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող Զինված ուժերի գլխավոր շտաբը գործում է որպես Զինված ուժերի գլխավոր շտաբ ~~կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն գործում է որպես Անշարժ գույքի կադաստրի կոմիտե.~~

21)23) Ռազմարդյունաբերության պետական կոմիտեն գործում է որպես Ռազմարդյունաբերության կոմիտե.

22)24) Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գործում է որպես Պետական գույքի կառավարման կոմիտե.

23)25) կրթության և գիտության նախարարության «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալությունը գործում է որպես Բարձրագույն որակավորման կոմիտե ~~հանձնաժողով:~~

5.4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում հաստատվում են սույն օրենքի 4-6-րդ հոդվածներում թվարկված պետական կառավարման համակարգի համապատասխան մարմինների կանոնադրությունները և սահմանվում աշխատողների թվաքանակը: Մինչ այդ շարունակում են գործել սույն հոդվածի 4-րդ մասում նախատեսված մարմինների կանոնադրությունը և

աշխատողների թվաքանակը սահմանող իրավական ակտերը՝ այնքանով, որքանով չեն հակասում օրենքին:

6.5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն հոդվածի 4-րդ մասում նախատեսված մարմինների կամ նրանց ղեկավարների կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պահպանում են իրենց ուժը մինչև համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը:

7.6. Սույն հոդվածի 4-րդ մասում նախատեսված մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում են պաշտոնավարել:

8.7. Պետական վերահսկողական ծառայության ղեկավարը և նրա տեղակալը նշանակվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

~~9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում ձևավորվում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհուրդ: Մինչև կառավարման խորհրդի ձևավորումը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարումն իրականացնում են գյուղատնտեսության, առողջապահության, ֆինանսների ու տնտեսական զարգացման և ներդրումների նախարարները:~~

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի [հարկային](#) օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) **հարկային մարմին՝** ~~Կառավարությանը ենթակա~~ Պետական եկամուտների կոմիտե.»:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում, 2-րդ բաժնի վերնագրում, 79-րդ հոդվածի 4-րդ մասում, 219-րդ հոդվածի 3-րդ մասում, 235-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 250-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 285-րդ հոդվածի 1-ին մասում, 320-րդ հոդվածի 1-ին մասում, 377-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետում, 407-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում, 409-րդ հոդվածի 4-րդ մասում, «հարկային մարմիններ» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «հարկային մարմին» բառերով և դրանց հոլովածներով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ մասի [3-րդ նախադասությունում](#) ~~և~~ «իրականացնում են» բառը փոխարինել «իրականացնում է» բառով:

**Հոդված 4.** Օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում և 250-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «իրենց գործառույթների իրականացման ընթացքում կարող են» բառերը փոխարինել «իր գործառույթների իրականացման ընթացքում կարող է» բառերով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 407-րդ հոդվածի 6-րդ մասում և 409-րդ հոդվածի 4-րդ մասում «որոշում են» բառը փոխարինել «որոշում է» բառով:



**Հոդված 6.** Օրենսգրքի 432-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն» բառերը փոխարինել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն» բառերով:

**Հոդված 7.** Օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող՝ հարկային մարմնում մշտապես գործող մարմին է, որը» բառերը:

**Հոդված 8.** Օրենսգրքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» և «Հայաստանի Հանրապետության վարչապետ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «Կառավարություն» և «վարչապետ» բառերով և դրանց հոլովաձևերով:

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

|

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝ 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**հարկային ծառայության գործառույթներ՝** հարկային մարմնի՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների, Կառավարության կողմից հաստատվող գործառույթային պարտականությունները».

2) 11-րդ պարբերությունից հանել «վերադաս» բառը:

**Հոդված 2.** Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 8. Հարկային մարմինը**».

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հարկային մարմինը ~~Կառավարությանը ենթակա~~ Պետական եկամուտների կոմիտեն է (այսուհետ՝ հարկային մարմին): Հարկային տեսչությունները հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներն են:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Հարկային մարմնի ~~ի~~ անմիջական ղեկավարումն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեի նախագահը:».

4) 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքում «վերադաս հարկային մարմին» և «հարկային մարմիններ» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «հարկային մարմին» բառերով և դրանց հոլովածներով:

**Հոդված 4.** Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդված.

**«Հոդված 8.1. Քննչական մարմինը**

1. Քննչական մարմինը հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Քննչական մարմինը կազմակերպում և իրականացնում է նախաքննություն հարկային մարմնի քննչական ենթակայությանը վերապահված հանցագործություններով:

3. Քննչական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է հարկային մարմնի ղեկավարը՝ վարչապետի համաձայնությամբ:»:

**Հոդված 5.** Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) վերնագրում ~~և 1-ին մասում~~ «գործառույթները» բառը փոխարինել «լիազորությունները» բառով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հարկային մարմինը՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան իրականացնում է հարկային վարչարարություն՝

ա. հարկ վճարողների հաշվառում.;

բ. հարկ վճարողների սպասարկում.;

գ. հարկ վճարողների հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառում.;

դ. հարկային հսկողության իրականացում և հարկային հսկողության հարակից ընթացակարգերի կիրառում.;

ե. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացում, հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացում՝ օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները

կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառում.:

գ. հարկային պարտավորությունների կատարման ապահովում, հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում.:

է. հարկային վեճերի լուծում, հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում.:

ը. հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացում.:

թ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում.:

ժ. միջազգային պայմանագրերի շրջանակներում հարկային վարչարարության իրականացում.

2) իրականացնում է բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, ապահովում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները.

3) իրականացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց առնչվող համակարգերի կառավարումը (մշակում, ներդնում և սպասարկում).

4) կազմակերպում է հարկային ծառայողների ուսուցումը, վերապատրաստումը և ատեստավորումը.

5) միջազգային պայմանագրերի շրջանակներում օտարերկրյա իրավասու մարմինների հետ հարկման նպատակով փոխանակում է տեղեկատվություն (ըստ՝ դիմում-պահանջի, ինքնաբերական և ավտոմատ եղանակով).

6) իրականացնում է նախաքննություն հարկային մարմնի ենթակայությանը վերապահված հանցագործությունների վերաբերյալ վարույթով.

7) վերահսկողություն է իրականացնում ~~է վերահսկողություն~~ պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ.».:

».

8) իրականացնում է հարկային հարաբերությունները կարգավորող, ինչպես նաև հարկային մարմնին լիազորություններ վերապահող այլ օրենքներով սահմանված լիազորություններ:»:

1-ին մասի 1-ին կետում՝

ա. «ե.» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե. — Վարչական — իրավախախտումների — վերաբերյալ — Հայաստանի Հանրապետության — օրենսգրքին — համապատասխան՝ — վարչական իրավախախտումների — վերաբերյալ — իրեն — վերապահված — գործերով — վարույթի իրականացումը, — հարկային — իրավախախտումների — բացահայտման — ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացումը՝ օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումը,»:

բ. «գ.» ենթակետում «ապահովումը,» բառից հետո լրացնել « հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպումը,» բառերը.

գ. «է.» ենթակետում «լուծումը» բառից հետո լրացնել «, հարկ վճարողների բողոքների քննարկումը և որոշումների ընդունումը» բառերը.

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը.», «թ.» և «ժ» ենթակետերով՝

«ը. հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը.

թ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների — մոտ — օրենքով — սահմանված — կարգով — ստուգումների — և ուսումնասիրությունների իրականացումը.

ժ. միջազգային պայմանագրերի շրջանակներում հարկային վարչարարության իրականացումը.»:

2) 1-ին մասի 2-րդ կետում «հարկային» բառից առաջ լրացնել «բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, » բառերը.

~~3) 1-ին մասի 3-րդ կետում «իրավական ակտերով» բառերը փոխարինել «օրենքներով» բառով, իսկ «գործառույթների» բառը փոխարինել «լիազորությունների» բառով:~~

~~4) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-10-րդ կետերով՝~~

~~«4) տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց առնչվող համակարգերի կառավարումը՝ մշակում, ներդնում և սպասարկում,~~

~~5) հարկային ծառայողների ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը, ատեստավորումը,~~

~~6) միջազգային պայմանագրերի շրջանակներում օտարերկրյա իրավասու մարմինների հետ հարկման նպատակով տեղեկատվության փոխանակումը (ըստ՝ դիմում պահանջի, ինքնաբերական և ավտոմատ եղանակով):~~

~~7) հարկային մարմնի ենթակայությանը վերապահված հանցագործությունների վերաբերյալ վարույթով նախաքննության իրականացումը:~~

~~8) իր լիազորությունների իրականացման նպատակով ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունումը:~~

~~9) պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը:~~

~~10) օրենքներով սահմանված այլ լիազորություններ:»:~~

~~63) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:~~

### **Հոդված 6.** Օրենքի 11.1-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «(վերադաս հարկային մարմնի)» բառերը.

2) 1-ին կետն ը ուժը կորցրած ճանաչել արտադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«1) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իր ակադակական ակտեր:»:~~

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1 կետ՝

«8.1) լսում և Կառավարություն ~~ի հաստատման~~ է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում

կոմիտեի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.».

4) 4-րդ կետից հանել «, հարկային տեսչությունների պետերի», իսկ 5-րդ և 6-րդ կետերից՝ «և հարկային տեսչությունների» բառերը:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ ~~և 17-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ~~.

«16) ստեղծում է խորհրդակցական մարմիններ:

17) ~~իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:~~»:

**Հոդված 7.** Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ ~~մասը մասն շարադրել հետևյալ բնթագրությամբ~~ուժը կորցրած ճանաչել.

~~«4. Հարկային մարմնի ղեկավարին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը: Հարկային մարմնի ղեկավարի տեղակալին հարկային մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը:»:~~

**Հոդված 8.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության Նախագահ», «Հայաստանի Հանրապետության կառավարություն» և «Հայաստանի Հանրապետության վարչապետ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «Հանրապետության նախագահ», «Կառավարություն» և «վարչապետ» բառերով և դրանց հոլովաձևերով, իսկ «դասային կոչում» բառերը և դրանց հոլովաձևերը «դասային աստիճան» բառերով և դրանց հոլովաձևերով:

**Հոդված 9.** Օրենքի 20-րդ հոդվածի 9.2-րդ, 10-րդ և 12-րդ մասերի 1-ին կետերում «դասային» բառից հետո լրացնել «աստիճան» բառը:

Հոդված 10. Օրենքի 21.1-րդ հոդվածի վերնագրում «ծառայության» բառից հետո լրացնել «հատուկ» բառը, «կոչումների» բառից հետո լրացնել «և դասային



աստիճանների» բառերը, իսկ 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «կոչումներն» բառը փոխարինել «հատուկ կոչումներն ու դասային աստիճաններն» բառերով,

**Հոդված 11.** Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում «կոչումների» բառերը փոխարինել «դասային աստիճանների» բառերով,

**Հոդված 12.** Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը փոխարինել «վարչապետը» բառով.

2) 3-րդ մասում «հատուկ» բառից հետո լրացնել «կոչում» բառը, «կոչումները» բառից հետո լրացնել «, աստիճանները» բառը:

**Հոդված 13.** Օրենքի 23.1-րդ հոդվածի վերնագիրը լրացնել «և աստիճանները» բառերով, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, և 7-րդ մասերում «կոչումների» բառից հետո լրացնել «և աստիճանների» բառերը, «սահմանը» բառից հետո լրացնել «,համապատասխանաբար,» բառը, «կոչումն» բառից հետո լրացնել «ու աստիճանն» բառերը, իսկ 8-րդ մասում «կոչումների» բառից հետո լրացնել «և աստիճանների» բառերը, «կոչումն» բառից հետո լրացնել «ու աստիճանն» բառերը:

**Հոդված 14.** Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի՝ 6-րդ կետում «հատուկ» բառից հետո լրացնել «կոչման» բառը, իսկ 8-րդ կետը և 8-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 15.** Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերում, 5-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերում «դասային» բառից հետո լրացնել «աստիճանը» բառը, իսկ 3-րդ մասում «զրկվում է հատուկ» բառերը փոխարինել «զրկվում է հատուկ կոչումից» բառերով:

**Հոդված 1016.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-402-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 3. Մաքսային ծառայության հասկացությունը**

1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունը մաքսային մարմինների միասնական կենտրոնացված համակարգն է:

2. Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) քննչական մարմինը իրականացնում է նախաքննություն նաև մաքսային ծառայության քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների վերաբերյալ վարույթով:»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության ~~անունը անմիջական~~ ղեկավարումն իրականացնում է ~~Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտեի)~~ նախագահը:»:

**Հոդված 3.** Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ» բառերը փոխարինել «վարչապետը» բառերով:

**Հոդված 54.** Օրենքի 37-րդ հոդվածից հանել «վերադաս մաքսային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող՝ մաքսային մարմնում մշտապես գործող մարմին է, որը» բառերը:

**Հոդված 65-4.** Օրենքում «վերադաս մաքսային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովածներով:

**Հոդված 76.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության Նախագահ», «Հայաստանի Հանրապետության կառավարություն» և «Հայաստանի Հանրապետության վարչապետ» բառերը և դրանց հոլովածները փոխարինել համապատասխանաբար «Հանրապետության նախագահ», «Կառավարություն» և «վարչապետ» բառերով և դրանց հոլովածներով:

**Հոդված 87.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-241-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական եկամուտների կոմիտեն աջակցում է մաքսային քաղաքականության մշակմանը և իրականացնում է վարչարարություն՝ Հայաստանի Հանրապետությանը վերապահված իրավասությունների շրջանակներում:»:

**Հոդված 2.** Օրենքում «վերադաս մաքսային մարմին» և «Հայաստանի Հանրապետության վերադաս մաքսային մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններն են՝

1) կոմիտեն.

2) կոմիտեի մաքսատները, այդ թվում՝ տարածաշրջանային և մասնագիտացված.

3) կոմիտեի մաքսային կետերը, այդ թվում՝ սահմանային և մասնագիտացված.».

2) 3-րդ մասի 1-ին նախադասությունը հանել:»:

**Հոդված 4.** Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 9. Մաքսային մարմինների լիազորությունները**

1. Մաքսային մարմինները՝ ն ունեն հետևյալ լիազորությունները՝

1) Ապահովապահովում են մաքսային հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացումը.

2) ժանդակել-օժանդակում են Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի, արտաքին տնտեսական կապերի զարգացմանը.

3) վարելում են արտաքին առևտրի մաքսային վիճակագրություն, փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրություն և հատուկ մաքսային վիճակագրություն.

4) ապահովելում և վերահսկելում են մաքսատուրքի, հարկերի, հակազնագցման, հատուկ և փոխհատուցման տուրքերի, մաքսավճարների հաշվարկման ճշտությունը և ժամանակին վճարումը, միջոցներ են ձեռնարկելում չվճարված մաքսային վճարների վճարումը օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու համար.

5) ապահովում են Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովել ապրանքներն ու տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային սահմանով տեղափոխելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանումը.

6) ապահովում են ապահովել Միության և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ արգելքների ու սահմանափակումների պահպանումը.

7) ապահովում են ապահովել մաքսային մարմինների կողմից անձանց մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանն օժանդակությունը.

8) բացահայտում են, կանխարգելում են և կասեցնում են այն հանցագործություններն ու վարչական իրավախախտումները, որոնց նկատմամբ հսկողությունը օրենքով վերապահված է մաքսային մարմինների իրավասությանը, իրականացնում են են օպերատիվ-հետախուզական գործունեություն, կատարել կատարում են անհետաձգելի քննչական գործողություններ, մաքսային գործի բնագավառում վարչական իրավախախտումների (մաքսային կանոնների խախտումների) գործերով իրականացնել-իրականացնում են վարչական վարույթ, աջակցություն են ցուցաբերել-ցուցաբերում կոռուպցիայի և միջազգային

ահաբեկչության դեմ պայքարի հարցում, ~~հակազդել~~ հակազդում են Միության մաքսային սահմանով և (կամ) Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող մտավոր սեփականության օբյեկտների, թմրանյութերի, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, զենքի ու զինամթերքի, մշակութային արժեքների և այլ առարկաների անօրինական շրջանառությանը.

9) ~~աջակցել~~ աջակցում են պետական անվտանգության ապահովման, հասարակական կարգի պահպանության, մարդու, կենդանիների ու բույսերի կյանքի ու առողջության պահպանման, շրջակա միջավայրի պաշտպանության, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների սպառողների շահերի պաշտպանության համար ձեռնարկվող միջոցների իրականացմանը.

10) հսկողություն են ~~իրականացնել~~ իրականացնում Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման հետ կապված արժույթային գործարքների նկատմամբ՝ Միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության արժույթային օրենսդրությանը և դրանց համապատասխան՝ արժույթային կարգավորման հարցերով մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան.

11) մաքսային կարգավորման միջոցների օգնությամբ ~~ստեղծել~~ ստեղծում են ~~ստեղծել~~ ստեղծում են հայրենական ապրանք արտադրողների շահերը, ~~ստեղծել~~ ստեղծում են մաքսային մարմինների ռեսուրսների օպտիմալ օգտագործումը.

12) ~~ստեղծել~~ ստեղծում են Միության մաքսային սահմանով Միության անդամ պետությունների արժույթի, արժեթղթերի և (կամ) արժույթային արժեքների, ճանապարհային չեկերի տեղափոխման նկատմամբ հսկողության իրականացման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) և ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդեցության միջոցներ՝ Միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան.

13) ~~ստեղծել~~ ստեղծում են մաքսային իրավահարաբերությունների բնագավառում անձանց իրավունքներն ու պարտականությունները, ~~օժանդակել~~ օժանդակում են արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին

ապրանքների և միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսային ձևակերպումների իրականացման գործում.

14) ~~ապահովել~~ ապահովում են Հայաստանի Հանրապետության՝ մաքսային գործին առնչվող միջազգային պարտավորությունների կատարումը, ~~համագործակցել~~ համագործակցում են օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների, մաքսային գործի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ.

15) պետական մարմիններին, կազմակերպություններին ու անձանց ~~տրամադրել~~ տեղեկություններ են տրամադրում մաքսային գործին առնչվող հարցերի վերաբերյալ.

16) ~~իրականացնել~~ իրականացնում են հետբացթողումային և կրկնակի մաքսային հսկողություն.

17) ~~ապահովել~~ ապահովում են մաքսային հարցերին առնչվող միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը և իրավունքների իրացումը, օտարերկրյա պետությունների մաքսային ու այլ իրավասու մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումների ու քննարկումների կազմակերպումը, համատեղ համաձայնագրերի, պայմանագրերի, հուշագրերի և այլ նախագծերի պատրաստումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում մաքսային վարչարարությունը.

18) իրենց իրավասության սահմաններում համապատասխան միջոցառումներ են ~~իրականացնել~~ իրականացնում Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման նպատակով.

19) օրենքով սահմանված կարգով ~~իրականացնել~~ իրականացնում են մաքսային գործի հետ կապված՝ լիցենզավորման ենթակա գործունեությունների լիցենզավորումը և լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների ու դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

20) ~~իրականացնել~~ իրականացնում են մաքսային վարչարարության և մաքսային ընթացակարգերի մեթոդական ղեկավարումը.

21) ձեռնարկում են միջոցներ մաքսային մարմիններին վերապահված՝ Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային օրենսդրությամբ և այլ

իրավական ակտերով նախատեսված դրույթների՝ անձանց կողմից պահպանումը ապահովելու նպատակով ~~ծեռնարկելու միջոցներ~~.

22) Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում ~~պահանջել~~ պահանջում են փաստաթղթեր, տեղեկություններ.

23) ~~ստուգել~~ ստուգում են մաքսային ձևակերպումներին մասնակցող անձանց անձը հաստատող փաստաթղթերը.

24) անձանցից ~~պահանջել~~ պահանջում են մաքսային գործի բնագավառում օրենքով սահմանված գործողությունների իրականացման լիազորությունները հաստատող փաստաթղթեր.

25) ~~իրականացնել~~ իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող, մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ժամանակավոր պահպանության, բեռնման կամ այլ գործողությունների տեսագրում և ձայնագրում, կինոնկարահանում և լուսանկարահանում.

26) պետական մարմիններից, կազմակերպություններից և անձանցից ~~ստանալ~~ ստանում են իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ՝ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

27) օրենքով սահմանված դեպքերում և կարգով համապատասխան պետական մարմիններին ~~ներկայացնել~~ ներկայացնում են հայտեր՝

ա. մաքսատուրքի, հարկերի, մաքսավճարների, տոկոսների և տույժերի բռնագանձման վերաբերյալ,

բ. մաքսատուրքի, հարկերի, մաքսավճարների, տոկոսների և տույժերի վճարման նպատակով գույքի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ,

գ. ապրանքները տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ,

դ. Միության մաքսային օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և այլ օրենսդրական ակտերով նախատեսված այլ դեպքերում.

28) ~~կանգնեցնել~~ կանգնեցնում են մաքսային հսկողության ենթակա տրանսպորտային միջոցը և ~~իրականացնելու~~ իրականացնում ապրանքների և



տրանսպորտային միջոցի գնում, եթե կասկածներ են առկա, որ այդ տրանսպորտային միջոցով կարող են իրականացվել ապրանքների ապօրինի փոխադրումներ.

29) իրենց իրավասության սահմաններում հսկողություն են իրականացնել իրականացնում անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերի, մաքսատուրքի, պետական տուրքի, այլ պարտադիր վճարների հաշվարկման, գանձման և ժամանակին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման նկատմամբ:-

~~իրականացնել սույն օրենքով և այլ օրենքներով մաքսային մարմինների համար նախատեսված այլ լիազորություններ:~~

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 6.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կառավարություն» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ

ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, հնտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 10-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսերի նախարարություն.».

2) լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

«վերահսկող մարմին՝ Պետական եկամուտների կոմիտե:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 13-րդ հոդվածի 1-ին մասում, 2-րդ մասի թ) կետում և 4-րդ մասում «լիազոր մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «վերահսկող մարմին» բառերով և դրանց հոլովածներով:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Սույն օրենքի խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները

1. Սույն օրենքի խախտման դեպքում վերահսկող մարմինը կազմակերպչի նկատմամբ կիրառում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական.

բ) տուգանք:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «է» և 2.1-ին մասի «գ1» կետերի պահանջների խախտման դեպքում պատասխանատվության միջոցը կիրառվում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «բ2» և 2.1-ին մասի «ա1» և «բ4» կետերի պահանջների խախտման դեպքում պատասխանատվության միջոցը կիրառվում է «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

4. Վերահսկող մարմինը լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման հիմքի հայտնաբերման դեպքում գրավոր դիմում է լիազոր մարմնին՝ այդ գործընթացը իրականացնելու համար, ներկայացնելով տվյալ վարույթն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:»:

5. Սույն օրենքի խախտման դեպքում լիազոր մարմինը կազմակերպչի նկատմամբ կիրառում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) լիցենզիայի գործողության կասեցում.

բ) լիցենզիայի գործողության դադարեցում:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի հունվարի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 14-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսերի նախարարություն:

2) լրացնել 14.1) մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«վերահսկող մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի վերնագրում, 3.1-րդ, 3.2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերում, 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 11-րդ հոդվածի «գ» կետում, 13-րդ հոդվածի 1-ին մասում, 14-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերում «լիազոր մարմին» բառերը փոխարինել «վերահսկող մարմին» բառերով՝ համապատասխան հոյովածներով:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի խախտումների դեպքերում վերահսկող մարմինը կազմակերպի նկատմամբ կիրառում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու մասին հանձնարարական.

բ) տուգանք:

Վերահսկող մարմինը լիցենզիայի գործողության կասեցման կամ դադարեցման հիմքի հայտնաբերման դեպքում գրավոր դիմում է լիազոր մարմնին՝ այդ գործընթացը

իրականացնելու համար, ներկայացնելով տվյալ վարույթն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:»:

2. Սույն օրենքի խախտումների դեպքերում լիազոր մարմինը կազմակերպչի նկատմամբ կիրառում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) լիցենզիայի գործողության կասեցում.

բ) լիցենզիայի գործողության դադարեցում:»:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորրևտի Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի թիվ ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) մշակում է քաղաքաշինության բնագավառում պետական քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության տարածքների և բնակավայրերի կայուն զարգացման ռազմավարությունը.»:

**Հոդված 2.** Օրենքի 10.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 10.1. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը**

1. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը ~~Կառավարությանը ենթակա~~ Քաղաքաշինության կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե):

2. Կոմիտեի ~~ի~~ անմիջական ղեկավարումն իրականացնում է կոմիտեի նախագահը: ~~որին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը:~~

3. ~~Կոմիտեի նախագահն ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը:~~

4.3. Կոմիտեն՝

1) իրականացնում է քաղաքաշինության բնագավառում Կառավարության քաղաքականությունը.

2) մշակում և Կառավարության վարչապետին քննարկմանն է ներկայացնում պետական ծրագրերի նախագծեր, որոնց հաստատումից հետո իր լիազորությունների շրջանակներում վերահսկում է դրանց իրականացումը.

3) մշակում և ~~Կառավարության վարչապետին քննարկմանն~~ է ներկայացնում քաղաքաշինության բնագավառի զարգացումն ապահովող և գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.

4) մշակում է հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման, պատմամշակութային ու բնության հատուկ պահպանվող տարածքներ ներառող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր.

5) օրենքով սահմանված կարգով կազմակերպում և համակարգում է նորմատիվ փաստաթղթերի (բացի ազգային ստանդարտներից) մշակման աշխատանքները, ~~ինչպես նաև ընդունում, հաստատում և հաշվառում այդ փաստաթղթերը.~~

6) ապահովում է սույն օրենքի 17-րդ հոդվածի չորրորդ մասի «ա»-«բ» կետերով սահմանված քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակումը և այդ նախագծերի հաստատումից հետո՝ դրանց իրականացման մոնիթորինգը.

7) սույն օրենքի 14.3-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 8.1-ին մասերով սահմանված պահանջների ապահովմամբ համակարգում է միկրոռեգիոնալ և տեղական մակարդակների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքները և այդ փաստաթղթերի հաստատումից հետո ապահովում դրանց իրագործման վերահսկողությունը, մշակում է տարածքների և բնակավայրերի կայուն քաղաքաշինական զարգացման ռազմավարությունը.

8) եզրակացություն է տալիս տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի շրջանակներում քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ.

9) մշակում և ~~Կառավարության վարչապետի~~ քննարկմանն է ներկայացնում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների

առանձնացման, գործունեության կարգի վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծեր..

10) մշակում է քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, ինչպես նաև տարբեր գործառական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչներ.

11) մշակում է քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցմանը նպաստակաուղղված, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացման տարածական զարգացման ծրագրեր.

12) մշակում և ~~Կառավարության վարչապետին քննարկմանն~~ է ներկայացնում առաջարկություններ՝ շենքերի (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի), շինությունների պահպանման և անվտանգ շահագործման, ինչպես նաև դրանց արդիականացման (այդ թվում՝ էներգախնայողության ու էներգաարդյունավետության բարձրացման) վերաբերյալ.

13) մշակում է բնակավայրերի պատմաճարտարապետական միջավայրի քաղաքաշինական վերականգնման ու զարգացման, ճարտարապետության բնագավառի զարգացման, քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների զարգացման, շինարարության բնագավառի զարգացման ծրագրեր և իրականացնում է դրանց մոնիթորինգ.

14) աջակցում է պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում քաղաքաշինական, ճարտարապետական և լանդշաֆտային համալիրների կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացմանը..

15) սահմանում է բնակավայրերի հողերի օգտագործման, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսված այլ հողերի քաղաքաշինական սահմանափակումներ և նորմեր.

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումն ու կադաստրային ամփոփումը.

17) ~~օրենքով սահմանված կարգով~~ իրականացնում է քաղաքաշինական գործունեության լիցենզավորումը.



18) ~~օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում~~ իրականացնում է Հայաստանի Հանրապետության հողային պաշարների պետական կառավարումը.

19) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի մշակումը, տեխնիկական քաղաքականության վարումը և այդ աշխատանքների համակարգումը.

20) կազմակերպում և համակարգում է շենքերի անձնագրավորման, սեյսմակայունության ուղղությամբ իրականացվող հետազննական, ինչպես նաև գիտահետազոտական և փորձարարական ստրուկտորական աշխատանքները.

21) կազմակերպում և իրականացնում է բարձր և բարձրագույն ոհակայնության աստիճան (կատեգորիա) ունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանված սահմանային հարկայնությունը գերազանցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննությունը.

22) ապահովում է վտանգավոր երկրաբանական երևույթներից քաղաքաշինական օբյեկտների պաշտպանության ծրագրերի մշակումը և դրանց մոնիթորինգի իրականացումը.

23) կազմակերպում է քաղաքաշինական օբյեկտների լավագույն ճարտարապետական լուծումների ընտրության նպատակով անցկացվող մրցույթներ և աջակցում է դրանց իրականացմանը.

24) քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային նախապատրաստության բնագավառում մշակում է պլաններ ու ծրագրեր, իրականացնում է հիմնական միջոցառումների, ինչպես նաև կազմակերպում է համակարգի աշխատողների պաշտպանությունն և զորահավաքային ռեսուրսների հաշվառումը.

25) համակարգում է կոմիտեի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքային գործունեությունը.

~~26) —~~ հաստատում է շենքերի և շինությունների բազմակի օգտագործման օրինակելի ու փորձարարական նախագծերը և դրանք առաջադրում կիրարկման:

27)26) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

**Հոդված 2.** Օրենքում «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին» և «քաղաքաշինության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 3.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կառավարություն» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 1-ի ՀՕ-285 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածից հանել «տեսչական» բառը:

**Հոդված 2.** 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 16. Կարգավորող մարմինը**

1. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորումն իրականացնում է ~~Կառավարությունը ենթակա~~ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե):

2. Կոմիտեի ~~և անմիջական~~ ղեկավարումն ~~իրականացնում է կոմիտեի նախագահը, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը:~~

~~3. Կոմիտեի նախագահին ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը:»:~~

**Հոդված 3.** Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**« Հոդված 17. Կարգավորող մարմնի լիազորությունները**

1. Սույն օրենքի 15-րդ հոդվածում նշված կարգավորումն իրականացնելու համար կարգավորող մարմինը՝

1) մշակում և ~~Կառավարություն է վարչապետին է~~ ներկայացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի նախագծեր.

2) իրականացնում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում գործունեության, ինչպես նաև անվտանգության ապահովման տեսակետից

կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց լիցենզավորումը, միջուկային և ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի, գեներացնող ճառագայթման աղբյուրների, ռադիոակտիվ թափոնների, հատուկ նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների ներմուծուման և արտահանման լիցենզավորումը.

3) օրենքով և միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում կասեցնում կամ դադարեցնում է լիցենզիայի գործողությունը.

4) կատարում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի աշխատանքների, օբյեկտների և սարքավորումների անվտանգության գնահատում, կազմակերպում և անցկացնում է փորձաքննություն.

5) կազմակերպում և անցկացնում է հետազոտություններ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի անվտանգության բարձրացման նպատակով.

6) իրականացնում է շահագործող կազմակերպության կողմից ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների շահագործման ժամանակ տեղի ունեցած միջուկային և ճառագայթային միջադեպերի քննության գնահատում, իսկ անհրաժեշտության դեպքում Կառավարության սահմանած կարգով իրականացնում է լրացուցիչ քննություն, ստեղծում է խախտումների մասին տվյալների բանկ.

7) վերահսկողություն է իրականացնում լիցենզավորված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության և տրված լիցենզիաների պահանջների կատարման նկատմամբ, իրականացնում է լիցենզավորված անձանց համար անվտանգության ապահովման տեսակետից կարևոր աշխատանքներ իրականացնող և ծառայություններ մատուցող առևտրային կազմակերպությունների որակի ապահովման ծրագրերի ստուգումը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենքների, անվտանգության նորմերի և կանոնների, տրված կարգադրագրերի պահանջների խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ խախտումներին վերաբերող նյութերը ներկայացնում է իրավապահ մարմիններին.

9) վերահսկողություն է իրականացնում միջուկային զենքի չտարածման երաշխիքների պահպանման նկատմամբ.

10) ատոմային էներգիայի օգտագործման բնագավառին վերաբերող ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենսդրության պահանջների և տրված լիցենզիաների պայմանների խախտումների հայտնաբերման դեպքում տալիս է լիցենզավորված անձանց կողմից պարտադիր կատարման համար կարգադրագրեր, իսկ մարդկանց առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգի դեպքում՝ իրականացվող աշխատանքների դադարեցման կարգադրագրեր.

11) տարեկան մեկ անգամ Կառավարություն հաշվետվություն է ներկայացնում ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ.

12) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և լրատվության միջոցներին ուստ անհրաժեշտության տեղեկատվություն է ներկայացնում միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ.

13) իրավունք ունի պետական մարմիններից ու կազմակերպություններից ստանալու անվտանգության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություն.

14) վերահսկում է լիցենզավորված անձանց պատրաստվածությունը հնարավոր վթարային իրավիճակներին.

15) վթարային իրավիճակների դեպքում ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում գնահատում է իրավիճակը և դրա հնարավոր փոփոխությունների կանխատեսումների հիման վրա Կառավարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հարցերով լիազորված պետական կառավարման մարմին առաջարկություններ է ներկայացնում անհրաժեշտ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ.

16) կազմակերպում և համակարգում է «Միջուկային զենքը չտարածելու մասին» պայմանագրի և այդ պայմանագրի հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության այլ պարտավորությունների կատարումը.

17) իրականացնում է միջուկային նյութերի, իոնացնող ճառագայթման աղբյուրների, ռադիոակտիվ թափոնների պետական գրանցումը և պետական ռեգիստրի վարումը.

18) իր իրավասության ~~ունենրի~~ սահմաններում Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունների հարցերով լիազորված պետական կառավարման մարմնի հետ համատեղ վերահսկողություն է իրականացնում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ.

19) համակարգում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ազգային և տարածաշրջանային ծրագրերը.

20) «Միջուկային վթարի մասին օպերատիվ տեղեկացման մասին» կոնվենցիային համապատասխան՝ իրականացնում է միջուկային վթարի մասին միջազգային օպերատիվ ազդարարում և հանդես է գալիս որպես կապի կենտրոնական մարմին՝ վթարի դեպքում տեղեկացման հարցերով.

21) համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ պետությունների կարգավորող մարմինների հետ՝ անվտանգության և տեղեկատվության փոխանակման հարցերով.

22) իրականացնում է շրջակա միջավայրի ճառագայթային մշտադիտարկում (մոնիթորինգ) և վերահսկողություն.

23) իր ~~իրավասությունների~~ ~~իրավասության~~ սահմաններում ~~Հայաստանի Հանրապետության~~ ~~նստիկանության~~ և ~~ազգային անվտանգության~~ ~~հարցերով լիազորված պետական կառավարման ծառայության~~ մարմինների հետ համատեղ իրականացնում է ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների, միջուկային և ռադիոակտիվ նյութերի ֆիզիկական պաշտպանության պետական կարգավորումը:

~~24) իր լիազորությունների շրջանակներում ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:~~

~~25) Կառավարության անունից կնքում է միջազգային պայմանագրեր:~~  
~~իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~

2. Հայկական ատոմային էլեկտրակայանի աշխատանքի անհապաղ դադարեցման ~~իրավունքը~~ լիազորությունը վերապահվում է կոմիտեի նախագահին, նախագահի համապատասխան տեղակալին, ատոմային էլեկտրակայանում կոմիտեի տեսուչին:»:

**Հոդված 4.** Օրենքի 17.1-ին հոդվածի 1-ին մասում՝

- 1) 1-ին մասի «գ», «դ», «ե», «զ», «է», ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.
- 2) «տեսչական ստուգումներ» բառերը փոխարինել «ստուգումներ» բառերով:

**Հոդված 5.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կառավարություն» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 6.** Օրենքի 31.6-րդ հոդվածում «տեսչական ստուգում» և «տեսչական ստուգումներ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «ստուգում» և «ստուգումներ» բառերով և դրանց հոլովաձևերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՔԸ****«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 6-րդ մասում «լիազորված պետական կառավարման հանրապետական մարմինը» բառերը փոխարինել «սույն օրենքում նշված պետական կառավարման մարմինը» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածում «լիազորված պետական մարմինների» բառերը փոխարինել «սույն օրենքում նշված պետական կառավարման մարմնի» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասում և 75-րդ հոդվածի 4-րդ մասում «Նախագահի աշխատակազմին,» բառերից հետո լրացնել «վարչապետի աշխատակազմին,» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմինը» բառերը փոխարինել « Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անշարժ գույքի պետական ռեգիստրը մասնակցում է Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի շուկայի բնագավառում ընդհանուր



քաղաքականության մշակմանը և ապահովում է դրա իրականացումը, իրականացնում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների ճանաչման ու երաշխավորման նպատակով, գույքի նկատմամբ գույքային իրավունքի վերաբերյալ նախնական նշումը, գույքի վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը, տեղեկատվության տրամադրումը և համակարգի գործունեության կառավարումն ու վերահսկումը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2. Անշարժ գույքի պետական ռեգիստրը՝

1) իրականացնում է գույքի (անկախ սեփականության ձևից) նկատմամբ իրավունքների, սահմանափակումների և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պետական գրանցում.

2) կազմում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի հողային հաշվեկշիռը կազմում.

3) ստեղծում է անշարժ գույքի կադաստրային և տեղագրական քարտեզներ, կազմում է թվային կադաստրային և տեղագրական քարտեզներ.

4) իրականացնում է անշարժ գույքի կադաստրային գնահատում, հողի հարկի, գույքահարկի բազայի ստեղծում, մասնակցում է բազմաբնույթ կադաստրների վարման նպատակով անշարժ գույքի՝ հողերի, շենքերի, շինությունների գնահատման մեթոդիկայի մշակմանը.

5) մշակում և ներդնում է անշարժ գույքի ծածկագրման (կոդավորման) համակարգը, պետական գրանցման ծածկագրերը.

6) կազմակերպում ու իրականացում է անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումներ (մոնիտորինգ), հրապարակում է անշարժ գույքի շուկայի վերլուծությունը և տեղեկատվությունը.

7) ստեղծում ու կառավարում է անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների մասին տեղեկատվական բանկը, պահպանում է կադաստրային գործերի և պետական գրանցման փաստաթղթերը .

8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում «Անշարժ գույքի գնահատում» [իդենտիֆիկացման](#) որակավորման ենթակա գործունեության տեսակի հայտատու ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում,

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուների որակավորման անցկացում, որակավորման վկայականների տրամադրում, դրանց գործողության կասեցում կամ դադարեցում.

9) իրականացնում է համակարգում ավտոմատացված կադաստրի ներդնում.

10) ապահովում է անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների մասին տեղեկատվության հավաստիության, ամբողջականության, մատչելիության, արդիականության և հրապարակայնության ապահովում.

11) իր իրավասության սահմաններում մասնակցում է հողային հարաբերությունների կարգավորման, հողային քաղաքականության, հողային ռեսուրսների կառավարման սկզբունքների մշակմանը՝ հողի նկատմամբ իրավունքների, հողի շուկայի ձևավորման մասով.

12) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման համար տրամադրում է տեղեկատվություն անշարժ գույքի մասին, կազմված նախագծերի և դրանց ճարտարապետահատակագծային առաջադրանքների մասին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, տրամադրում է եզրակացություններ.

13) իր իրավասության սահմաններում մասնակցում է հողաշինարարական նպատակային ծրագրերի, հողերի միավորման նախագծերի մշակմանը.

14) մշակում է բնագավառի գործունեությունը կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, նորմատիվ փաստաթղթեր (պետական ստանդարտներ, հրահանգներ, մեթոդական ցուցումներ և այլն).

15) հրապարակում է անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկագրի հրապարակում.

16) Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի, տեղագրական քարտեզների, հանությային նյութերի և հատակագծերի հիման վրա ստեղծում և կառավարում է պետական քարտեզագրական ֆոնդը.

17) իրականացնում է պետական գեոդեզիական ցանցի ստեղծման և պարբերաբար թարմացման աշխատանքներ, ապահովում է կոորդինատային,

բարձունքային, գրավիմետրական չափումների միասնական համակարգի ձևավորումը.

·

18) գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման համար սահմանված կարգով տրամադրում է թույլտվություններ և այդ աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

19) ղեկավարում է աշխարհագրական անվանումների ազգային տեղեկատվական բանկի և Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի ստեղծման ու վարման աշխատանքները.

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված պետական վերահսկողություն:»:

**Հոդված 6.** Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» և «Հայաստանի Հանրապետության Նախագահ» բառերը և դրանց հոլովածները փոխարինել համապատասխանաբար «Կառավարություն» և «Հանրապետության նախագահ» բառերով և դրա հոլովածներով:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՀՕ-189-Ն օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«լիազոր մարմին՝** Անշարժ գույքի կադաստրի կոմիտե, որը սույն օրենքով և օրենսդրությամբ սահմանված կարգով անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց անշարժ գույքի գնահատման մասնագիտական որակավորում իրականացնող մարմին է.»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
«ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի նոյեմբերի 23-ի թիվ ՀՕ-21 օրենքում (այսուհետ՝ Օրենք) «աշխարհագրական անվանումների բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին» և «պետական կառավարման լիազորված մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Անշարժ գույքի կադաստրի կոմիտե» բառերով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 2.** Օրենքի 10-րդ հոդվածի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) մշակում է աշխարհագրական անվանումների բնագավառում պետական քաղաքականությունը.»:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) «ա» ենթակետում «վերահսկում է» բառերից առաջ լրացնել «ապահովում է աշխարհագրական անվանումների բնագավառում պետական քաղաքականության իրականացումը,» բառերը.

2) «է» ենթակետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**  
**ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածը 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով.

«2.1. Սույն օրենսգրքի 31-35-րդ հոդվածներին համապատասխան հողային հարաբերությունների կարգավորման, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների, օգտագործման ու գնի վերաբերյալ տեղեկատվության կառավարման, ինչպես նաև իր իրավասության սահմաններում պետական վերահսկողության իրականացման մասով կառավարման լիազոր մարմինը Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն է:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 61-րդ հոդվածում՝

1) վերնագիրը և առաջին պարբերությունը «հողամասերի» բառից հետո լրացնել (այդ թվում՝ կառուցապատված) մասնավորեցումն ու» բառերով.

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) իրավաբանական անձանց մասնավորեցման (սեփականաշնորհման), կառուցապատված հողամասերի (այդ թվում՝ կառուցապատված հողամասերի օպտիմալացման արդյունքում առանձնացված՝ չկառուցապատված հողամասերի, բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի) օտարման դեպքում՝ «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Պետական գույքի կառավարման կոմիտեն՝ սույն օրենսգրքով և օտարման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԳԵՈՂԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 5. Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառի պետական կառավարման մարմնի իրավասությունը».**

2) 1-ին պարբերության 1-ին նախադասությունը ~~որեն~~ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառի պետական կառավարման մարմինն Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե)»: ~~Կոմիտեն՝~~»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի «է» կետն ուժը կորցրած ճանաչել և «լիազորված մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովաձևերով:

;

**Հոդված 3.** Օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներում «լիազորված մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 43.** Օրենքի 15-րդ հոդվածի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության իրականացումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության ապահովման



նպատակներով իրագործում են կոմիտեն և պաշտպանության պետական կառավարման լիազորված մարմինը:»:

**Հոդված 54.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

## «ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի՝

1) 1-ին մասում «գործադիր իշխանության համակարգում գործող» բառերը փոխարինել «կառավարությանը ենթակա» բառերով:

2) 2-րդ մասից հանել «ֆինանսների նախարարության» բառերը, իսկ «9-րդ» բառը փոխարինել «14-րդ» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ .

«1) տեսչական մարմին՝ սույն օրենքի համաձայն ստեղծվող վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող ~~կառավարությանը ենթակա~~ պետական մարմին. ».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր-1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերով.

«1.1) լիազոր մարմին՝ համապատասխան բնագավառի քաղաքականությունը մշակող գործադիր իշխանության մարմին.

1.2) տեսչական մարմնի վերահսկողության ոլորտ՝ օրենքով սահմանված ոլորտ կամ ոլորտի մաս, որի նկատմամբ տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվում է վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին.

1.3) տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագիր՝ ընթացիկ տարում հաջորդ տարվա համար տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատվող փաստաթուղթ, որն առնվազն ներառում է տեսչական մարմնի վերահսկողության ոլորտի ընդհանուր իրավիճակը, առկա խնդիրները և

բացահայտված դիսկերը, ինչպես նաև դրանց նվազեցմանն ու վերացմանն ուղղված տարեկան միջոցառումների ժամանակացույցը»:

3) ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

**«Հոդված 5. Տեսչական մարմինը**

1. Տեսչական մարմինը ~~Հայաստանի Հանրապետության կ~~առավարությանը ենթակա վերահսկողություն իրականացնող պետական մարմին է:

2. Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով: ~~Տեսչական մարմնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:~~

3. Տեսչական մարմինը կարող է ունենալ կառուցվածքային ստորաբաժանումներ: Տեսչական մարմնի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

~~4. Տեսչական մարմինն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Տեսչական մարմնի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տեսչական մարմնի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից:~~

54. Տեսչական մարմնի լիազորությունների արդյունավետ իրականացման, նյութական խրախուսման, կարողությունների զարգացման նպատակով տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է բացել արտաբյուջետային միջոցների հաշիվ, որը չի կարող համալրվել տեսչական մարմնի վերահսկողության արդյունքում նշանակված տույժերով և/կամ տուգանքներով:

65. Տեսչական մարմնի գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը:

#### **Հոդված 4.** Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) վերնագիրը «մարմնի» բառից հետո լրացնել «նպատակը և» բառերով, իսկ 1-ին մասում «Տեսչական մարմնի լիազորություններն են՝» բառերը փոխարինել «Տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իր վերահսկողության ոլորտում անվտանգության ~~և (կամ) իրավական նորմերի օրենսդրության~~ պահանջների պահպանման ապահովումն է, որին համապատասխան տեսչական մարմինն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝» բառերով.

2) 1-ին մասի 1-ին կետում «այլ» բառը փոխարինել «դրանց համապատասխան ընդունված նորմատիվ» բառերով, իսկ «կատարման» բառը փոխարինել «պահպանման» բառով:

#### **Հոդված 5.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը 1-ին նախադասությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տեսչական մարմնի կառավարմանը ներգրավված են նրա վերահսկողության ոլորտի լիազոր մարմինների ղեկավարները՝ կառավարման խորհրդի միջոցով:», իսկ հաջորդ նախադասության մեջ «ինն» բառը փոխարինել «տասն» բառով.

2) 2-րդ մասում՝

ա. հանել «կամ նրա որոշմամբ՝ համապատասխան տեղակալը» բառերը.

բ. «Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացուցիչը» բառերով.

գ. «կառավարման մարմնի ներկայացուցիչը» բառերը փոխարինել «կառավարման մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը» բառերով.

3) 3-րդ մասում «տեսչական մարմինն» բառերը փոխարինել «~~և~~ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման ~~քարտուղարություն~~—գրասենյակն (այսուհետ նաև՝ տեսչական մարմինների գրասենյակ)» բառերով, իսկ «մինչև երեք» բառերը փոխարինել «երկու» բառով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1 Խորհրդի կազմում անդամ ընտրված հասարակական կամ գիտական կազմակերպության ներկայացուցիչների անդամությունը խորհրդի առաջարկությամբ կարող է դադարել, երբ.

1) խորհրդի համապատասխան անդամը [անհարգելի պատճառով](#) առնվազն երկու անգամ անընդմեջ չի մասնակցել խորհրդի ~~հերթական~~ նիստերին.

2) կասեցվել կամ դադարեցվել է համապատասխան հասարակական կամ գիտական կազմակերպության գործունեությունը.

3) համապատասխան հասարակական կամ գիտական կազմակերպությունը դադարել է համապատասխանել խորհրդի անդամ ընտրվելու չափանիշներին.

4) համապատասխան կազմակերպությունը ներկայացրել է անդամությունը դադարեցնելու մասին դիմում»:

5) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել [ԿՌԻ-հետևյալ](#) խմբագրությամբ.

«Խորհրդի նիստերը հրապարակային են և հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ»:

6) 7-րդ մասում՝

ա. լրացնել 1.1-ին կետ.

«1.1) հավանություն է տալիս տեսչական մարմնի կողմից ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին».

7) 4-րդ կետը շարադրել [ԿՌԻ-հետևյալ](#) խմբագրությամբ՝

«4) քննարկում է տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը և հավանություն է տալիս դրան.»

#### **Հոդված 6.** Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հայեցողական» բառը փոխարինել «վարչական» բառով.

2) 5-րդ մասի՝

ա. 2-րդ կետում «շրջանակները» բառից հետո լրացնել «՝ տարանջատելով վերահսկողական և վերլուծական, պլանավորման գործառույթները».

բ. 3-րդ կետում «և լիազոր մարմնի ղեկավարի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանը» բառերը փոխարինել «,Խորհրդի դրական

եզրակացության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին» բառերով.

զ. 4-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարի միջոցով» բառերը հանել.

դ. 5-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարի հաստատման է ներկայացնում» բառերը փոխարինել «հաստատում է» բառով, իսկ «հաստիքացուցակը» բառից հետո լրացնել «և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը» բառերը.

ե. 11-րդ կետում «հաստատմանն» բառը փոխարինել «հավանությանն» բառով:

**Հոդված 7.** Օրենքի 9-րդ հոդվածի վերնագիրը և ամբողջ տեքստը շարադրել նոր խմբագրությամբ.

#### **« Հոդված 9. Բողոքարկումը**

Տեսչական մարմինների և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտը կարող է բողոքարկվելի դեմ բերված բողոքները կարող են քննության առնվել ակտն ընդունած տեսչական մարմնին կողմից կամ դատարանից ~~է~~ կարգով:»:

**Հոդված 8.** Օրենքի 12-րդ հոդվածի վերնագիրը և ամբողջ տեքստը շարադրել նոր խմբագրությամբ.

#### **« Հոդված 12. Տեսչական մարմնի գործունեության որակի ապահովումը**

1. Որակի ապահովումը համակարգ է, որն ուղղված է տեսչական մարմինների գործունեության արդյունավետության գնահատմանը, բարձրացմանը, շարունակական կատարելագործմանը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված սկզբունքների ամբողջական իրագործմանն ու տեսչական համակարգի միասնական զարգացմանը:

2. Տեսչական մարմնում գործում է որակի ապահովման ստորաբաժանում, որի գործունեությունն ուղղված է տեսչական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը և շարունակական կատարելագործմանը՝ սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան:

3. Տեսչական մարմնի որակի ստորաբաժանման ղեկավարին պաշտոնը վարչական պաշտոն է, որին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում, ինչպես

նաև նրա նկատմամբ խրախուսման և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

4. Տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության կարգը, ինչպես նաև որակի ապահովման ստորաբաժանման հաշվետվություններին ներկայացվող ընդհանուր պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հաշվետվությունների բովանդակությանը ներկայացվող հավելյալ պահանջները սահմանվում են Խորհրդի որոշմամբ:

5. Տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագիրը հաստատում է Խորհուրդը:

6. Որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է և հաշվետվություններ է ներկայացնում Խորհրդին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին և տեսչական մարմինների գրասենյակին :

7. ~~Հայաստանի Հանրապետության վարչապետի ենթակայությամբ գործում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում գործում է~~ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման ~~բարտադրություն~~ գրասենյակ, որի նպատակն է ապահովել տեսչական համակարգի անկախ և միատեսակ զարգացումը, տեսչական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացումը, շարունակական կատարելագործումը, ինչպես նաև տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների գործունեության միասնական համակարգումը:

8. ~~Տեսչական մարմինների գրասենյակի ղեկավարի և տեղակալի պաշտոնները վարչական պաշտոն են:~~

89. Տեսչական մարմինների գրասենյակի ղեկավարը հաշվետու է ~~Հայաստանի Հանրապետության~~ վարչապետին և ~~Հայաստանի Հանրապետության~~ վարչապետի աշխատակազմի ղեկավարին:

910. Տեսչական մարմինների գրասենյակի ղեկավարը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է Խորհրդի նիստերին:

101. Տեսչական մարմինների գրասենյակը հաջողված փորձի հիման վրա՝

1) մշակում է տեսչական համակարգի միասնական զարգացման և արդյունավետ կառավարման, ստուգումների, ինչպես նաև տեսչական մարմնի վերահսկողական քաղաքականությունը.

2) մշակում և կատարելագործում է տեսչական մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը.

3) մշակում է տեսչական մարմինների գործունեության վերաբերյալ մեթոդական ցուցումներ (ուղեցույցներ), ձեռնարկներ՝ իրականացնելով տեսչական մարմինների մեթոդական ղեկավարումը.

4) իրականացնում է տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման արդյունքների մոնիտորինգ և կատարում համապատասխան վերլուծություններ.

5) համակարգում է տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների աշխատանքները.

6) իրականացնում է տեսչական մարմինների գործունեության վերաբերյալ ~~կատարողական~~ կառավարության կողմից սահմանված կարգով տեղեկատվության հավաքագրում, դրանց վերլուծություն, ամփոփում, ինչպես նաև վերհանված թերությունների վերացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

7) աջակցում է տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրմանը և շարունակական կատարելագործմանը.

8) աջակցում է տեսչական մարմինների ղեկավարների և աշխատողների ուսուցման և շարունակական մասնագիտական վերապատրաստման համակարգի ներդրմանը և դրա հետագա կատարելագործմանը.

9) իրականացնում է տեսչական մարմինների գործունեության վերաբերյալ մեթոդական և խորհրդատվական աջակցություն:»:

#### **Հոդված 9.** Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տեսչական մարմինները նախորդ տարվա հաշվետվությունները ներկայացնում են մինչև ընթացիկ տարվա փետրվարի 5-ը:»:



2) 2-րդ մասը՝

ա. առաջին նախադասությունը «հաշվետվությունները» բառից հետո լրացնել «առնվազն» բառով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր-1.1-ին կետով.

«1.1) գործունեության տարեկան ծրագրի կատարման ընթացքը»:

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր-8-րդ կետով.

«8) Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները:»:

**Հոդված 10.** Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «բողոքարկման հանձնաժողովի անդամին» և «կամ բողոքարկման հանձնաժողովի անդամին» բառերը:

**Հոդված 11.** Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) «լիազոր մարմնի» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «[←←](#) վարչապետի աշխատակազմի» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով.

2) 2-րդ մասից հանել «(առանձնացված ստորաբաժանման)» բառերը.

3) 3-րդ մասում «հաստատմանը» բառը փոխարինել «հավանությանը» բառով:

4) ուժը կորցրած ճանաչել 4-րդ մասը.

5) 6-րդ մասից հանել «լիազոր մարմինը» բառերը, [իսկ «կարող է կատարել» բառերը փոխարինել «կարող են կատարվել» բառերով:](#)

**Հոդված 12.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով.

2) 7-րդ և 8-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 12-13.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ****«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 3. Ազգային անվտանգության մարմինների համակարգը**

1. Ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ լիազորված մարմին) վարչապետին ենթակա մարմին է: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմված է լիազորված մարմնից՝ ներառյալ կենտրոնական և մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, ուսումնական կենտրոններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից: ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների միասնական համակարգը կազմված է վարչապետին ենթակա Ազգային անվտանգության ծառայությունից (այսուհետ՝ լիազորված մարմին), նրան ենթակա մարզային մարմիններից, սահմանապահ զորքերից, ուսումնական կենտրոններից, հատուկ նշանակության և այլ ստորաբաժանումներից:~~»:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 4. Լիազորված մարմինը**

1. Լիազորված մարմնի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Կառավարությունը:

2. Լիազորված մարմնի կառավարումն իրականացնում է վարչապետը, իսկ անմիջական ղեկավարումը՝ լիազորված մարմնի ղեկավարը:

3. Լիազորված մարմնի համակարգում սահմանված կարգով գործում են հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության և քննչական մարմիններ:

4. Լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է ազգային անվտանգության խնդիրներին առնչվող հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների և ստորաբաժանումների աշխատանքի օպերատիվ ղեկավարումը:

5. Լիազորված մարմնի կառուցվածքը սահմանվում է՝ ելնելով սույն օրենքից:»:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ հոդվածներով.

**«Հոդված 4.1. Լիազորված մարմնի ղեկավարի ու տեղակալների նշանակումը և ազատումը**

1. Լիազոր մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է [Ազգային անվտանգության ծառայության](#) տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

2. [Վարչապետի առաջարկությունը ներկայացվում է գրավոր և ներառում է պաշտոնի նշանակմանը ներկայացված անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին և կոչումը:](#)

2.3. Վարչապետի առաջարկությանը կցվում է պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին Հանրապետության նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը:

3.4. Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, ստորագրում է առաջարկությանը կցված հրամանագրի նախագիծը կամ այն առարկություններով վերադարձնում է վարչապետին:

4.5. Եթե վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը՝ հնգօրյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է հրամանագիրը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5.6. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում վարչապետի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ստորագրում է համապատասխան հրամանագիրը:

6.7. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում վարչապետի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին, ապա վարչապետը հնգօրյա ժամկետում սույն հոդվածի 23-րդ մասով սահմանված կարգով ներկայացնում է նոր առաջարկություն:

7.8. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 43-65-րդ մասերով սահմանված պահանջները, ապա համաձայն Սահմանադրության 139-րդ հոդվածի՝ տվյալ անձը պաշտոնի նշանակված կամ պաշտոնից ազատված է համարվում իրավունքի ուժով՝ սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետը գրավոր հայտարարություն է տարածում: Գրավոր հայտարարությունը ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

8.9. Լիազորված մարմնի ղեկավարի տեղակալները պաշտոնի են նշանակվում և ազատվում սույն հոդվածով սահմանված կարգով՝ լիազորված մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա:

9.10. Լիազորված մարմնի ղեկավարի տեղակալներ նշանակելու կամ ազատելու մասին վարչապետի առաջարկությանը կցվում են՝

1) լիազորված մարմնի ղեկավարի տեղակալներ նշանակելու կամ ազատելու մասին վարչապետին ուղղված լիազորված մարմնի ղեկավարի գրավոր միջնորդությունը, որը ներառում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը.

2) լիազորված մարմնի ղեկավարի տեղակալներ նշանակելու կամ ազատելու մասին Հանրապետության նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը:

#### **Հոդված 4.2. Քննչական մարմինը**

1. Քննչական մարմինը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում է նախաքննություն:

2. Քննչական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է լիազորված մարմնի ղեկավարը՝ վարչապետի համաձայնությամբ:»:

**Հոդված 4.** Օրենքի 5-րդ հոդվածից հանել «, այդ թվում՝ լիազորված մարմնի՝ իր իրավասության սահմաններում ընդունած գերատեսչական նորմատիվ ակտերից» բառերը:ում «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով:

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից, 11-րդ հոդվածի 4-րդ պարբերությունից և 24-րդ հոդվածի 3-րդ պարբերությունից հանել «գերատեսչական նորմատիվ» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով:

**Հոդված 7.** Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.  
**«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

**Հոդված 8.** Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 15. Ազգային անվտանգության մարմինների լիազորությունները**

1. Ազգային անվտանգության մարմինները ~~լիազորված են՝~~

1) իրենց իրավասության սահմաններում ապահովում ենել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, պետական սահմանների անձեռնմխելիությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը, քաղաքացիների իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ամրապնդել հանրապետության պաշտպանունակությունը.

1)2) գաղտնի հիմունքներով ~~համագործակցել~~ համագործակցում են դրա համար համաձայնություն տված անձանց հետ.

2)3) օրենքով սահմանված կարգով կատարում ենիրականացնում են հետաքննություն, և նախաքննություն կատարել, իրականացնում ենելև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ունենալ և օգտագործում ենել ձերբակալվածներին պահելու վայրեր.

3)4) Երթափաթեցնելթափանցում ենել հետախուզական և այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններ ու կազմակերպություններ, ինչպես նաև հանցավոր խմբավորումներ, որոնց գործունեությունը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը.

4)5) օրենքով սահմանված կարգով տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացնելում են պետական վերահսկողություն, ինչպես նաև համակարգում ենել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկատվության գաղտնագրային և տեխնիկական պաշտպանության բնագավառի գործունեությունը, սահմանում ենել Հայաստանի Հանրապետությունում տեխնիկական հետախուզություններին հակազդման կազմակերպման միասնական կարգը.

5)6) ծառայողական պարտականությունները կատարելիս օգտագործում ենել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև կազմակերպություններին ու քաղաքացիներին՝ ֆիզիկական անձանց պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները՝ համարժեք հատուցմամբ.

6)7) հանցագործությունների կանխարգելման, հանցագործություն կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելու և ձերբակալելու, շտապ բժշկական օգնության կարիք ունեցող քաղաքացիներին՝ ֆիզիկական անձանց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ հասցնելու, ինչպես նաև դեպքի վայր մեկնելու համար, անհետաձգելի դեպքերում օգտագործում ենել քաղաքացիներին՝ ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները: Ազգային անվտանգության մարմինները, օրենքով սահմանված կարգով, պարտավոր են հատուցել նրանց ծախսերը կամ պատճառած վնասը.

7)8) հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելիս, օրենքով սահմանված կարգով, մուտք են գործում ել քաղաքացիներին-Ֆիզիկական անձանց պատկանող բնակելի և այլ շինություններ, հողամասեր, կազմակերպությունների շինություններ, եթե բավարար տվյալներ կան ենթադրելու, որ այնտեղ հանցագործություն է կատարվում կամ կատարվել է, և հապաղումը կարող է վտանգի տակ դնել քաղաքացիների կյանքն ու առողջությունը.

8)9) Ստուգում են ել քաղաքացիներին-Ֆիզիկական անձանց և պաշտոնատար անձանց անձը հաստատող փաստաթղթերը, եթե հանցագործության կատարման մեջ նրանց կասկածելու համար բավարար հիմքեր կան.

9)10) ձերբակալում են ել այն անձանց, ովքեր ներթափանցել են կամ ներթափանցվելու փորձ են կատարել հատուկ ռեժիմային օբյեկտների և պահպանվող այլ օբյեկտների հսկվող տարածքներ, ինչպես նաև ստուգում են ել նրանց անձը հաստատող փաստաթղթերը, նրանցից ստանում են բացատրություններ-~~ստանալ~~, կատարում են ել այդ անձանց զննում, նրանց իրերի ու փաստաթղթերի զննում և ազգրավում.

10)11) սահմանված կարգով պետական մարմիններ և կազմակերպություններ են ներկայացնում առաջարկություններ կամ միջնորդություններ ներկայացնել անվտանգության սպառնալիքների և այն հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման մասին, որոնց բացահայտումը, կանխումն ու խափանումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված է լիազորված մարմնի իրավասությանը.

11)12) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և կազմակերպություններից, ~~օրենքով~~ սահմանված կարգով, ~~ստանալ~~ ստանում են տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ազգային անվտանգության մարմինների վրա դրված պարտականությունների կատարման համար, ~~բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղեկությունների ստացման հատուկ կարգ է սահմանված.~~

12) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների գործունեության համակարգման և արդյունքների ամփոփման համար ունենալ ապահովելում են տեղեկատվական համակարգերի, վերլուծության, ինչպես նաև

օպերատիվ-հետախուզական նպատակներով տեսագրման, ձայնագրման, կինոնկարահանման, լուսանկարահանման և տեխնիկական կենտրոնները [աշխատանքը](#).

13) ~~ազգային անվտանգության մարմինների պարտականությունների լիազորությունների կատարման իրականացման համար սահմանված կարգով ունենալ ունեն հատուկ նշանակության ստորաբաժանումներ~~.

14) ~~Անցկացն անցկացնում ենէլ~~ քրեագիտական և այլ փորձաքննություններ ու հետազոտություններ.

15) ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխադարձության հիման վրա, համագործակցում ենէլ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների հետ ու սահմանված կարգով, փոխգործակցության հիման վրա, նրանց հետ փոխանակում ենէլ օպերատիվ տեղեկություններ, հատուկ տեխնիկական և այլ միջոցներ.

16) իրենց իրավասության սահմաններում, ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օրենքով~~ սահմանված կարգով, մասնակցում ենէլ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախագծերի մշակմանը և կնքումէլ քաղաքացիաիրավական պայմանագրեր.

17) ~~ի~~իրականացնում ենէլ միջոցառումներ՝ ուղղված սեփական անվտանգության ապահովմանը (այդ թվում՝ լիազորված մարմնի համակարգում օտարերկրյա պետությունների տեխնիկական հետախուզության միջոցներին հակազդելը), ազգային անվտանգության մարմինների պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանմանը, օգտագործում ենէլ տեխնիկական միջոցներ՝ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, հանցավոր խմբերի և առանձին անձանց ներթափանցման կանխման ու խափանման նպատակով.

18) ազգային անվտանգության մարմինների աշխատակիցների ~~անձի~~, ազգային անվտանգության մարմինների ստորաբաժանումների, շինությունների և տրանսպորտային միջոցների քողարկման նպատակով օգտագործում ենէլ



~~նախարարությունների~~, պետական այլ մարմինների և կազմակերպությունների փաստաթղթերը, այլ միջոցները, որոնք անհրաժեշտ են քողարկման համար.

19) անցկացնում են են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնահարցերի գիտական հետազոտություններ.

20) պայմանագրային հիմունքներով օգտվում են են ֆիզիկական անձանց և կազմակերպությունների ~~ծառայողական~~ շինություններից, ~~ինչպես~~ նաև ~~քաղաքացիների~~ բնակելի և այլ շինություններից.

21) կադրերի մասնագիտական նախապատրաստության նպատակով, օրենքով սահմանված կարգով, ունենալ համապատասխան ուսումնական հաստատություններ.

22) հատուցմամբ կամ անհատույց ~~իրականացնել~~ իրականացնում են կադրերի պատրաստում օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, կազմակերպությունների անվտանգության ծառայությունների համար, եթե դա չի հակասում ազգային անվտանգության մարմինների գործունեության սկզբունքներին.

23) վարչապետին և նրա հանձնարարությամբ այլ պետական մարմիններ և կազմակերպություններ տեղեկատվություն են ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին.

24) ~~բացահայտել~~, կանխում են, խափանում են և ~~բացահայտում են~~ են Հայաստանի Հանրապետության անվտանգության դեմ ուղղված՝ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեությունը.

25) հետախուզական տեղեկություններ են են հավաքում են Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման, նրա տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման, պետության անվտանգության ամրապնդման նպատակով.

26) բացահայտում են, կանխում են և խափանում են են իրենց քննչական ենթակայությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված իրենց լիազորությունների կատարման ընթացքում հայտնի դարձած այլ հանցագործությունները, իրականացնում են են այդ հանցագործությունները կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզումը.

27) կանխում, խափանում և բացահայտում ենք, կանխել և խափանել ահաբեկչական գործողությունները.

28) մշակում ենք և պետական համապատասխան մարմինների հետ համատեղ իրականացնում ենք միջոցառումներ՝ ուղղված ~~գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների պետական և տեղական ինքնակառավարման~~ մարմիններում կոռուպցիոն երևույթների, օտարերկրյա պետությունների հետ կապված զենքի և թմրանյութերի ապօրինի շրջանառության, դրանց մաքսանենգության, հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու, զինված կազմավորումների, հանցավոր խմբերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու նպատակ ունեցող անձանց և կազմակերպությունների դեմ պայքարին.:

29) իրենց իրավասության սահմաններում ապահովում ենք անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ~~նախարարություններում,~~ պետական այլ մարմիններում և հիմնարկներում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում.

2. Սահմանային տարիքի հասած ծառայողների՝ լիազոր մարմնում ծառայության ժամկետները տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը բացառիկ դեպքերում կարող է երկարաձգել մինչև 5 (դասախոսական կազմինը և բժշկական, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ավագ սպայական կազմի ծառայողներինը՝ մինչև 10) տարի ժամկետով:

**Հոդված 16.6. Լիազոր մարմնի ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները**

1. Լիազոր մարմնի ղեկավար կարող է նշանակվել լիազոր մարմնի այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

2. Լիազոր մարմնի ղեկավարի առաջին տեղակալ կարող է նշանակվել լիազոր մարմնի այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչև նշանակումը առնվազն 3 տարի զբաղեցրել է լիազոր մարմնի ծառայողների գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

3. Լիազոր մարմնի ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում ատեստավորման արդյունքում կարող են նշանակվել այն ծառայողները, ովքեր մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են լիազոր մարմնի ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին երեք տարին զբաղեցրել են լիազոր մարմնի ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն:

4. Լիազոր մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել նաև լիազոր մարմնի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

5. Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված ատեստավորման պահանջը չի տարածվում լիազոր մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվող ծառայողի վրա:

6. Լիազոր մարմնի ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է ատեստավորման արդյունքում՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:

7. Լիազոր մարմնի ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումները կատարվում են առանց ատեստավորման:

8. Լիազոր մարմնի ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է միմիայն բարձրագույն կրթության առկայության դեպքում:

9. Լիազոր մարմնի ծառայողների կրտսեր խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է առնվազն միջնակարգ կրթության առկայության դեպքում:

10. Պետական լիազոր մարմնում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, ~~դատական ակտերի~~ հարկադիր կատարման ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ~~և արդարադատության նախարարության պետական ծառայողներ~~, դատախազներ, ինչպես նաև լիազոր մարմնի պահեստազորի սպաներ, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար լիազոր մարմնի ծառայողներին ներկայացվող պահանջները:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված պետական մարմինների և լիազոր մարմնի պաշտոնների համապատասխանությունը սահմանում է ~~և~~ «Կ» առավարությունը:



12. Լիազոր մարմնի ծառայողը կարող է նշանակվել առաջին պաշտոնի, բարձր պաշտոնի, հավասար պաշտոնի և ցածր պաշտոնի:

### **Հոդված 16.7. Լիազոր մարմնի ծառայողների նշանակումը և ազատումը**

~~1. Լիազոր մարմնի ղեկավարը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան:~~

~~2. Լիազոր մարմնի ղեկավարի տեղակալներին (այդ թվում՝ առաջին տեղակալին) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը՝ լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:~~

13. Լիազոր մարմնի ծառայողների գլխավոր (բացառությամբ լիազոր մարմնի ղեկավարի տեղակալների), ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոնների ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազոր մարմնի ղեկավարը:

### **Հոդված 16.8. Լիազոր մարմնի ծառայողներին բարձրագույն սպայական կոչում շնորհելը**

1. Լիազոր մարմնի ծառայողներին բարձրագույն սպայական կոչում շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ:

2. Վարչապետի առաջարկությանը կցվում է համապատասխան կոչում շնորհելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծը:

3. Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում, ստորագրում է առաջարկությանը կցված հրամանագրի նախագիծը կամ այն առարկություններով վերադարձնում է վարչապետին:

4. Եթե վարչապետը հնգօրյա ժամկետում չի ընդունում Հանրապետության նախագահի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը՝ հնգօրյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ստորագրում է հրամանագիրը կամ դիմում է Սահմանադրական դատարան:

5. Եթե Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում վարչապետի կողմից Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում հրամանագիր է ընդունում՝ համապատասխան կոչում շնորհելու վերաբերյալ:

6. Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները, ապա համաձայն Սահմանադրության 139-րդ հոդվածի՝ կոչումը շնորհված է համարվում իրավունքի ուժով՝ սույն հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված եռօրյա ժամկետի ավարտին հաջորդող օրվանից, որի մասին վարչապետը գրավոր հայտարարություն է տարածում: Գրավոր հայտարարությունը ստորագրվում է վարչապետի կողմից և հրապարակվում Կառավարության պաշտոնական կայքէջում:

#### **Հոդված 16.9. Լիազոր մարմնի ծառայողի արձակուրդը**

1. Լիազոր մարմնի ծառայողին վարձատրության պահպանմամբ տրվում են՝

- 1) հերթական (ամենամյա) արձակուրդ.
- 2) ուսումնական արձակուրդ.
- 3) լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդ.
- 4) հիվանդության պատճառով արձակուրդ.
- 5) կին ծառայողներին՝ նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդ:

2. Լիազոր մարմնի ծառայողներին տրվում է նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ արձակուրդ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերում նշված արձակուրդները ծառայողի հերթական արձակուրդում չեն հաշվվում:

4. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված արձակուրդների տրամադրման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

#### **Հոդված 16.10. Հերթական արձակուրդը**

1. Հերթական արձակուրդի տևողությունը սահմանվում է՝

1) մինչև 15 օրացուցային տարի ծառայած ծառայողների համար՝ 30 օր.

2) 15-25 օրացուցային տարի ծառայած ծառայողների համար՝ 40 օր.

3) 25 և ավելի օրացուցային տարի ծառայած ծառայողների համար՝ 45 օր:

2. Հերթական արձակուրդից ծառայողին հետ կանչելը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, արձակուրդ տրամադրող պաշտոնատար անձի հրամանով: Այդ դեպքում արձակուրդի չօգտագործած օրերը տրամադրվում են նույն տարում, եթե դրանք կազմում են 15 օր և ավելի: Արձակուրդի չօգտագործած օրերը ծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին:

3. Հերթական արձակուրդի ժամանակը որոշելիս նախապատվությունը տրվում է՝

1) մարտական գործողությունների մասնակիցներին.

2) մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա ունեցողներին.

3) հաշմանդամ կին կամ երեխա ունեցողներին:

4. Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած ծառայողի արձակուրդը երկարաձգվում է հիվանդության պատճառով չօգտագործված օրերի թվով՝ հիմք ընդունելով բուժող բժշկի և բուժփիմնարկի պետի (գլխավոր բժշկի) համապատասխան տեղեկանքը:

Սույն մասում նշված տեղեկանքն այլ բուժփիմնարկի կողմից տրվելու դեպքում հավաստվում է լիազոր մարմնի կողմից:

5. Լիազոր մարմնի ծառայողների ծառայության ընդունվելու և ծառայությունից արձակվելու տարում հերթական արձակուրդը հաշվարկվում է օրենքով հասանելիք արձակուրդի ընդհանուր տևողությունը տասներկուսի բաժանելու և ստացված օրերը լրիվ ծառայած ամիսների թվով բազմապատկելու միջոցով: Ընդ որում, ոչ լրիվ ամիսներն ու օրերը կլորացվում են ավելացման եղանակով:

6. Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում լիազոր մարմնի ծառայողի արձակուրդն ընդհատվում է, բացառությամբ կին ծառայողի՝ նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի արձակուրդի:

### **Հոդված 16.11. Ուսումնական արձակուրդը**

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման ձևով օրենքով սահմանված կարգով սովորող լիազոր մարմնի ծառայողներին (այդ թվում՝ ասպիրանտներին, դոկտորանտներին) տրվում է ուսումնական արձակուրդ՝ ուսումնաքննական ժամկետներին համապատասխան:

### **Հոդված 16.12. Լրացուցիչ (կարճաժամկետ) արձակուրդը**

1. Լրացուցիչ արձակուրդը տրվում է՝

1) ծառայողների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ու տևողությամբ.

2) ընտանեկան պայմաններից ելնելով և հարգելի այլ պատճառներով՝ մինչև 10 օր տևողությամբ:

### **Հոդված 16.13. Հիվանդության պատճառով արձակուրդը**

1. Լիազոր մարմնի ծառայողին հիվանդության պատճառով արձակուրդ տրվում է ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

2. Ծառայողին հիվանդության պատճառով տրվում է արձակուրդ մինչև 60 օր տևողությամբ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքերի:

3. Բուժման և հիվանդության պատճառով տրված արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակը, ընդհանուր առմամբ, չպետք է ~~անցնի գերազանցի~~ 4 ամիսից, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին հիվանդությունների բուժման համար օրենսդրությամբ սահմանվում են ավելի երկար ժամկետներ:

Սույն մասում նշված ժամկետը կարող է երկարաձգել լիազոր մարմնի ղեկավարը՝ բժշկական հիմնարկի եզրակացության հիման վրա:

4. Բուժման կամ հիվանդության պատճառով տրված արձակուրդի անընդմեջ ժամկետն ավարտվելուց հետո ծառայողը ենթակա է ռազմաբժշկական հանձնաժողովի հետազոտման՝ հետագա ծառայությունը շարունակելու հնարավորությունը որոշելու համար:

## **Հոդված 16.14. Նախաձեռնության, հետձեռնության և երեխայի խնամքի համար արձակուրդը**

1. Լիազոր մարմնի կին ծառայողին նախաձեռնության, հետձեռնության, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվում է արձակուրդ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Նախաձեռնության, հետձեռնության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է կին ծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու, միանվագ դրամական պարգևատրման և կենսաթոշակ հաշվարկելու համար:

3. Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին ծառայողի պաշտոնը պահպանվում է:

4. Նախաձեռնության և հետձեռնության տարում կին ծառայողին հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա արձակուրդի տևողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համամասնաբար, մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկուսուկես օր հաշվարկով:»:

### **Հոդված 12.** Օրենքի 17-րդ հոդվածի՝

- 1) 1-ին մասում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով,
- 2) 2-րդ մասի «անօրինական գործողությունները» բառերը փոխարինել «որոշումները, գործողությունները կամ անգործությունը» բառերով:

**Հոդված 13.** Օրենքի 18-րդ հոդվածում «ազգային անվտանգության մարմիններում ծառայողների» բառերը փոխարինել «զինծառայողների» բառով:

**Հոդված 14.** Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

### **Հոդված 15. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 6.1-ին հոդվածի 4-րդ մասը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո նշանակված վարչապետների նկատմամբ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

#### «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 3-րդ մասում «ոստիկանության,» բառից հետո լրացնել «պետական պահպանության,»

բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 15-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը» բառերը փոխարինել «վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարը» բառերով, իսկ «Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության պրորբացիայի ծառայության» բառերը փոխարինել «պրորբացիայի ծառայության» բառերով:

2) 18-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետը» բառերը փոխարինել «վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարի

համար՝ վարչապետը» բառերով, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրորբացիայի ծառայության» բառերը փոխարինել «պրորբացիայի ծառայության» բառերով, իսկ «Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի տեղակալի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը» բառերը՝ «վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարի տեղակալի համար՝ վարչապետին ենթակա

Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության  
ղեկավարը» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում «հանրապետական գործադիր»  
բառերից առաջ լրացնել «, պետական պահպանության (բացառությամբ ՀՀ պետական  
պահպանության ծառայության ղեկավարի տեղակալների)» բառերը:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության  
նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետում, 6-րդ հոդվածի 5-րդ մասում, 8-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերում, 16-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերում, 23-րդ հոդվածի 1-ին մասում, 32-րդ հոդվածի 6-րդ մասում, 33-րդ հոդվածի 2-րդ մասում «ոստիկանության» բառից հետո լրացնել «, պետական պահպանության» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասից հանել ում «Ազգային անվտանգության ծառայության» բառերը: փոխարինել «վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության» բառերով:

2) 2.1-ին մասը ուժը կորցրած ճանաչել:

3) 5-րդ մասում «ոստիկանությունում» բառից հետո լրացնել «, պետական պահպանության» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 1-ին հավելվածում՝

1) «ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության պետ» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով:

«Վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավար \_\_\_\_\_ 12.00»,

2) հանել «ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետ \_\_\_\_\_ 10.00» տողը:

3) «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով:

«Վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարի առաջին տեղակալ 10.00»,

4) «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«Վարչապետին ենթակա Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության ղեկավարի տեղակալ 8.50»,

5) հանել «ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալ 8.50» և «ՀՀ Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի տեղակալ 7.50» տողերը:

**Հոդված 4.** Օրենքի 6-րդ հավելվածի վերնագրից հանելում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերը: փոխարինել «ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորրևտի Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ**

**ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-246 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասում «զինված ստորաբաժանումներում,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության ծառայությունում,» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում

1) «ե» կետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետ.

«զ) ~~Հայաստանի Հանրապետության վարչապետին ենթակա~~ պետական պահպանության ծառայության ղեկավարը՝ պետական պահպանության ծառայության ծառայողներին՝ երկարամյա օրինակելի և անբասիր ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը մատուցած նշանակալի ու բացառիկ ծառայությունների համար:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**Օ Ր Ե Ն Ք Ը**  
**«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ**  
**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Սույն օրենքի դրույթները Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության զինծառայողների վրա տարածվում են «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով չկարգավորված մասերով:»:

**Հոդված 2.** Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասում «ոստիկանության» բառից հետո լրացնել «, պետական պահպանության» բառերը, իսկ «հանրապետական գործադիր» բառերը հանել:

**Հոդված 3.** Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի

1) 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում «ոստիկանության» բառից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության» բառերը, իսկ «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության» բառերը հանել.

2) 3-րդ կետում «ծառայության» բառից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության» բառերը, իսկ «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության» բառերը հանել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության համակարգից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգեր կամ Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայություն.»:

**Հոդված 4.** Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «ոստիկանության,» բառից հետո լրացնել «պետական պահպանության ծառայության,» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասում «ոստիկանության,» բառից հետո լրացնել «պետական պահպանության,» բառերը:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****Օ Ր Ե Ն Ք Ը****ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 6-րդ հոդվածի 26.2-րդ կետում «դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող,» բառերից հետո լրացնել «պետական պահպանության ծառայության,» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգրքի 56-րդ հոդվածը 6-րդ կետից հետո լրացնել 6.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1) պետական պահպանության ծառայությունը՝ պետական պահպանության հետ կապված գործերով.»:

**Հոդված 3.** [Օրենսգրքի 438-րդ հոդվածի 3.2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայությունից» բառերը փոխարինել «պրոբացիայի ծառայությունից» բառերով:](#)

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-255-Ն օրենքի (~~այսուհետ՝ Օրենք~~) 4-րդ հոդվածի 3-րդ կետում «ստորաբաժանումների),» բառից հետո լրացնել «պետական պահպանության ծառայության,» բառը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. ~~1-~~Սույն օրենքը կարգավորում է պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից պետական վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները~~ուհ~~, Ծառայության լիազորությունները, Ծառայության կառուցվածքը, Ծառայության ծառայողների վարքագծի հատուկ կանոնները և Ծառայության գործունեության հետ կապված այլ հարաբերություններ:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

Սույն մասում սահմանված հասկացությունները սույն օրենքի իմաստով ունեն հետևյալ բովանդակությունը՝ ում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

~~1)- Պետական վերահսկողություն՝~~ Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական լիազորությունների իրականացման —ապահովմանն ուղղված սույն օրենքով սահմանված **գործունեություն**.

1) —

~~1)2) Արդյունավետություն՝~~ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին.

~~2)3) Օրինականություն՝~~ վերահսկվող օբյեկտի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ



իրավական ակտերով, ինչպես նաև կնքված գործարքներով սահմանված պահանջներին.

**3)4) Պետական միջոցներ՝** վերահսկվող օբյեկտի կողմից կառավարվող, ձևավորվող կամ ձևավորման ենթակա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բոլոր մուտքերը և ելքերը ու նյութական ու ոչ նյութական ակտիվները.

**4)5) Պետական միջոցների կառավարում՝** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բոլոր տիպի մուտքերի և ելքերի և նյութական ու ոչ նյութական ակտիվների տնօրինում, տիրապետում կամ օգտագործում.

**5)6) Պետական միջոցների ձևավորում՝** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բոլոր տիպի մուտքերի և ելքերի և նյութական ու ոչ նյութական ակտիվների հավաքագրում, հասցեագրում.

**6)7) Վերահսկվող օբյեկտ՝** սույն օրենքով սահմանված մարմիններ, հիմնարկներ և անձինք, որոնց առնչությամբ Ծառայության կողմից սույն օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան իրականացվում է պետական վերահսկողություն.

~~8) **Տեսչական մարմին՝** «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մարմին:~~

### **Հոդված 3. Պետական վերահսկողական ծառայությունը**

1. Ծառայությունը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական վերահսկողության ոլորտում գործող ~~Հայաստանի Հանրապետության~~ վարչապետին ենթակա մարմին է, որն իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններ:

## **ԳԼՈՒԽ 2**

**ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ,  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

#### **Հոդված 4. Պետական վերահսկողական ծառայության գործունեության նպատակը**

1. Ծառայության գործունեության նպատակն է ապահովել ~~Հայաստանի Հանրապետության~~ վարչապետին (~~այսուհետ՝ նաև՝ Վարչապետ~~) ~~Հայաստանի Հանրապետության~~ Սահմանադրությամբ և ~~«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով~~ վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումը:

#### **Հոդված 5. Պետական վերահսկողական ծառայության լիազորությունները**

1. Սույն օրենքով սահմանված նպատակով Ծառայությունը պետական վերահսկողության շրջանակներում և սույն օրենքով սահմանված կարգով ~~իրականացնում է հետևյալ լիազորությունները՝~~

1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ՝

ա. ~~Հայաստանի Հանրապետության~~ Կառավարության որոշումների, Վարչապետի վարչապետի որոշումների և հանձնարարականների, ~~Հայաստանի Հանրապետության~~ Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերի՝ այդ թվում հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների, կատարման նկատմամբ վերահսկողության,

բ. դրանց գործունեության օրինականության և արդյունավետության վերահսկողության,

գ. պետական միջոցների կառավարման և ձևավորման արդյունավետության և օրինականության վերահսկողության նպատակներով,

2) ~~Հայաստանի Հանրապետության~~ Սահմանադրությամբ և ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով,

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով,

4) պետական միջոցների ձևավորման գործառույթ իրականացնող լիազորված անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների ձևավորման օրինականության վերահսկողության նպատակով,

5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի, լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով,

6) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների կողմ հանդիսացող անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքներից բխող և դրանց պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով, բացառությամբ պայմանագրից բխող ցուցումներ տալու, որն իրականացվում է պայմանագրով Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմնի միջոցով,

7) պետությունից, համայնքից, ~~Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից,~~ պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով,

8) Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով,

9) պետական միջոցների կառավարման և ձևավորման հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի և հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու, կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով [վճարչապետի](#) համաձայնությամբ իրավասու է առաջարկել կասեցնել գործարքների կատարումը, ինչպես նաև դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները,

10) [վճարչապետի](#) հանձնարարությամբ իրականացնում է կարգապահական վարույթներ,

11) ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները հասցեագրում է իրավասու [պետական կառավարման համակարգի](#) մարմիններին և վերահսկում դրանց ընթացքը,

12) իրականացնում է հանդիպակաց ուսումնասիրություններ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

13) ներկայացնում է վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ և իրականացնում դրանց իրականացման նկատմամբ հսկողություն,

14) համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների հետ,

15) առաջարկություններ է ներկայացնում պետական կառավարման ոլորտում իրավական ակտերի նախագծերի և փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ:

## **Հոդված 6. Պետական վերահսկողական ծառայության լիազորությունների իրականացման կարգը**

1. Ծառայության կողմից ուսումնասիրություններն իրականացվում են Ծառայության ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի հիման վրա՝ համաձայնեցնելով [վճարչապետի](#) հետ: Հանձնարարագրերում սահմանվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի անվանումը, վերահսկվող օբյեկտի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ուսումնասիրության ենթակա ոլորտը կամ դրա համապատասխան մասը, ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածը,

ուսումնասիրություն կատարելու ժամկետը և վայրը, ուսումնասիրություն կատարող պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (պաշտոնի անվանումը, անունը և ազգանունը):

Պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում ուսումնասիրություններ կամ ստուգումներ կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Ծառայությունը վարչապետի կողմից սահմանված կարգով կարող է միջնորդություն ներկայացնել իրավասու մարմինն իրականացնելու տվյալ մարմնի լիազորություններից բխող վերահսկողական գործառույթներ, արդյունքների վերաբերյալ տեղեկացնելով Ծառայությանը:

Ուսումնասիրությունը կարող է կատարվել ինչպես արտագնա, այնպես էլ Ծառայությունում՝ ուսումնասիրությանը վերաբերող նյութեր պահանջելու, ինչպես նաև էլեկտրոնային համակարգերում ուսումնասիրությունն ապահովելու միջոցով: Ուսումնասիրությունը կատարվում է նյութեր, առարկաներ, փաստաթղթեր ու տեղեկատվություն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ապրանքանյութական արժեքների գույքագրման կատարում պահանջելու և ուսումնասիրելու միջոցով:

Ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություն իրականացնողն իրավունք ունի պահանջելու գրավոր պարզաբանումներ, որոնք ենթակա են տրամադրման ներկայացված պահանջով սահմանված ժամկետում:

Ուսումնասիրության արդյունքները ամփոփվում են համապատասխան տեղեկանքով (այսուհետ՝ Տեղեկանք): Տեղեկանքը տրամադրվում է վերահսկվող օբյեկտին դրա վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքները ընդգրկում են Տեղեկանքը և ուսումնասիրության շրջանակներում ձեռքբերված բոլոր նյութերը, ներառյալ՝ Տեղեկանքի վերաբերյալ ներկայացված կարծիքը:

Ուսումնասիրության արդյունքները զեկուցվում են վարչապետին և կարող են հիմք հանդիսանալ վարչապետի կողմից համապատասխան հանձնարարականներ տալու և պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ դրանց կիրառման մասին հանձնարարականներ տալու համար:

2. Ծառայության կողմից հանդիպակաց ուսումնասիրությունները գործարքի մյուս կողմի մոտ իրականացվում են Ծառայության ղեկավարի կողմից տրված հանձնարարագրի հիման վրա՝ համաձայնեցնելով վեբարչապետի հետ:

Ծառայության կողմից հանդիպակաց ուսումնասիրությունները տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվում են բացառապես վեբարչապետի հանձնարարականի հիման վրա:

Ծառայությունը հանդիպակաց ուսումնասիրություններ գործարքի մյուս կողմի մոտ իրականացնում է բացառապես այն դեպքերում, երբ վերահսկվող օբյեկտի մոտ ուսումնասիրության շրջանակներում Ծառայությանն անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական չեն ու առանց հանդիպակաց ուսումնասիրություն կատարելու հնարավոր չէ գնահատել ուսումնասիրվող գործարքը:

Ծառայությունը հանդիպակաց ուսումնասիրություններ տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է բացառապես այն դեպքերում, երբ պետական կառավարման համակարգի մարմիններում իրականացվող ուսումնասիրության շրջանակներում Ծառայությանն անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական չեն ու առանց տեղական ինքնակառավարման մարմնում հանդիպակաց ուսումնասիրություն կատարելու հնարավոր չէ գնահատել ուսումնասիրվող պետական կառավարման համակարգի մարմնի գործունեության օրինականությունը և արդյունավետությունը:

Հանդիպակաց ուսումնասիրությունը գործարքի մյուս կողմի մոտ սահմանափակվում է գործարքն ուսումնասիրելու պահի դրությամբ դրանով սահմանված պարտավորությունների փաստացի կատարման պայմանների, փաստաթղթերի և այլ կրիչների ուսումնասիրմամբ, և այդ նպատակով անձանցից նյութեր, առարկաներ, տեղեկատվություն ու պարզաբանումներ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում ապրանքանյութական արժեքների գույքագրման կատարում պահանջելով և ստանալով՝ առանց այդ անձանց բնականոն գործունեությունը խաթարելու:

3. Ծառայության կողմից մշտադիտարկումն իրականացվում է ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների, փաստաթղթերի և հաղորդումների ուսումնասիրության, վերլուծության և ամփոփման, << վեբարչապետին

առաջարկություններ ներկայացնելու նպատակով՝ կառավարության գործունեության ու տեսչական մարմնի գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերի համադրման, ինչպես նաև տեղեկատվական համակարգերից և տվյալների շտեմարաններից ձեռք բերված և տեսչական մարմինների գործունեության արդյունքների վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծության միջոցով: Տեղեկատվական համակարգերին և տվյալների շտեմարաններին հասանելիությունը ու տեսչական մարմինների գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ստացումն ապահովվում է վճարչապետի կողմից սահմանված կարգով:

4. Իրականացված վերահսկողության արդյունքներով Ծառայությունը վերլուծում է արձանագրված խախտումները, խնդիրները, դրանց պատճառները, հանգամանքները ու հետևանքները՝ դրանց վերաբերյալ վճարչապետին ներկայացնելով տեղեկանքներ և զեկույցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ դրա վերաբերյալ հանձնարարական տալու առաջարկություններ:

5. Վերահսկողության արդյունքերի ամփոփման, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման, առկա բացթողումների ու թերությունների վերացման վերաբերյալ վճարչապետին ու վերահսկվող օբյեկտներին ներկայացվում են առաջարկություններ:

6. Ծառայությունը վերահսկողություն իրականացնելիս իրեն սույն օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում.

1) վճարչապետի կողմից սահմանված կարգով ստանում է անհատույց և ազատ հասանելիություն վերահսկվող օբյեկտում կամ դրա պաշտոնատար անձի մոտ գտնվող և Ծառայության լիազորություններին առնչվող բոլոր թղթային կամ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին ու համակարգերին, տեղեկություններին և փաստաթղթերին,

2) ունի մուտքի հնարավորություն վերահսկվող օբյեկտի տարածքներ՝ այդ թվում հատուկ հսկողության տակ գտնվող տարածքներ,

3) իրավասու է վերահսկվող օբյեկտներից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ Ծառայության գործառույթներին առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, պարզաբանումներ,

4) իրավասու է անհրաժեշտության դեպքում վերահսկողությանը մասնակից դարձնել վերահսկվող օբյեկտի ներքին աուդիտորների (տվյալ կազմակերպության ղեկավարի համաձայնությամբ), մասնագետների, փորձագետների և գիտական հաստատությունների ներկայացուցիչների, կազմավորել ժամանակավոր աշխատանքային խմբեր,

5) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» [Հայաստանի Հանրապետության](#) օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ հավաքագրում է տեղեկատվություն, էլեկտրոնային կամ թղթային կրիչներով, կատարվող հարցումների կամ օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով, ինչպես նաև առկա տեղեկատվական էլեկտրոնային բազաներին՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով առցանց հասանելիության միջոցով, ստանում և դասակարգում է հավաքագրված տեղեկությունները,

6) առցանց ստացվող, հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով հավաքագրվող տեղեկատվությունը համակարգված ամփոփում և համադրում է վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ՝ առկա իրողությունները պարզելու և դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով,

7) կատարում է այցելություններ երևույթների, իրադարձությունների, իրողությունների, վերաբերյալ տեղեկատվության ստացման և գնահատման նպատակով,

8) կատարում է տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, առարկաների, փաստաթղթերի, սարքավորումների (այդ թվում՝ էլեկտրոնային) հետազոտում, տեղատեսություն, որի ընթացքում կարող է իրականացվել լուսանկարում, տեսագրում, փաստաթղթերի պատճենահանում,

9) կարող է իրականացնել ապրանքների, աշխատանքների, ծառայությունների փաստացի ձեռքբերման գների հետ համադրմանն ուղղված՝ նույն կամ նույնանման ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, ինչպես նաև ապրանքների  $\llcorner$  օրենսդրությամբ սահմանված վաճառքի չափորոշիչների պարզելուն ուղղված ձեռքբերում,



10) հատուկ փորձագիտական գնահատական պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտությունից ելնելով՝ նախաձեռնում է փորձաքննության իրականացում՝ անհրաժեշտության դեպքում առարկաներ, փորձանմուշներ և փաստաթղթեր վերցնելու միջոցով,

11) կատարված և ավարտված գործողությունների կամ դրանց փուլերի երկրորդման եղանակով ստացված արդյունքները համադրում է հաշվառմամբ արտացոլված արդյունքների հետ:

7. Վարչապետի կողմից սահմանված կարգով հավաքագրում, ամփոփում և վ՛վարչապետին է ներկայացնում պետական կառավարման համակարգի համապատասխան մարմիններից սահմանված ձևին և կարգին համապատասխան ստացվող օպերատիվ տեղեկատվությունը:

### ԳԼՈՒԽ 3

## ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### Հոդված 7. Ծառայության կառուցվածքը

1. Ծառայությունն ունի գլխավոր քարտուղար: Ծառայության կառուցվածքին վերաբերվող հարցերը կարգավորվում են օրենքով և Ծառայության կանոնադրությամբ: որը հաստատվում է վ՛վարչապետի կողմից:

### Հոդված 8. Ծառայության ղեկավարը

1. Ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է ծառայության պետը ~~ունի ղեկավարում է Ծառայության ղեկավարը~~ (այսուհետ նաև՝ Ղեկավար), ~~որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վ՛վարչապետը:~~ Ղեկավարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է վ՛վարչապետին: ~~Ղեկավարն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վ՛վարչապետը՝ Ղեկավարի առաջարկությամբ:~~

2. Ղեկավարը՝

1) ապահովում է Ծառայության բնականոն գործունեությունը.

2) օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված գործունեության բնագավառին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ առաջարկություններ է ներկայացնում **ԲԿԱ** արչապետին.

3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է Ծառայության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ, ներկայացնում է առաջարկություններ Ծառայության աշխատակիցներին պետական պարգևներով պարգևատրելու նպատակով.

4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Ծառայության Ղեկավարին անմիջական հաշվետու անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող ակտերը.

5) **ԲԿԱ** արչապետին է ներկայացնում Ծառայության գործունեության մասին տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, հաստատում Ծառայության տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում Ծառայությանն ամրացված պետական սեփականության պահպանության ու օգտագործման նկատմամբ.

7) **ԲԿԱ** արչապետի հաստատմանն է ներկայացնում Ծառայության աշխատակիցների թիվը, կառուցվածքը, ինչպես նաև դրա կառուցվածքային փոփոխությունների և վերակազմակերպման վերաբերյալ հարցերը.

8) ձևավորում է աշխատանքային խմբեր.

9) ~~Ծառայությանը վերապահված լիազորությունների սահմաններում~~ ընդունում է իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս հանձնարարականներ, հանձնարարագրեր, ցուցումներ, վերահսկում դրանց կատարման ընթացքը, լսում է Ծառայության աշխատակիցների գործողությունների դեմ բերված բողոքները.

10) պետական միջոցների կառավարման և ձևավորման հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի և հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու, կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով՝ **ԲԿԱ** արչապետի համաձայնությամբ

ներկայացնում է գործարքի կատարումը կամ դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները կասեցնելու վերաբերյալ առաջարկություններ.

11) առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ Ծառայության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ Ծառայության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

12) ներկայացնում է Ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում.

13) այլ մարմիններից, դրանց ղեկավար պաշտոնատար անձանցից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, գրավոր կամ բանավոր պարզաբանումներ.

14) սահմանում է Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, իրավասության սահմանները.

15) կատարում է **ԿԵՎ**արչապետի առանձին հանձնարարականներ.

16) իրականացնում է **ԿԵՎ**արչապետին ենթակա մարմնի ղեկավարին օրենքով վերապահված այլ լիազորություններ.

3. Ղեկավարի բացակայության դեպքում **ԿԵՎ**արչապետի համաձայնությամբ Ղեկավարի պարտականությունները կատարում է Ղեկավարի տեղակալներից մեկը:

### **Հոդված 9. Ծառայության աշխատակիցների վարքագծի հատուկ կանոնները**

1. Ուսումնասիրվող գործառույթի կամ գործընթացի մասին տեղեկություններ հավաքագրելու, գնահատելու և դրանք ներկայացնելու գործում Ծառայության աշխատակիցները դրսևորում են մասնագիտական օբյեկտիվության պատշաճ մակարդակ, կատարում են համապատասխան բոլոր հանգամանքների հավասարակշռված գնահատում, և, դատողություններ կատարելիս, չեն ենթարկվում սեփական շահերի կամ այլ անձանց անհարկի ազդեցությանը:

2. Ծառայության աշխատակիցները չպետք է իրականացնեն այնպիսի գործողություններ, որոնք կարող են ազդել իրենց անաչառության վրա կամ դիտարկվել

որպես այդպիսին: Դա վերաբերում է նաև այնպիսի հարաբերություններին կամ գործունեությանը, որոնք կարող են հակասել վերահսկվող օբյեկտի շահերին:

3. Ծառայության աշխատակիցները պարտավոր են հարգելու ~~են~~ իրենց ստացած տեղեկությունների արժեքն ու պատկանելությունը և առանց համապատասխան թույլտվության չեն հրապարակում այդ տեղեկությունները՝ բացառությամբ իրավական կամ մասնագիտական անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերի:

4. Ծառայության աշխատակիցները պետք է խելամիտ լինեն իրենց պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվության օգտագործման և պահպանման հարցում և աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունը չպետք է օգտագործեն անձնական նպատակներով կամ այլ ցանկացած եղանակով, որը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ կարող է բացասաբար ազդել վերահսկվող օբյեկտի կամ դրա պաշտոնատար անձի՝ գործունեության նպատակների իրականացման վրա:

5. Ծառայության աշխատակիցներն աշխատանքներն իրականացնելիս պետք է լինեն ազնիվ, բարեխիղճ և պատասխանատու, պետք է գործեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում, չպետք է գիտակցաբար մասնակցեն այնպիսի գործողությունների կամ միջոցառումների, որոնք կարող են վարկաբեկել Ծառայությունը, պետք է հարգեն վերահսկվող օբյեկտի և դրա պաշտոնատար անձի՝ գործունեության իրականացման նպատակները:

#### ԳԼՈՒԽ 4

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԳՐԱՅԹՆԵՐՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### **Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Պետական վերահսկողական ծառայության պաշտոնները, մինչև օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը զբաղեցվում են ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ այլ անձանց կողմից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն):»:

**Հոդված 2.** Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին պարբերությունում, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում, 43-րդ հոդվածի 7-րդ մասում, 46-րդ հոդվածի 2-րդ մասում, 47-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության արդարադատության» բառերը փոխարինել «համապատասխան» բառով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասում «Դատական ակտերի հարկադիր» բառերը փոխարինել «Հարկադիր» բառով».
- 2) 4-րդ մասի 1-ին պարբերությունն ն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը փոխարինել «վարչապետը» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 11. Պաշտոնի նշանակելը հարկադիր կատարման ծառայությունում**

1. Հարկադիր կատարման ծառայությանն անմիջական ղեկավարումն իրականացնում է գլխավոր հարկադիր կատարողը, ~~որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

~~2. Գլխավոր հարկադիր կատարողն ունի տեղակալ, որին գլխավոր հարկադիր կատարողի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~

3.2. Սույն օրենքի 4-րդ հոդվածում նշված ~~մյուս~~ պաշտոններում հարկադիր կատարողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր հարկադիր կատարողը:

4.3. Հարկադիր կատարման ծառայությունում քաղաքացիական ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ~~աշխատակազմի~~ ~~ղեկավարը~~ ~~գլխավոր քարտուղարը՝~~ քաղաքացիական ծառայությունը կանոնակարգող օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան:»:

~~Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասում, 20-րդ հոդվածի վերնագրում և 1-ին պարբերությունում և 29-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության արդարադատության» բառերը փոխարինել «համապատասխան» բառով:~~

**Հոդված 54.** Օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ պարբերությունում, 4-րդ հոդվածի 3-րդ մասում, 9-րդ հոդվածի 1.1-րդ մասում, 10-րդ հոդվածի 1-ին մասում, 12-րդ հոդվածի ~~2-րդ և 5-րդ~~ մասերում, 12.1-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ, 9-րդ և 12-րդ մասում, 13-րդ հոդվածի 7-րդ մասում, 19-րդ հոդվածի 2-րդ մասում, 20-րդ հոդվածի վերնագրում և 1-ին պարբերությունում, 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 14-րդ կետերում, 23-րդ հոդվածի 3-րդ կետում, 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 31-րդ հոդվածի 4-րդ մասում, 32-րդ հոդվածի 8-րդ մասում, 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում, 36-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունում, 40-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում և 50-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության արդարադատության» բառերը փոխարինել «համապատասխան» բառով:

**Հոդված 65.** Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և երկրորդ պարբերության 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համապատասխան նախարարությունը կազմակերպում, վերահսկում և մեթոդական ղեկավարում է իրականացնում հարկադիր կատարման ծառայության գործունեության նկատմամբ:

Համապատասխան նախարարը՝



1) կազմակերպում և վերահսկողություն է իրականացնում հարկադիր կատարման ծառայության գործունեության նկատմամբ.»:

**Հոդված 76.** Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 2-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության Նախագահը» բառերը փոխարինել «վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ» բառերով.

2) 3-րդ պարբերություններում «Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ» բառերը փոխարինել «վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ » բառերով:

**Հոդված 87.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին -պարբերությունն ուժը կորցրած ճանաչելի շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«2. Քրեակատարողական ծառայությունը նախարարությանը ենթակա մարմին է:»:~~

2) 5-րդ մասում «Հայաստանի Հանրապետության արդարադատության» բառերը փոխարինել «համապատասխան» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբում.

1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինն ապահովում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված խնդիրների իրականացումը իր կառուցվածքային ստորաբաժանումների և քրեակատարողական հիմնարկների միջոցով:»:

1) 3-րդ և 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչելի.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քրեակատարողական ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է քրեակատարողական ծառայության պետը:»:

~~1) 8-րդ մասից հանել «կենտրոնական մարմին» բառերը:»:~~

~~«Հոդված 6. Քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանումը~~

~~1. Քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանումը քրեակատարողական ծառայության կառուցվածքային ստորաբաժանում է և գործում է քրեակատարողական ծառայության պետի անմիջական ղեկավարությամբ:~~

~~2. Քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանումն իրականացնում է արագ արձագանքման աշխատանքներ՝ քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներ առաջանալիս ներքին կանոնակարգի խախտումները վերացնելու նպատակով, ինչպես նաև աջակցում է քրեակատարողական հիմնարկների արտաքին պահպանության, ներքին կանոնակարգի պահպանմանն ուղղված գործառույթների և ազատությունից զրկելու ձևով պատիժ կրող դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումների իրականացմանը:»:~~

**Հոդված 3.** Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 9. Քրեակատարողական ծառայության պաշտոնները և քրեակատարողական ծառայության պաշտոնների անվանացանկը**

1. Քրեակատարողական ծառայության պաշտոնները աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, դասակարգվում են ըստ բարձրագույն, գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի: Յուրաքանչյուր խմբի պաշտոնները նույնպես դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր: Նույն աստիճանի պաշտոնները բերված են ստորև՝ նույն տողում՝

1) քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության պետ,

բ. քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ,

  - 4) դիվանագիտական հարաբերությունների հաստատման հորեղանակն տարեդարձի առթիվ՝ առաջինը՝ 5-րդ տարում, այնուհետև՝ յուրաքանչյուր 5-րդ կամ 10-րդ տարում,
  - 5) այլ առիթներով:
2. Ամանորի շնորհավորական հեռագրերը և ուղերձները կարող են փոխանցվել սեփական հայեցողությամբ և ի պատասխան ստացված շնորհավորանքների
3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ուղերձներ և հեռագրեր ուղարկելու առաջարկությունը և դրանց նախագծերը ներկայացնում է արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը:

## **Հոդված 7. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները և բանակցությունները**

1. ~~Պետական մարմինների ներկայացուցիչների~~ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները և բանակցությունները, ~~որպես կանոն,~~ կազմակերպվում են Պետական արարողակարգի ծառայության միջոցով:

2. Գործադիր իշխանության մարմինների ~~ներկայացուցիչները~~ բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ Կառավարության կողմից սահմանված կարգով, ինչպես նաև Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմերի ղեկավարները՝ այդ մարմինների ղեկավարների կողմից սահմանված կարգով, 15-օրյա ժամկետում արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմին են ներկայացնում այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կայացած իրենց հանդիպումների և բանակցությունների մասին ամփոփ տեղեկատվություն:

**ԳԼՈՒԽ 4**

**ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Հոդված 8. Բարձրաստիճան պատվիրակությունների այցելությունների և դրանց հետ կապված միջոցառումների ֆինանսավորման կարգը**

1. Բարձրաստիճան պատվիրակությունների [այցելությունների Հայաստանի Հանրապետություն այցերի](#) հետ կապված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցներից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծախսերը ներառում են բարձրաստիճան պատվիրակությունների՝ օդանավակայանում դիմավորելու, սպասարկելու, ճանապարհելու, կեցության, տրանսպորտային և կազմակերպատեխնիկական ապահովման ծախսերը:

3. Բարձրաստիճան պատվիրակությունների [այցելությունների Հայաստանի Հանրապետություն այցերի](#) և դրանց հետ կապված միջոցառումների ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ ձևաչափով.

օտարերկրյա պետության կամ կառավարության ղեկավարի պետական այց՝	ղեկավար (ամուսին) և մինչև 10 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության, կառավարության և խորհրդարանի ղեկավարի պաշտոնական այց	ղեկավար (ամուսին) և մինչև 8 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության, կառավարության և խորհրդարանի ղեկավարի աշխատանքային այց	ղեկավար (ամուսին) և մինչև 6 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարի պաշտոնական այց	ղեկավար և մինչև 4 ուղեկցող անձ
օտարերկրյա պետության արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարի աշխատանքային այց	ղեկավար և մինչև 2 ուղեկցող անձ
միջազգային կազմակերպության ղեկավարի այց	ղեկավար և մինչև 4 ուղեկցող անձ

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ֆինանսավորման ձևաչափը կարող է փոփոխվել ելնելով փոխադարձության սկզբունքից՝ պետական արարողակարգի ծառայության առաջարկությամբ՝ վարչապետի որոշմամբ:

5. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական արարողակարգի ծառայության կողմից ներկայացված ծախսերի նախահաշվի հիման վրա՝ վարչապետի որոշմամբ:

6. Բարձրաստիճան Օտարերկյա պետությունների բարձրաստիճան պատվիրակությունների այցելությունների Հայաստանի Հանրապետություն այցերի հետ կապված ներկայացուցչական ծախսերը ֆինանսավորվում են Հանրապետության Նախագահի, Կառավարության, Ազգային ժողովի աշխատակազմերի համար նախատեսված միջոցներից:

### **Հոդված 9. Այլ այցելությունների և դրանց հետ կապված միջոցառումների ֆինանսավորման կարգը**

1. Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող միջազգային բնույթի միջոցառումներին մասնակցության նպատակով, ինչպես նաև պետական այլ մարմինների ղեկավարների հրավերով Հայաստանի Հանրապետություն՝ օտարերկյա պատվիրակությունների այցերի հետ կապված ծախսերի ֆինանսավորման ձևաչափը սահմանվում է վարչապետի որոշմամբ և իրականացվում է պետական բյուջեի արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության համար նախատեսված միջոցներից՝ համապատասխան պետական մարմնի կողմից ներկայացված ծախսերի նախահաշվի հիման վրա:

## **ԳԼՈՒԽ 5 ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՎԱԳՈՒԹՅՈՒՆ**

### **Հոդված 10. Արարողակարգային ավագությունը**

1. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է հետևյալ արարողակարգային ավագությունը՝

- 1) Հանրապետության նախագահ.
- 2) վարչապետ.
- 3) Ազգային ժողովի նախագահ.
- 4) Սահմանադրական դատարանի նախագահ.
- 5) ~~Բարձրագույն դատական խորհրդի նախագահ.~~

~~6) առաջին փոխվարչապետ.~~  
~~7) փոխվարչապետներ՝ տվյալ պաշտոնում պաշտոնավարման տևողության հերթականությամբ.~~

~~8) անվտանգության խորհրդի քարտուղար.~~

~~9) Երևանի քաղաքապետ.~~

~~10) անվտանգության խորհրդի անդամներ.~~

~~11) Ազգային ժողովի փոխնախագահներ՝ տվյալ պաշտոնում պաշտոնավարման տևողության հերթականությամբ.~~

~~12) նախարարներ՝ օրենքով սահմանված հերթականությամբ.~~



1312) Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահները ղեկավարներ՝ օրենքով սահմանված հերթականությամբ.

1413) Ազգային ժողովի պատգամավորներ.

1514) Սահմանադրությունում ուղղակիորեն նշված մարմինների ղեկավարներ՝ Սահմանադրությամբ ամրագրված հերթականությամբ.

1615) Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար.

1716) վարչապետի աշխատակազմի ղեկավար.

1817) Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար:

2. Միջոցառումներին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնակցության դեպքում որպես կանոն նա հաջորդում է ավագությամբ առաջին պաշտոնատար անձին:

3. Միջոցառումներին Հանրապետության պաշտոնաթող նախագահի և այլ հատուկ հյուրերի մասնակցության դեպքում նրանց արարողակարգային ավագությունը որոշվում է պետական արարողակարգի ծառայության ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր միջոցառման համար առանձին:

4. Օտարերկրյա պետություններ այցերի ժամանակ այդ պետությունում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելության ղեկավարը ավագությամբ հաջորդում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի ղեկավարին, եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ից 11-րդ կետերով սահմանված պաշտոնատար այլ անձինք չեն մասնակցում միջոցառմանը:

5. Պետական կառավարման համակարգի լիազոր մարմինների կողմից անցկացվող միջոցառումների ժամանակ հիմնական հյուրից հետո տվյալ մարմնի ղեկավարն ավագությամբ երկրորդն է:

## ԳԼՈՒԽ 6

### ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

#### Հոդված 11. Պետական արարողակարգային ընթացակարգերը

1. Օտարերկրյա պետության ղեկավարի այցի ընթացքում նախատեսվում է զրույց Հանրապետության Նախագահի հետ, այցելություն Ազգային ժողով և բանակցություններ վարչապետի հետ:

2. Օտարերկրյա կառավարության ղեկավարի պետական կամ պաշտոնական այցի ընթացքում նախատեսվում են զրույց Հանրապետության նախագահի հետ, բանակցություններ վարչապետի հետ և այցելություն Ազգային ժողով:

3. Օտարերկրյա պետության խորհրդարանի ղեկավարի այցի ընթացքում նախատեսվում է զրույց Հանրապետության նախագահի հետ, բանակցություններ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում և ըստ անհրաժեշտության՝ հանդիպում Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:

4. Հայաստանի Հանրապետություն պետական այցերի ժամանակ՝ Հանրապետության նախագահի անունից տրվող ~~պետական~~ պաշտոնական ճաշին նախատեսվում է վարչապետի, Ազգային ժողովի նախագահի և Հանրապետության նախագահի կողմից հրավիրված այլ պաշտոնատար անձանց մասնակցությունը:

5. Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցերի ժամանակ Հանրապետության Նախագահը մասնակցում է միայն իր անունից տրվող ընդունելություններին:

6. Հայաստանի Հանրապետություն այցելության ընթացքում միջազգային պայմանագրերի ստորագրումը որպես կանոն տեղի է ունենում վարչապետի ներկայությամբ:

7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվո պահակախմբի և զինվորական նվազախմբի մասնակցությամբ պաշտոնական արարողություններն անցկացվում են Հանրապետության նախագահի և վարչապետի մասնակցությամբ միջոցառումներին կամ Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա պետությունների և կառավարությունների ղեկավարների այցելությունների ժամանակ:

8. Պատվո պահակախմբի և զինվորական նվազախմբի մասնակցությամբ ընդունելության կազմակերպման այլ դեպքերը և կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ:

9. Օդային փոխադրամիջոցով Հայաստանի Հանրապետություն այցելող բարձրաստիճան պատվիրակությունների դիմավորման և ճանապարհման արարողակարգային ընթացակարգերը որպես կանոն, տեղի են ունենում նրանց վայրէջքի օդանավակայանում, իսկ վերգետնյա փոխադրամիջոցներով ժամանող պատվիրակություններին՝ նրանց ընդունող պետական մարմնի **ղեկավարի** նստավայրում:

10. ~~Վարչապետը~~ Հանրապետության նախագահը կամ վարչապետը, որպես կանոն դիմավորում և ճանապարհում էն բարձրաստիճան պատվիրակությանը օդանավակայանում, եթե ժամանում է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետության կամ կառավարության ղեկավար, ~~իսկ այլ պետությունների պարագայում օդանավակայանում դիմավորում է ճանապարհում է կառավարության համապատասխան ներկայացուցիչը՝ վարչապետի կողմից սահմանված կարգով, ելնելով փոխադարձության սկզբունքից:~~

11. Բարձրաստիճան պատվիրակությունների՝ Հայաստանի Հանրապետություն պետական և պաշտոնական այցի ծրագրում որպես կանոն ներառվում է Ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցելությունը:

12. Պետական արարողակարգի միջոցառումների հատուկ ամսաթվեր են՝

1) ապրիլի 24՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ անփոփոխ արարողակարգով

2) մայիսի 9՝ հաղթանակի և խաղաղության տոն.

3) մայիսի 28՝ Հանրապետության տոն.

4) սեպտեմբերի 21՝ անկախության տոն՝ անփոփոխ արարողակարգով:

## **Հոդված 12. Պետական արարողակարգի ընթացակարգերի կիրառման առանձնահատկությունները**

1. Հանրապետության նախագահի ներկայությամբ զինվորական պատիվները տրվում են նրան, բացառությամբ, երբ վարչապետն է զինված ուժերի գերագույն հրամանատարը:

2. Բարձրաստիճան պատվիրակությունների՝ վարչապետի հետ հանդիպումների արարողակարգային ընթացակարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

3. Բարձրաստիճան պատվիրակությունների՝ Ազգային ժողով այցելությունների արարողակարգային ընթացակարգերը սահմանվում է Ազգային ժողովի նախագահի կողմից:

4. Օտարերկրյա պետություններ մեկնելուց Հանրապետության նախագահին օդանավակայանում ճանապարհում և դիմավորում են Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի ղեկավարի տեղակալը, պետական արարողակարգի ծառայության ղեկավարը և քաղաքացիական ավիացիայի բնագավառի կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարը:

5. Օտարերկրյա պետություններ մեկնելուց վարչապետին օդանավակայանում ճանապարհում և դիմավորում են անվտանգության խորհրդի անդամները, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, պետական արարողակարգի ծառայության ղեկավարը և քաղաքացիական ավիացիայի բնագավառի կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարը:

6. Օտարերկրյա պետություններ մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների և այցեր նախապատրաստող (առաջավոր) խմբերի կազմում ընդգրկվում են պետական պահպանություն իրականացնող մարմնի աշխատակիցները և որպես կանոն արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի ներկայացուցիչները:

## **Հոդված 13. Պետական խորհրդանիշների օգտագործումը**

1. Արարողակարգային միջոցառումների ժամանակ Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշների՝ պետական դրոշը և օրհներգն օգտագործվում են «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» և «Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

#### **Հողված 14. Հանրապետության նախագահի խորհրդանշանը**

1. Հանրապետության նախագահի խորհրդանշանը փոխանցվում է Հանրապետության նորընտիր նախագահին՝ պաշտոնի ստանձնման արարողության ժամանակ:

#### **ԳԼՈՒԽ 7**

#### **ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Հողված 15. Պետական արարողակարգի ծառայությունը**

1. Պետական արարողակարգն իրականացվում է պետական արարողակարգի ծառայության կողմից:

2. Պետական արարողակարգի ծառայության կարգավիճակը և կազմավորման կարգը սահմանվում է «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով:

3. Պետական արարողակարգի ծառայության ծառայողների ծառայության անցնելու, ծառայության ընթացքի, ծառայությունից ազատվելու հարաբերությունները կարգավորվում են «Դիվանագիտական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով:

#### **ԳԼՈՒԽ 8**

#### **ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Հողված 16. Պետական արարողակարգի ծառայության խնդիրները**

1. Պետական արարողակարգի ծառայության խնդիրներն են՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետությունում միասնական արարողակարգային գործելակերպ՝ համագործակցելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2) լինել մշտական աշխատանքային կապի մեջ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների հետ՝ արարողակարգային հարցերով անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով.

3) պահպանել գործնական կապեր Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ պետական արարողակարգի ծառայության լիազորությունների շրջանակում.

4) ուսումնասիրել միջազգային արարողակարգային գործելակերպը՝ պետական արարողակարգի ծառայության գործունեությունը և գործելակերպը բարելավելու նպատակով:

### **Հոդված 17. Պետական արարողակարգի ծառայության լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ծառայությունը՝

1) աջակցում է Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող պաշտոնական միջոցառումների արարողակարգային ընթացակարգերի նախապատրաստմանն ու իրականացմանը.

2) աջակցում է Հանրապետության նախագահի աշխատակազմի, Կառավարության, Ազգային ժողովի, պետական կառավարման համակարգի մարմինների կողմից Հայաստանի Հանրապետությունում անցկացվող պաշտոնական միջոցառումների նախապատրաստմանն ու իրականացմանը.

3) աջակցում է Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի նախագահի գլխավորած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի արարողակարգային ընթացակարգերի նախապատրաստմանն ու իրականացմանը.

4) աջակցում է Կառավարության անդամների ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի արարողակարգային ընթացակարգերի իրականացմանը.

5) աջակցում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի արարողակարգային ընթացակարգերի իրականացմանը.

6) նախապատրաստում ու իրականացում է Հայաստանի Հանրապետություն բարձրաստիճան պատվիրակությունների այցերի հետ կապված արարողակարգային ընթացակարգերը.

7) աջակցում է օտարերկրյա պետությունների կառավարությունների, խորհրդարանների, պետական այլ մարմինների պաշտոնական պատվիրակությունների, Հայաստանի Հանրապետություն այցերի հետ կապված արարողակարգային միջոցառումների նախապատրաստմանն ու իրականացմանը.

8) ըստ անհրաժեշտության աջակցում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հրավերով Հայաստանի Հանրապետություն ժամանող պատվիրակությունների և այդ մարմինների ղեկավարների օտարերկրյա պետություններ այցերի հետ կապված արարողակարգային ընթացակարգերի և միջոցառումների նախապատրաստմանը և իրականացմանը.

9) ըստ անհրաժեշտության աջակցում է Սահմանադրությունում ուղղակիորեն նշված մարմինների ղեկավարների հրավերով Հայաստանի Հանրապետություն

ժամանոց պատվիրակությունների և այդ մարմինների ղեկավարների օտարերկրյա պետություններ այցերի հետ կապված արարողակարգային ընթացակարգերի և միջոցառումների նախապատրաստմանը և իրականացմանը.

10) կազմակերպում է օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, ռազմական կցորդների և միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների հավատարմագրման, պարտականությունների ստանձնման և առաքելության ավարտի հետ կապված դիվանագիտական արարողակարգային ընթացակարգերը.

11) ապահովում է դիվանագիտական անձնակազմի մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում անցկացվող պաշտոնական միջոցառումներին.

12) նախապատրաստում և իրականացում է հատուկ դիվանագիտական առաքելությունների, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների Հայաստանի Հանրապետություն այցերի հետ կապված արարողակարգային ընթացակարգերը.

13) ապահովում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, ռազմական կցորդների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների ղեկավարների և դիվանագիտական անձնակազմի հավատարմագրման, պարտականությունների ստանձնման և առաքելության ավարտի հետ կապված դիվանագիտական արարողակարգային ընթացակարգերը.

14) հետևում է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև դիվանագիտական անձնակազմի կողմից դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիաների դրույթների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահպանմանը.

15) իրականացնում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ դիվանագիտական արարողակարգային գրագրություն, նրանց բնականոն գործունեության ապահովման ուղղված ընթացիկ աշխատանքներ և անհրաժեշտ միջոցառումներ.

16) կազմակերպում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ներկայացուցիչների պաշտոնական, աշխատանքային և արարողակարգային հանդիպումները.

17) մշակում և սահմանված կարգով [համապատասխան նախարարի կառավարություն](#) է ներկայացնում արարողակարգային միջոցառումների ընթացակարգերը և ծիսակարգերը, ներառյալ Հայաստանի Հանրապետության

Անկախության տոնի, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա, Հանրապետության տոնի և Հաղթանակի և խաղաղության տոնի և այլ միջոցառումների կազմակերպման նպատակով, եթե այդ միջոցառումների իրականացման համար հատուկ պետական հանձնաժողով չի ստեղծվում:

18) իրականացնում է աշխատանքներ Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններին և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններին սույն օրենքի պահանջներին և Հայաստանի Հանրապետությունում գործող արարողակարգային կանոններին ծանոթացնելու նպատակով.

2. Սույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս Պետական արարողակարգի ծառայությունն անմիջականորեն համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց իրավասու ստորաբաժանումների կամ պաշտոնատար անձանց հետ:

## ԳԼՈՒԽ 9

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի» բառերը փոխարինել «Միգրացիոն ծառայության» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «անվտանգության հարցերով» բառերից հետո «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի պետական մարմնի» բառերը» փոխարինել «Ազգային անվտանգության ծառայության» բառերով, իսկ «հանցավորության և հակաիրավական ոտնձգությունների դեմ պայքարի և հասարակական կարգի պահպանման հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի (այսուհետ՝ Ոստիկանություն)» բառերը փոխարինել «Ոստիկանության» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացիներ) ապաստանի տրամադրման, փախստականի ճանաչման, ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչվածների իրավունքների իրացման և սույն օրենքով սահմանված այլ իրավահարաբերությունների հարցերով իրավասու պետական մարմիններն են՝

- 1) Կառավարությունը.
- 2) լիազոր մարմինը.



3) Ազգային անվտանգության ծառայությունը, ~~այդ թվում՝ Սահմանապահ գործերը,~~

4) Ոստիկանությունը.

5) արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմինը (այսուհետ՝ Արտաքին գործերով լիազոր մարմին).

6) աշխատանքի և սոցիալական հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմին).

7) կրթության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Կրթության հարցերով լիազոր մարմին).

8) առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Առողջապահության հարցերով լիազոր մարմին).

9) խնամակալության և հոգաբարձության մարմինները (այսուհետ՝ խնամակալության մարմիններ).

10) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (այսուհետ՝ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները).

11) այլ իրավասու պետական մարմինները (այսուհետ՝ այլ մարմիններ):»:

**Հոդված 4.** Օրենքի 34-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**Հոդված 34. Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը**

1. Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նախարարությանը ենթակա Միգրացիոն ծառայությունն է (այսուհետ՝ լիազոր մարմին):

2. Լիազոր մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է ծառայության պետը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

3. Լիազոր մարմնի ղեկավարն ունի տեղակալ, որին լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան նախարարը:

4. Լիազոր մարմինը՝

1) քննարկում է օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման մասին դիմումները, նրանց տրամադրում է իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակություն.

2) իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների կենտրոնացված հաշվառում, պահում է տեղեկատվական բանկ և իրականացնում է այդ բանկի մշտական թարմացումը.

3) իրականացնում է ապաստանի ~~հայցին~~ դիմումին առնչվող՝ սույն օրենքով սահմանված ընթացակարգերը և ունի դրանց վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու բացառիկ իրավասություն.

4) դիմում է Ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետություն անօրինական մուտք գործած ապաստան հայցողների՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար հնարավոր վտանգ ներկայացնելու մասին եզրակացություն տալու, ինչպես նաև սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փախստականի կարգավիճակի բացառման հիմքերի կիրառմանն առնչվող փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցով.

5) անհրաժեշտության դեպքում դիմում է Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերով լիազոր մարմիններ, ինչպես նաև Ոստիկանություն՝ ապաստան հայցողների ինքնությունը պարզելու գործում աջակցելու հարցով.

6) սույն օրենքով սահմանված կարգով ապաստանի դիմումների վերաբերյալ ընդունված վերջնական որոշումների մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ոստիկանությանը.

7) իր իրավասությամբ անունների լիարժեք իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացածների իրավունքների իրացման հարցերով համագործակցում է սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պետական մարմինների և ՄԱԿ ՓԳՀ-ի հետ.

8) ՄԱԿ ՓԳՀ-ին է տրամադրում փախստականների և ապաստանի հարցերին վերաբերող ամբողջական տեղեկատվություն, ներառյալ՝ ընդհանուր վիճակագրական

բնույթի տեղեկություններ, ինչպես նաև հաշվառման վերցված ապաստան հայցողների և փախստականների անվանական ցուցակները, ապաստան հայցողների և փախստականների անձնական գործերը՝ նրանց համաձայնությամբ.

9) առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների կողմից ապաստանի տրամադրման դիմում ներկայացնելուն պես դիմում է Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմին, անհրաժեշտության դեպքում՝ Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժիններ՝ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս և հաշմանդամ ապաստան հայցողների տեղավորումն ու խնամքը կազմակերպելու հարցով.

10) իրականացնում է փախստականի կարգավիճակ ստացած անձանց հասարակության մեջ ինտեգրմանն ուղղված միջոցառումներ (լեզվի և քաղաքացիական կողմնորոշման դասընթացներ, առօրյա կյանքին վերաբերող տեղեկությունների տրամադրում, հանրային կյանքին մասնակցություն և այլն).

11) աջակցում է ապաստանի հարցերին առնչվող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների աշխատողների համար անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը.

12) առաջարկություններ է ներկայացնում հանրապետության բնակչության վերաբնակեցման, բնակչության ժողովրդագրական իրավիճակի բարելավման վերաբերյալ.

13) իրականացնում է ծրագրեր 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականներին մշտական կացարանով ապահովելու նպատակով.

14) աջակցում է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականներին Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման, կրթական, առողջապահական, իրավական օգնության և այլ հարցերում.

15) մասնակցում է միգրացիոն գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակմանը.

16) իր իրավասությամբ սահմաններում մասնակցում է անօրինական միգրացիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներին:»:-

~~17) իրականացնում է սույն օրենքով ու այլ օրենքներով սահմանված լիազորություններ:~~

**Հոդված 5.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կառավարություն» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ**  
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 12-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմին» բառերը փոխարինել «նախարարությանը ենթակա մարմին» բառերով:

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին հոդվածով.

**«Հոդված 1.1. Ջրային համակարգերի կառավարման մարմինը**

1. Ջրային համակարգերի կառավարման մարմինը նախարարությանը ենթակա Ջրային կոմիտեն է ~~(այսուհետ՝ կոմիտե)~~:

2. ~~Կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

3. ~~Կոմիտեի նախագահն ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:»:~~

**Հոդված 3.** Օրենսգրքի 3-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝

«Կառավարությունը մշակում է ջրային համակարգերի ներդրումային քաղաքականությունը»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 12-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 12. Ջրային համակարգերի կառավարման մարմնի լիազորությունները»

1) 2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) մասնակցում է ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակման աշխատանքներին և ապահովում է դրա իրականացումը, ինչպես նաև կազմակերպում է ներդրումային ծրագրերի փորձաքննությունը.».

2)3)7-րդ կետում «կառավարության կողմից նախատեսված լինելու դեպքում» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված դեպքերում» բառերով.

3)4)1) Էրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետեր.

«15) վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան իրականացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարչական վարույթ.

16) սահմանում է ջրային հողերի ու դրանց ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումներ և նորմեր.

17) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ներդնում է համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվություններ (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարում է վարչական վիճակագրական ռեգիստրներ.

~~18) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~»:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-ին և 15.2-րդ հոդվածներով.

**«Հոդված 15.1. Գիտության կոմիտեն»**

~~1. Գիտության կոմիտեն նախարարությանը ենթակա մարմին է:~~

~~2.1. \_\_\_ Գիտության կոմիտեն ղեկավարում է գիտության կոմիտեի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

~~3. Գիտության կոմիտեի նախագահին ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~

~~4.2. \_\_\_ Գիտության կոմիտեն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝~~

1) մասնակցում է գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականություն մշակմանը, ու մշակում և համապատասխան նախարարին է ներկայացնում գիտության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի ~~մշակում~~.

2) մշակում է գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի ~~մշակում~~.

3) մշակում է գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային, ինչպես նաև միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրեր և ի մշակում ու դրանց կազմակերպում է դրանց իրականացումը և կազմակերպում.

4) մշակում է գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի

~~մշակում~~, գիտական կադրերի պատրաստման նպատակով իրականացնում է ուսումնասիրությունների ~~իրականացում~~ և ներկայացնում է առաջարկություններ պետական պատվերի ձևավորման վերաբերյալ ~~առաջարկությունների ներկայացում~~.

5) մշակում է առաջարկություններ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ ~~առաջարկությունների մշակում~~.

6) մշակում և համապատասխան նախարարին է ներկայացնում գիտական և գիտատեխնիկական փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) բնագավառի իրավական ակտերի նախագծերի ~~մշակում~~.

7) սահմանում է փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջները ~~ի սահմանում~~.

8) մշակում է փորձաքննության բնագավառում պետական հավատարմագրման ~~կարգի կարգը~~ և չափանիշները ~~ի մշակում~~.

9) մշակում և հաստատում է պետական փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերը ~~ի մշակում ու հաստատում~~.

10) փորձաքննության բնագավառում կնքում է միջազգային համագործակցության պայմանագրերի ~~կնքում~~.

~~11) մասնակցություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ իր իրավասության սահմաններում.~~

~~121) կազմակերպում է~~ գիտության և արտադրության ինտեգրմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը ~~ի մշակում և կազմակերպում~~.

~~1312) սահմանված կարգով մասնակցում է~~ գիտության բնագավառի հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը ~~սահմանված կարգով մասնակցություն~~.

~~1413) մշակում և իրականացնում է~~ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներուժի համախմբմանն ուղղված ծրագրերի ~~մշակում և իրականացում~~.

~~1514) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով~~ իրականացնում է համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և, դրանց



միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարում.

1615) կազմակերպում է ռազմատեխնիկական ծրագրերի մշակումը~~է~~, փորձաքննության և իրականացման մոնիթորինգի կազմակերպումը՝ Ռազմարդյունաբերական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների հետ համատեղ.

1716) իրականացնում է գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, գիտաչափական վերլուծություն, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորում և վարում.

1817) իր իրավասության սահմաններում իրականացնում է գիտության բնագավառի բյուջետային գործընթացը ~~ի-իրականացում~~.

~~19) օրենքներով սահմանված այլ լիազորություններ:»:~~

## **Հոդված 15.2. Բարձրագույն որակավորման հանձնաժողովը կոմիտեն**

1. Բարձրագույն որակավորման ~~հանձնաժողովը—կոմիտեն նախարարությանը ենթակա մարմին է, որն~~ ապահովում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը և դրանց աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև գիտական աստիճանաշնորհման համակարգի պետական չափանիշների մշակումը:

2. Բարձրագույն որակավորման կոմիտեն հանձնաժողովը ղեկավարում է ~~կոմիտեի հանձնաժողովի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

~~3. Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահին ունի տեղակալ, որին հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~

### **4.3. Բարձրագույն որակավորման կոմիտեն հանձնաժողովը՝**

1) կազմում և համապատասխան նախարարի հաստատմանն է ներկայացնում այն գիտական մասնագիտությունների անվանացանկը, որոնց գծով շնորհվում են գիտական աստիճաններ և գիտական կոչումներ.

2) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական աստիճանները՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը.

3) հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է գիտական կոչումները՝ հիմք ընդունելով բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհուրդների որոշումներն ու գործի ուսումնասիրությունը.

4) նախկին ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրերի հիման վրա հանձնում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրեր.

5) համապատասխան նախարարին ներկայացնում է եզրակացություն օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի վկայագիրը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրին համապատասխանեցնելու մասին.

6) համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ.

7) կազմակերպում է ատենախոսությունների և սեղմագրերի պահպանումը.

~~8) կազմակերպում է տեղեկագրերի հրատարակումը:~~

~~9)8) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:~~

**Հոդված 2.** Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերում «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը» բառերը փոխարինել «Բարձրագույն որակավորման կոմիտեն հանձնաժողովը» բառով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՔԸ****«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ****ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-81-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 3-րդ մասում «7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պետական կառավարման լիազորված մարմնի հետ» բառերը փոխարինել «7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պետական կառավարման մարմնի հետ» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 5. Ավիացիայի տեսակները**

1. Ավիացիայի տեսակներն են քաղաքացիական ավիացիան և պետական ավիացիան:

2. Քաղաքացիական ավիացիան ներառում է առևտրային ավիացիան և ընդհանուր նշանակության ավիացիան:

3. Առևտրային ավիացիան առևտրային օդային փոխադրումների համար օգտագործվող ավիացիան է, որը նախատեսված է վճարմամբ կամ վարձակալմամբ ուղևորների, բեռի և փոստի կանոնավոր և ոչ կանոնավոր առևտրային փոխադրումների համար:

4. Կանոնավոր առևտրային փոխադրումները հրապարակված չվացուցակի համաձայն կամ չվերթների համակարգված շարք կազմող հաճախականությամբ կամ կանոնավորությամբ և վճարի դիմաց իրականացվող չվերթներն են, որոնք բաց են հասարակության կողմից ուղղակի ամրագրման համար՝ ներառյալ կանոնավոր չվերթների հետ կապված ուղևորահոսքի կամ փոխադրաբեռի գերազանցված ծավալների փոխադրման համար հավելյալ չվերթները:

5. Ոչ կանոնավոր առևտրային փոխադրումները ներառում են առևտրային պատվերով փոխադրումը, որը ներառում է օդային տաքսի ծառայությունը և գործարարական ավիացիան:

6. Ընդհանուր նշանակության ավիացիան ներառում է՝

1) ոչ առևտրային գործարարական ավիացիա.

2) ուսումնական թռիչքների համար օգտագործվող ավիացիա.

3) անձնական թռիչքներ.

4) հատուկ ավիացիոն աշխատանքներ իրականացնող ավիացիա, ներառյալ՝ գյուղատնտեսական, շինարարական, հետազոտական, նկարահանման, ուսումնասիրության, գովազդային և այլ հատուկ բնույթի ծառայությունների համար օգտագործվող ավիացիա:

7. Ընդհանուր նշանակության ավիացիայի թռիչքները կարող են իրականացվել վճարի դիմաց:»:

**Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 7. Ավիացիայի և օդային տրանսպորտի պետական կառավարումը**

1. Հայաստանի Հանրապետությունում ավիացիայի (բացառությամբ ռազմականի) բնագավառի քաղաքականությունը մշակում և իրականացնում է համապատասխան նախարարությունը:

2. Օդային տրանսպորտի բնագավառի կանոնակարգման, քաղաքացիական ավիացիայի և ոչ ռազմական պետական ավիացիայի գործունեության, օդային երթևեկության սպասարկման, ավիացիոն անվտանգության, թռիչքային անվտանգության, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգման, ավիացիոն ծառայությունների և Հայաստանի Հանրապետությունում գործող ավիացիոն ենթակառուցվածքների վերահսկողության իրականացման ոլորտում նախարարությանը ենթակա պետական կառավարման մարմինը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե):

3. Կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, ~~որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը: Կոմիտեի~~

նախագահին ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

4. Կոմիտեն ի լիազորություններն են՝

1) իրականացնում է ներքին և միջազգային օդային հաղորդակցությունների իրավունքների և այդ իրավունքներին վերաբերող միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող միջազգային պայմանագրերի նախապատրաստումը, քննարկումը, բանակցությունների վարումը<sup>2</sup>:

2) վերահսկողություն է իրականացնում սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով<sup>2</sup>:

3) մշակում և համապատասխան նախարարին է ներկայացնում քաղաքացիական ավիացիայի բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների և միջազգային ավիացիոն կազմակերպությունների հրապարակած փաստաթղթերի դրույթների կատարումն ապահովող կանոնակարգերը~~ի մշակումը, հաստատումը կամ կառավարության հաստատմանը ներկայացնելը, իրականացնում է~~ դրանց ներդնումը, համաձայնեցնելով դրանք պաշտպանության բնագավառի պետական կառավարման մարմնի հետ, եթե դրանք առնչվում են կամ կարող են անդրադառնալ ռազմական ավիացիայի խնդիրներին՝ ~~համաձայնեցնելով դրանք պաշտպանության բնագավառի պետական կառավարման մարմնի հետ~~<sup>2</sup>:

4) սույն օրենքի համաձայն տրամադրում է առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրեր և թույլտվություններ ավիացիայի համակարգում առևտրային գործունեություն իրականացնելու համար ~~սույն օրենքի համաձայն առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրի և թույլտվությունների տրամադրումը~~<sup>2</sup>:

5) իրականացնում է օդային փոխադրումների քաղաքականության ընթացքի, զարգացման և հեռանկարային միտումների ուսումնասիրությունը և, վերլուծությունը ~~և իրականացումը~~<sup>2</sup>:

6) վարում է քաղաքացիական ավիացիայի բնագավառում վարչական վիճակագրական ռեգիստրը-վարումը։

7) սահմանում է քաղաքացիական ավիացիայի գործունեության, ներառյալ՝ օդանավակայանային գործունեության և աերոնավիգացիոն սպասարկման, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների թռիչքային ու ավիացիոն անվտանգության պահանջները սահմանումը, կանոնակարգումը և վերահսկողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով։

8) մշակում և համապատասխան նախարարին է ներկայացնում ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի և ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիրը-մշակումը և Կառավարության քննարկմանը ներկայացնելը։

9) մշակում և հաստատում է քաղաքացիական ավիացիայի տնտեսական գործունեության վերաբերյալ պահանջները-մշակումը, հաստատումը։

10) ներդնում և վարում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն անվտանգության ազգային ծրագիրը ներդնումը և վարումը, այդ նպատակով մշակում և համապատասխան նախարարին է ներկայացնում ծրագիրը-մշակումը և Կառավարության քննարկմանը ներկայացնելը։

11) ներդնում և վարում է Հայաստանի Հանրապետության թռիչքային անվտանգության պետական ծրագիրը ներդնումը և վարումը, այդ նպատակով ծրագրի-մշակումը և Կառավարության քննարկմանը ներկայացնելը համապատասխան նախարարին է ներկայացնում ծրագիրը՝ հիմքում ունենալով ԻԿԱՕ-ի կողմից կատարվող փոփոխությունները (հավելված 19 և այլն)։

12) սահմանում է օդանավով փոխադրվող բեռի, փոստի, սուրհանդակային և շտապ առաքումների նկատմամբ անվտանգության վերահսկողություն իրականացնելու թույլտվություն տալու կարգի սահմանումը, օդանավով փոխադրվող բեռի, փոստի, սուրհանդակային և շտապ առաքումների նկատմամբ անվտանգության

վերահսկողության և փոխադրման սպասարկման իրականացման նպատակով գրանցված գործակալի թույլտվություն տալու կարգերի սահմանումը:

13) սահմանում է ուսումնական և հատուկ բնույթի որոշակի թռիչքների իրականացման նպատակով լրացուցիչ պայմաններ և պահանջներ պարունակող հատուկ կարգերի ~~սահմանումը~~:

14) սահմանում է քաղաքացիական ավիացիայի բնագավառում գործող կազմակերպությունների համար պարտադիր կիրառման ենթակա հաղորդագրությունների ձևերի ~~և~~ ու ցանկի, ինչպես նաև դրանց կիրառման կարգի ~~սահմանումը~~:

15) սահմանում է ԻԿԱՕ-ի և (կամ) քաղաքացիական ավիացիայի միջազգային այլ կազմակերպությունների սահմանած պահանջներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիցենզիա ունեցող մասնագիտացված ավիացիոն ուսումնական և բժշկական հաստատությունների համապատասխանության ուսումնասիրությունների և վկայականների տրամադրման կարգի ~~սահմանումը~~:

16) սահմանում է օտարերկրյա մասնագիտացված ավիացիոն ուսումնական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերի ուսումնասիրությունների և ճանաչման կարգի ~~սահմանումը~~:

~~17) Հայաստանի Հանրապետության թռիչքային անվտանգության պետական ծրագրի ներդնումը և վարումը: Այդ նպատակով թռիչքային անվտանգության պետական ծրագրի մշակումը և Կառավարության քննարկմանը ներկայացնելը՝ հիմք ընդունելով Չիկագոյի կոնվենցիայի հավելված 19-ը և դրանում կատարվող փոփոխությունները:~~

18)17) – սույն օրենքի համաձայն վերահսկողություն է իրականացնում՝ քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող անձանց, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ու դրանց որակի, թռիչքային և ավիացիոն անվտանգության վերահսկողության իրականացումը նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԻԿԱՕ-ի և Հայաստանի Հանրապետության անդամակցած միջազգային այլ

կազմակերպությունների ապահովության և անվտանգության գործող պահանջներին դրանց շարունակական համապատասխանությունն ապահովելու նպատակով<sup>17</sup>։

19)18) սույն օրենքի համաձայն տրամադրում է<sup>18</sup>՝ ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, վկայականների և թույլտվությունների ~~տրամադրումը~~—և դադարեցնում է դրանց գործողությունը<sup>19</sup> դադարեցումը՝ անհրաժեշտության դեպքում փորձագետների և մասնագետների ներգրավմամբ<sup>20</sup>։

20)19) իր սահմանած կարգով

ա. կատարում է ԻԿԱՕ-ի և (կամ) քաղաքացիական ավիացիայի միջազգային այլ կազմակերպությունների սահմանած պահանջներին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիցենզիա ունեցող մասնագիտացված ավիացիոն ուսումնական և բժշկական հաստատությունների համապատասխանության ուսումնասիրությունները և տրամադրում է վկայականների ~~տրամադրումը~~։

բ. իրականացնում է օտարերկրյա մասնագիտացված ավիացիոն ուսումնական հաստատությունների կողմից տրված փաստաթղթերի ուսումնասիրությունները և ճանաչումը<sup>21</sup>։

21)20) իրականացնում է քաղաքացիական ավիացիայի բնագավառում ավիացիոն միջադեպերի մասնագիտական քննությունը, թռիչքային անվտանգության (ապահովության) հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա միջադեպերի և պատահարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրումը<sup>22</sup>։

22)21) օդանավերի երկրորդային հետևանքներ չառաջացրած աղետների դեպքում համակարգում է որոնողափրկարարական աշխատանքները և համակարգումը<sup>23</sup>։

23)22) քաղաքացիական ավիացիայի թռիչքային և ավիացիոն անվտանգության սահմանված կանոնների խախտման համար պատասխանատու անձանց օրենքով սահմանված կարգով ենթարկում է վարչական պատասխանատվության ~~ենթարկելը~~։

24)23) ներկայացնում է Կառավարությանը քաղաքացիական ավիացիայի բնագավառում թռիչքային և ավիացիոն անվտանգության, ինչպես նաև աերոնավիգացիոն սպասարկման հետ կապված հարցերով քաղաքացիական



ավիացիայի միջազգային կազմակերպություններում ~~կառավարությանը ներկայացնելը~~։

25)24) հաստատում է օդանավակայանների և օդանավ շահագործող կազմակերպությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը ~~ի հաստատումը~~։

26)25) տրամադրում է թույլտվություններ վտանգավոր բեռների սպասարկման աշխատանքներն իրականացնող կազմակերպություններին և վտանգավոր բեռների օդային փոխադրումների սպասարկումն իրականացնող կազմակերպություններին ~~թույլտվություններ տրամադրելը~~։

27)26) տրամադրում է վկայականներ ավիացիոն մասնագետներին (թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական, օդային երթևեկության կարգավարների կազմին) ~~վկայականների հատկացումը, երկարաձգում, կասեցնում և դադարեցնում է դրանց վկայականների~~ գործողության ժամկետները ~~ի երկարաձգումը, կասեցումը և դադարեցումը~~։

28)27) իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածք թռիչքներ իրականացնող այլ պետությունների օդանավերի ստուգումների ~~անցկացումը~~։

29)28) հսկողություն իրականացնելու նպատակով ապահովում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավ շահագործող կազմակերպությունների թռիչքներին կոմիտեի համապատասխան մասնագետների և ներկայացուցիչների մասնակցությունը ~~ան ապահովում~~։

30) ~~որենքով սահմանված այլ լիազորություններ~~։

6. Սույն օրենքի համաձայն՝ քաղաքացիական ավիացիայի բնագավառի գործունեության պետական կառավարումն իրականացնելիս համապատասխան կանոններ, կարգեր, հրահանգներ, կանոնակարգեր ու այլ իրավական ակտեր մշակելու և ընդունելու՝ Կոմիտեի լիազորությունները հավասարապես տարածվում են նաև քաղաքացիական ավիացիայի բաղկացուցիչների՝ առևտրային օդային փոխադրումների, ընդհանուր նշանակության ավիացիայի գործունեության, ավիացիոն հատուկ աշխատանքների և պետական ոչ ռազմական ավիացիայի նկատմամբ։

7. Կոմիտեի ~~ի~~ կողմից իրականացվող ծրագրերի ու ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին։ Կոմիտեն ունի արտաբյուջետային հաշիվ, որի միջոցները գոյանում են

Կառավարության սահմանած աղբյուրներից՝ Կառավարության որոշմամբ: Կոմիտեն արտաբյուջետային միջոցների ծախսման հիմնական ուղղություններն են թռիչքային և (կամ) ավիացիոն անվտանգության ապահովման վերահսկողությունը, կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը, Կոմիտեի աշխատակիցների պարզևատրումը (այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների), ինչպես նաև սույն օրենքով նախատեսված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ ծախսեր:

8. Կոմիտեն իր լիազորությունների իրականացման նպատակով՝

~~1) ընդունում է նորմատիվ իրավական ակտեր, եթե դրանք բխում են Հայաստանի Հանրապետության օրենքներով իրեն վերապահված լիազորություններից կամ եթե տվյալ նորմատիվ իրավական ակտի ընդունումը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կամ դրանցից բխող միջազգային ավիացիոն կազմակերպությունների հրատարակած փաստաթղթերի պահանջների կատարմանը՝ Հայաստանի Հանրապետության կողմից:~~

2) ընդունում և ճանաչում է օտարերկրյա պետությունների քաղաքացիական ավիացիայի բնագավառի իրավասու մարմնի (ներառյալ՝ այդ մարմնի կողմից ընտրված գործակալությունների) և միջազգային ավիացիոն կազմակերպությունների տված սերտիֆիկատները, վկայականները, թույլտվություններն ու տեխնիկական եզրակացությունները:

9. Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմինը Կառավարության կողմից լիազորված մարմին է (այսուհետ՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմին), որն իրականացնում է քաղաքացիական ավիացիայում ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննությունը (պատահարների և լուրջ միջադեպերի քննությունը), թռիչքային անվտանգության (ապահովության) հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա պատահարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրումը:

10. Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության բոլոր փուլերի կազմակերպումը, վարումը և վերահսկումը, քննության բոլոր

մասնակիցների գործողությունների համակարգումն իրականացվում է ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմնի կողմից ձևավորված մասնագիտական քննությունն անցկացնող հանձնաժողովի նախագահի կողմից:

11. Ավիացիոն պատահարը օդանավի օգտագործման հետ կապված իրադարձություն է, որը օդանավավարվող օդանավի դեպքում տեղի է ունենում այն պահից սկսած, երբ որևէ անձ թռիչք կատարելու նպատակով բարձրանում է օդանավ՝ մինչև այն պահը, երբ օդանավում գտնվող բոլոր անձինք լքում են օդանավը կամ անօդաչու թռչող սարքի դեպքում տեղի է ունենում այն պահից սկսած, երբ թռիչք կատարելու նպատակով օդանավը պատրաստ է տեղից շարժվել՝ մինչև թռիչքի ավարտին նրա կանգառի պահը և հիմնական ուժային կայանքի անջատումը և որի ընթացքում՝

ա. որևէ անձ ստանում է մահացու ելքով մարմնական վնասվածք կամ Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ հավելվածի իմաստով լուրջ մարմնական վնասվածք տվյալ օդանավում գտնվելու, կամ օդանավի ինչ-որ մասի՝ ներառյալ տվյալ օդանավից անջատված մասի հետ անմիջական շփման, կամ ռեակտիվ շարժիչի գազերի շիթի անմիջական ազդեցության արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մարմնական վնասվածքներն ստացվել են բնական պատճառների արդյունքում, հասցվել է ինքն իրեն կամ հասցվել են ուրիշ անձանց կողմից կամ, երբ մարմնական վնասվածքները հասցվել են անտոմս ուղևորներին, ովքեր թաքնվում են այն գոտուց դուրս, որի մուտքը սովորաբար բաց է ուղևորների և անձնակազմի անդամների համար.

բ. օդանավը ստանում է վնասվածքներ կամ տեղի է ունենում նրա կառուցվածքի ավերում, որի արդյունքում խախտվում է կառուցվածքի ամրությունը, վատանում են օդանավի տեխնիկական և թռիչքային բնութագրերը, և սովորաբար պահանջվում է խոշոր նորոգում կամ վնասված տարրի փոխարինում՝ բացառությամբ շարժիչի խափանման կամ վնասման դեպքերի, երբ վնասվել է միայն մեկ շարժիչը (ներառյալ դրա ծալովի ծածկոցները կամ օժանդակ ագրեգատները), օդային պտուտակները, թևի վերջնամասերը, ալեհավաքները, տվիչները, թիակները, անվադողերը, արգելակման հարմարանքները, անիվները, շրջահոսները, պանելները, շասսիի փեղկերը,

ճակատային ապակիները, օդանավի երեսապատվածքը (օրինակ, ոչ մեծ փոսեր կամ խոցեր), կամ առկա են կրող օդային պտուտակի թիակների, պոչամասի օդային պտուտակի թիակների, շասսիի ոչ նշանակալի վնասվածքներ և վնասվածքներ, որոնք առաջացել են կարկտի կամ թռչունների հետ բախման պատճառով (ներառյալ ռադիոլոկատորի ալեհավաքի շրջահոսի ծակատները) կամ՝

գ. օդանավը կորչում է անհետ կամ հայտնվում է այնպիսի տեղում, ուր դրան մոտենալը բացարձակապես անհնար է:12.Լուրջ միջադեպը իրադարձություն է, որի հանգամանքները ցույց են տալիս օդանավի օգտագործման հետ կապված ավիացիոն պատահարի մեծ հավանականությունը, որն օդանավավարվող օդանավի դեպքում տեղի է ունենում՝ սկսած այն պահից, երբ որևէ անձ թռիչք կատարելու նպատակով բարձրանում է օդանավ՝ մինչև այն պահը, երբ օդանավում գտնվող բոլոր անձինք լքել են օդանավը, կամ անօդաչու թռչող սարքի դեպքում տեղի է ունենում այն պահից սկսած, երբ օդանավը թռիչք կատարելու նպատակով պատրաստ է տեղից պոկվել՝ մինչև թռիչքի ավարտին նրա կանգառը և հիմնական ուժային կայանքի անջատումը:13. Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմնի կամ նրա կողմից ստեղծված պատահարի կամ լուրջ միջադեպի քննության հանձնաժողովի գործունեությունն անկախ է լիազորված մարմնից և այլ մարմիններից, որոնց գործունեությունը կամ շահերը կարող են բախվել ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմնի կամ պատահարի կամ լուրջ միջադեպի քննության հանձնաժողովի գործառույթներին: Իրենց գործառույթներն իրականացնելիս՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմինը կամ պատահարի կամ լուրջ միջադեպի քննության հանձնաժողովը չեն ստանում և չեն ղեկավարվում որևէ այլ մարմնից ստացած ցուցումներով և ունեն Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ հավելվածով սահմանված լիազորություններ քննությունների անցկացման նկատմամբ:Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմինը կամ պատահարի կամ լուրջ միջադեպի քննության հանձնաժողովն իրավունք ունի՝

1) անարգել մուտք գործել պատահարի կամ միջադեպի ենթարկված օդանավ.

2) հետազոտել պատահարի կամ միջադեպի ենթարկված օդանավը, դրա կառուցվածքային մասերը, ներառյալ՝ օդանավային ինքնագրերը և օդային երթևեկության կառավարման ձայնագրությունները, պատահարի կամ միջադեպի ենթարկված օդանավում գտնվող կամ դրսից պատահարի կամ միջադեպի մեջ ներգրավված գույքը՝ անկախ այդ գույքի պատկանելությունից, ինչպես նաև օդանավերի թռիչքների ապահովման միջոցներն ու օբյեկտները և ստանալ անսահմանափակ հսկողություն դրանց նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի անհապաղ իրականացնել մանրամասն հետազոտություններ:

15. Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության լիազորված մարմինը կազմակերպում է օդանավի, նրա մասերի և պատահարի կամ լուրջ միջադեպի վայրի պահպանությունը՝ տվյալ տարածքներ կողմնակի անձանց մուտքն ու հափշտակության դեպքերը կանխելու և օդանավի ու նրա մասերի ֆիզիկական վիճակի վատթարացումը կանխելու նպատակով:

16. Հայաստանի Հանրապետության ավիացիայի (բացառությամբ ռազմականի) բնագավառի օդերևութաբանական ապահովման լիազորված մարմինը ~~Հայաստանի Հանրապետության~~ ~~Հանրապետության~~ ~~կ~~ Կառավարության կողմից քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում (ԻԿԱՕ) նշանակված Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմին է (այսուհետ՝ օդերևութաբանական լիազորված մարմին):»:

#### **Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝**

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային փոխադրումների բնագավառում իրականացվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների որակի շարունակական ապահովման նպատակով կոմիտեն քաղաքացիական ավիացիայի բնագավառում իր իրավասության շրջանակում իրականացնում է պետական վերահսկողություն (այսուհետ՝ վերահսկողություն):

Վերահսկողության նպատակով կոմիտեն իրականացնում է ուսումնասիրություններ և վերահսկողություն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև

ԻԿԱՕ-ի և Հայաստանի Հանրապետության անդամակցած միջազգային այլ կազմակերպությունների կողմից սահմանված՝ քաղաքացիական ավիացիայի թռիչքային և ավիացիոն անվտանգության վերահսկողության ստանդարտների, հարցաշարերի, մեթոդական ձեռնարկների և ուղեցույցների հիման վրա: Վերահսկողությունը կարող է իրականացվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ԻԿԱՕ-ի և Հայաստանի Հանրապետության անդամակցած միջազգային այլ կազմակերպությունների կողմից դրա անցկացման կարգ սահմանված չէ:»:

2) 2-րդ մասում՝

ա. 1-ին պարբերության «լիազորված մարմինների» բառերը փոխարինել «կոմիտեի» բառերով.

բ. 2-րդ պարբերության «լիազորված մարմինների» բառերը փոխարինել «կոմիտեի» բառով, իսկ «, իսկ մաքսային հսկողության գոտիների տարածք՝ մաքսային մարմինների թույլտվությամբ և նրանց հսկողության ներքո» բառերը հանել:»:

**Հոդված 5.** Օրենքում «տեխնիկական կարգավորման լիազորված մարմին» և «քաղաքականության լիազորված մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 6.** Օրենքի 12-րդ, [232](#)-րդ հոդվածներում, 26-րդ հոդվածում «տեսչական ստուգում» և «տեսչական ստուգումներ» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «ստուգում» և «ստուգումներ» բառերով և դրանց հոլովաձևերով:

**Հոդված 7.** Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ

**«Հոդված 25. Թռիչքային պիտանիության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելը կամ դադարեցնելը**

1. Եթե Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավը կամ դրա սարքավորումները չեն սպասարկվում կամ դրանց թռիչքային պիտանիության

պահպանման նկատմամբ վերահսկողությունը չի իրականացվում սահմանված կարգով, օդանավը չի համապատասխանում օդանավի տեսակի գործող հավաստագրին, պարտադիր վերափոխումներն իրականացված չեն, իրականացվել են թռիչքային պիտանիության տեսակետից չարտոնված վերափոխումներ օդանավում կամ դրա սարքավորումներում, ապա օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատը սահմանված կարգով կարող է կասեցվել՝ մինչև կոմիտեի և օդանավ շահագործողի միջև փոխհամաձայնությամբ սահմանված ժամկետում հայտնաբերված թերությունների վերացումը: Օդանավը կրկին կհամարվի թռիչքների համար պիտանի կոմիտեի կողմից օդանավի թռիչքային պիտանիության լրացուցիչ ուսումնասիրությունների կամ ստուգումների դրական արդյունքների դեպքում:

2. Եթե օդանավի թռիչքային պիտանիության ուսումնասիրությունների կամ ստուգումների արդյունքում կամ այլ պատճառներով կոմիտեն եզրակացնում է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավի թռիչքային պիտանիությունը հնարավոր չէ վերականգնել, կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում օդանավ շահագործողը չի վերացրել օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի կասեցման հիմքերը, ապա կոմիտեն դադարեցնում է օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի գործողությունը:

3. Գործողությունը դադարեցված կամ կասեցված թռիչքային պիտանիության սերտիֆիկատը վերադարձվում է կոմիտե: Կասեցման դեպքում սերտիֆիկատը թերությունների վերացումից հետո կրկին տրամադրվում է օդանավ շահագործողին:»:

**Հոդված 8.** Օրենքի 46-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) «լիազորված մարմինների» բառերը փոխարինել «կոմիտեի» բառով.
- 2) «սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում նշված» բառերը փոխարինել «կոմիտեն» բառով.
- 3) «իրավունք ունեն» բառերը փոխարինել «իրավունք ունի» բառերով:

**Հոդված 10.** Օրենքում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կառավարություն» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 11.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-11-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 7. Զբոսաշրջության կոմիտեն**

1. Զբոսաշրջության ոլորտի ~~պետական կարգավորումն իրականացնում քաղաքականությունն իրականացնում է նախարարությանը ենթակա~~ Զբոսաշրջության կոմիտեն (այսուհետ՝ կոմիտեն):

~~2. Կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

~~3.2. Նախագահն ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~

4.3. Կոմիտեն՝

1) մշակում և ~~Կառավարությանն առաջարկություններ է համապատասխան նախարարին է ներկայացնում~~ առաջարկություններ զբոսաշրջության, դրա նյութատեխնիկական և սոցիալական բազայի զարգացման հեռանկարների և ուղղությունների վերաբերյալ.

2) համագործակցում է նախարարությունների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հետ՝ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջիկների ընդունման, սպասարկման, զբոսաշրջային ուղևորությունների կազմակերպման, տեղեկատվական բազայի ձևավորման, զարգացման ծրագրերի մշակման և մարքեթինգի իրականացման ուղղություններում, վարում է զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրությունը.

3) նպաստում է զբոսաշրջային գործունեության վերաբերյալ տեղեկատվական, գովազդային և հրատարակչական գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը.

4) ~~Կառավարությանը~~ համապատասխան նախարարին առաջարկություններ է ներկայացնում զբոսաշրջային տարածաշրջաններ, կենտրոններ, երթուղիներ և օբյեկտներ սահմանելու և դրանք Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման և տարածքային զարգացման ծրագրերում ներառելու վերաբերյալ.

5) աջակցում է զբոսաշրջության ոլորտում ազգային և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը.

6) տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններ է ներկայացնում դրանց տարածքում գտնվող զբոսաշրջային տարածաշրջանների, կենտրոնների և օբյեկտների վերանորոգման, բարեկարգման և պատշաճ վիճակում պահպանման վերաբերյալ.

7) աջակցում է զբոսաշրջության բնագավառում կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և նրանց որակավորման բարձրացմանը, զբոսաշրջության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը.

8) այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում ներկայացնում է Կառավարությունը, մասնակցում է զբոսաշրջության ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգերին.

9) մասնակցում է զբոսաշրջության ոլորտի ռազմավարության, զարգացման պետական ծրագրերի մշակմանը, ապահովում դրանց իրականացումը և մշտադիտարկումը.

10) վարում է զբոսաշրջության ոլորտի վարչական վիճակագրությունը (ռեգիստրը).

11) իրականացնում է զբոսաշրջության ոլորտի քաղաքականության մշակման համար անհրաժեշտ հետազոտություններ և վերլուծություններ.

12) մշակում և համապատասխան նախարարության միջոցով իրավասու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ է

ներկայացնում առաջարկություններ զբոսաշրջության զարգացման հետ կապված վերջիններիս իրավասությունների վերաբերյալ.

13) իրականացնում է սոցիալական փաթեթում ներառված հանգստի ապահովման ծառայության մեջ ընդգրկված զբոսաշրջային օպերատորների հաշվառման գործընթացը.

14) ներկայացնում է զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության վերաբերյալ առաջարկություններ, ապահովում զբոսաշրջության ոլորտում միջազգային համագործակցությունը, ներկայացնում է զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության շահերը միջազգային համագործակցության շրջանակներում.

15) աջակցում է զբոսաշրջության ոլորտում ազգային և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը.

16) մշակում և իրականացնում է ներքին շուկայում ոլորտի կազմակերպությունների ու դրանց միությունների հետ համատեղ ծրագրեր.

17) համագործակցում է պետական և տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ՝ օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներում.

18) համակարգում է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող զբոսաշրջությանն առնչվող աջակցության ծրագրերը կամ ծրագրերի այն մասերը, որոնք պարունակում են զբոսաշրջության բաղադրիչ, ինչպես նաև վերահսկում է դրանց կատարման ընթացքը.

19) ապահովում է համաշխարհային շուկայում Հայաստանի [Հանրապետության](#)՝ որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորումն ու ամրապնդումը.

20) իրականացնում է համաշխարհային շուկայում Հայաստանի [Հանրապետության](#) ու հայկական զբոսաշրջային արդյունքի (այդ թվում՝ նաև գովազդատեղեկատվական նյութերի) պատշաճ ներկայացումն ու խթանում է այն՝ միջազգային միջոցառումներին (այդ թվում՝ մասնագիտացված ցուցահանդեսներին)

մասնակցության, մամուլի, սոցիալական ցանցերի, էլեկտրոնային մարքեթինգի և այլ հասարակության հետ կապերի միջոցներով.

21) իրականացնում է մարքեթինգային (այդ թվում՝ արտաքին շուկաների) ուսումնասիրություններ, վերլուծություններ և շահագրգիռ կողմերին ապահովում անհրաժեշտ տեղեկատվությամբ.

22) իրականացնում և համակարգում է զբոսաշրջության ոլորտի զարգացման աշխատանքները.

23) աջակցում և մասնակցում է գործարար միջավայրի, ներդրումների, արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտը կարգավորող բարենպաստ օրենսդրական դաշտի ձևավորմանն ու վարչարարական խոչընդոտների վերացման միջոցառումների մշակմանը.

24) մասնակցում է ներդրումային, արդյունաբերական, զբոսաշրջության և արտահանման խթանման ծրագրերի մշակմանը և իրականացնում է դրանք.

25) մշակում և իրականացնում է համաշխարհային շուկայում Հայաստանի [Հանրապետության](#)՝ որպես զբոսաշրջային երկրի, և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման և խթանման ծրագրեր.

26) ձևավորում և վարում է զբոսաշրջային տեղեկատվական բազան.

27) շահառուներին է տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն.

28) համակարգում է պետական աջակցությամբ գործող զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնները և ապահովում դրանց գործունեությունը.

29) սահմանված կարգով ներկայացնում է զբոսաշրջության օրենսդրական դաշտի կիրառման պրակտիկայի ընդհանրացման, դրա կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ.

30) ուսումնասիրում է զբոսաշրջային արդյունքի խթանման և իրականացման համաշխարհային առաջավոր փորձը, ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև իրականացնում է միջոցառումներ՝ դրանք Հայաստանի Հանրապետությունում կիրառելու համար.

31) ուսումնասիրում և վերլուծում է զբոսաշրջային արտաքին շուկաների մասին տեղեկատվությունը և այն տրամադրում է շահառուներին.

32) աջակցում է Հայաստանի Հանրապետության կողմից զբոսաշրջության ոլորտում կնքված պայմանագրերի և համաձայնագրերի իրականացմանը:

~~33)32) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:~~

**Հոդված 2.** Օրենքում «լիազոր մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովաձևերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի [\(այսուհետ՝ Օրենք\) 7-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «բ» ենթակետից հանել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և» բառերը:](#)

**Հոդված 2.** 17-րդ հոդվածի 1-ին մասում «նախարարության կառավարման ոլորտում գործող պետական» բառերը փոխարինել «նախարարությանը ենթակա» բառով:

**Հոդված 23.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 7. Ռազմարդյունաբերության կոմիտեն**

1. Ռազմարդյունաբերության կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը:

2. Ռազմարդյունաբերության կոմիտեն՝

1) մասնակցում է՝

ա. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պետական աջակցության ծրագրերի նախագծերի մշակմանը.

բ. ռազմական կարիքների համար պետական պատվերի և դրա ձևավորման կարգի նախագծերի մշակմանը.

գ. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների գրանցման կարգի նախագծերի մշակմանը.

դ. ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման մեթոդները, դրանց կիրառման մեխանիզմները և ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման գնի որոշման կարգի նախագծերի մշակմանը.

ե. պետական պատվիրատուի ներկայացուցչության (ներկայացուցչի) կողմից ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի հսկողության կարգի նախագծի մշակմանը.

զ. պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող, նյութական արժեքների ցանկի մշակման և վարման կարգի նախագծի մշակմանը.

է. ՌԱՀ-ի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և վարման կարգի նախագծի մշակմանը.

ը. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման կարգի նախագծի մշակմանը.

թ. ռազմական պետական պատվերի հիմնական ցուցանիշների նախագծի մշակմանը.

ժ. ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող կազմակերպությանը բազայինի կարգավիճակ տալու կարգի նախագծի մշակմանը.

ժա. ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների ցանկի նախագծի մշակմանը.

ժբ. գիտական և գիտատեխնիկական արդյունքների պետական հաշվառման կարգի նախագծի մշակմանը.

ժգ. յուրաքանչյուր պետական պայմանագրի արդյունքների ֆինանսատնտեսական գործունեության առանձին հաշվառման կարգի նախագծի մշակմանը:

2) ~~5. Կոմիտեն~~ իրականացնում է՝

ա. ~~1)~~ ՌԱՀ-ի բնագավառի մասնագետների վերաբերյալ տեղեկատվական բազայի վարումը.

բ. ~~ա2)~~ ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարումը.

գ. ~~3)~~ ՌԱՀ-ի ոլորտային ծրագրերը.

դ. ~~4)~~ ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ համագործակցությունը.

ե. ~~5)~~ ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների կայուն գործունեության ապահովումը.

զ. ~~6)~~ ռազմական կարիքների համար պետական պատվերի պայմանագիր կնքած կազմակերպության գրանցումը ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում՝ դիմումը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում.



է.7) կազմակերպությունների գորահավաքային նախապատրաստության աշխատանքների և առաջադրանքների կատարումը.

ը.8) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների միջև համագործակցության կազմակերպումը.

թ.9) ռազմարդյունաբերական կլաստերների ստեղծումը.

ժ.10) ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ իրավական և նորմատիվ տեխնիկական բազայի ստեղծումը.

ժա.11) ռազմական արտադրանքի որակի հսկողությունը.

ժբ.12) ռազմարդյունաբերական բնագավառի միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումը.

ժգ.13) ռազմատեխնիկական համագործակցությունը.

ժդ.14) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների ամփոփ ցուցակի վարումը.

ժե.15) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական աջակցության ծրագրերը.

ժզ.16) զենքի արտադրության լիցենզիա տալու լիազոր մարմնի գործառույթը.

ժէ.17) 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կառավարումը.

~~ժթ.18) ռազմարդյունաբերական բնագավառում օրենքով սահմանված այլ լիազորություններ:~~»:

**Հոդված 2.** Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության վերաբերյալ Կառավարության, վարչապետի և Անվտանգության խորհրդի որոշումները:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 20-ի թիվ ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասից և 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետից հանել «լիազորված» բառը:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) **պետական գույքի կառավարման մարմին՝** պետական գույքի կառավարումն իրականացնող, պետական գույքային հարաբերությունների կանոնակարգման լիազորություններ ունեցող մարմին».

2) 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին հոդվածով.

**«Հոդված 6.1. Պետական գույքի կառավարման մարմինը**

1. Պետական գույքի կառավարման մարմինը ~~նախարարությանը ենթակա~~ Պետական գույքի կառավարման կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե):

2. Կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, ~~որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

3. ~~Կոմիտեի նախագահին ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~»:

**Հոդված 4.** Օրենքում «պետական գույքի կառավարման լիազորված մարմին» և «վերադաս կառավարման մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովածներով:

**Հոդված 5.** Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

**Հոդված 6.** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պետական գույքի կառավարման ոլորտում քաղաքականությունը մշակում և իրականացնում է Կառավարությունը: Կառավարության լիազորություններն են՝»:

**Հոդված 7.** Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 7. Կոմիտեի լիազորությունները**

1. Կոմիտեն ~~իր իրավասությունների շրջանակներում՝~~

1) իրականացնում է իրեն հանձնված (ամրացված) պետական գույքի (այդ թվում՝ իր կառավարմանը հանձնված բաժնետոմսերի) կառավարումը և սպասարկումը.

2) ~~Կառավարություն~~ համապատասխան նախարարին է ներկայացնում առաջարկություններ պետական սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների, ինչպես նաև առանձին տարածքների արդյունավետ օգտագործման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքի սեփականության իրավունքի ճանաչման և արդյունավետ օգտագործման վերաբերյալ.

3) համակարգում է պետական գույքի գույքագրման աշխատանքները և և համապատասխան պետական կառավարման մարմինների հետ համատեղ դրանց անցկացումը, ~~Կառավարություն~~ համապատասխան նախարարին է ներկայացնում է հաշվետվություններ պետական գույքի գույքագրման արդյունքների և վիճակի փոփոխությունների վերաբերյալ.

4) իրականացնում է պետական գույքի հաշվառման աշխատանքները և վարում պետական գույքի հաշվառման գրանցամատյանը.

5) համագործակցում է միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների և օտարերկրյա ներդրողների հետ.

6) պետական գույքի կառավարման ոլորտում աջակցում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ու ներդրումների իրականացման ծրագրերի մշակմանը և դրանց իրագործմանը.

7) մշակում և ~~համապատասխան նախարարության միջոցով կառավարության հաստատմանն~~ համապատասխան նախարարին է ներկայացնում պետական գույքի կառավարման եռամյա ծրագիրը, դրա կատարման արդյունքների մասին կազմում և ~~կառավարություն~~ համապատասխան նախարարին է ներկայացում տարեկան հաշվետվություն, ինչպես նաև իրականացնում է պետական գույքի կառավարման եռամյա ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքների ամփոփումը.

8) մշակում է պետական գույքի օտարման մասին իրավական ակտերի նախագծեր և իրականացնում է պետական գույքի, այդ թվում պետական շենքերով և շինություններով կառուցապատված հողամասերի սահմանված կարգով օտարումը.

9) կազմակերպում է օտարվող պետական գույքի գնահատման աշխատանքների իրականացումը.

10) մշակում է պետական գույքի կառավարման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի նախագծեր և համապատասխան նախարարության միջոցով դրանք ներկայացնում ~~կառավարության~~ քննարկմանը համապատասխան նախարարին.

11) առևտրային կազմակերպություններում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսի (բաժնեմասի) լուծարման և ֆինանսական առողջացման ոլորտներում մշակում և համապատասխան ~~նախարարության միջոցով~~ կառավարության ~~քննարկմանն~~ նախարարին է ներկայացնում մասնավորեցման ծրագրերում ընդգրկված առևտրային կազմակերպությունների լուծարման կամ ֆինանսական առողջացման վերաբերյալ առաջարկությունները.

12) պետական գույքի կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության անունից կնքում է գործարքներ և գործարքներով մյուս կողմի համար նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

13) իրականացնում է պետական և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական բաժնետնասի (բաժնետոմսերի) կառավարումը.

14) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է պետական գույքի հաշվառման բնագավառում արդիական մեթոդների ներդրումը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա՝ վարում պետական գույքի համակարգված հաշվառում.

15) պետական գույքի օտարման գործընթացում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է աճուրդներ և մրցույթներ.

16) ապահովում է օտարման ենթակա պետական գույքի վաճառքի կազմակերպումը, որի իրականացման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են պետական գույքի օտարումից ստացված դրամական միջոցների հաշվին.

17) իրականացնում է պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրումը, անհրաժեշտության դեպքում մշակում է պետական գույքի անհատույց օգտագործման և վարձակալության տրամադրման մասին իրավական ակտերի նախագծեր.

18) պետական գույքի արդյունավետ կառավարման նպատակով համապատասխան ~~նախարարության միջոցով~~ կառավարություննախարարին ներկայացնում է առաջարկություններ, իր լիազորությունների շրջանակում ընդունում է իրավական ակտեր:

19) մշակում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին որոշման նախագծերը և ներկայացնում ~~Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը~~ համապատասխան նախարարին, և դրանք ~~Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից~~ ընդունվելուց հետո իրականացնում է հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացը.

20) իրականացնում է 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություն, որոշում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը, կառավարման ոլորտում կատարված աշխատանքների գնահատում՝ այդ թվում գործադիր մարմինների ղեկավարների գործունեության գնահատում, արդյունքների հիման վրա խրախուսման կամ պատասխանատվության միջոցների կիրառման առաջարկությունների ներկայացում.

21) կազմակերպում է պետական անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման աշխատանքները.

~~22)~~ իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու աշխատանքները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է համապատասխան պայմանագրեր:

~~23)22) \_\_\_\_\_ իրականացնում է պետական գույքի կառավարման ոլորտում օրենքով վերապահված այլ լիազորություններ:»:~~

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**  
**«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ (ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ) ՄԱՍԻՆ»**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՀՕ-188 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին հոդվածով.

**«Հոդված 12.1. Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման մարմինը**

**1.** Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման մարմինը Պետական գույքի կառավարման կոմիտեն է (այսուհետ՝ կոմիտե):»:

**Հոդված 2.** Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 13. Կոմիտեի լիազորությունները**

1. Կոմիտեն՝

1) մշակում է մասնավորեցման ծրագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը և ներկայացնում է [Կառավարության հաստատման համապատասխան նախարարին](#).

2) իրականացնում է Կառավարության հաստատած մասնավորեցման նախապատրաստական աշխատանքները.

3) կնքում է Կառավարության անունից մասնավորեցման գործարքներ, վերահսկում է պայմանագրային պարտավորությունների կատարումը, դրանց չկատարման դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և մասնավորեցման պայմանագրով նախատեսված միջոցներ.

4) ընդունում է «փոքր» մասնավորեցման հայտեր և դրանց ընթացք տալիս սահմանված կարգով.

5) Կառավարության որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ ընկերություններում նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակով նշանակում է կառավարիչ, ներգրավում է փորձագետներ:

6) հաստատում է «փոքր» օբյեկտների տարածքի արժեքի հաշվարկման ուղղիչ գործակիցները՝ ելնելով Կառավարության հաստատած մեկ քառակուսի մետրի արժեքից և այդ գործակիցների նվազագույն և առավելագույն չափերից:

7) ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ կամ աճուրդով մասնավորեցնելու դեպքում հաշվարկում է մասնավորեցվող պետական գույքի մեկնարկային գինը:

8) վերահսկում և վերլուծում է մասնավորեցման ընթացքը՝ այդ նպատակով տեղեկություններ ստանալով պետական կառավարման և դատական մարմիններից:

9) քննարկում է մասնավորեցման վերաբերյալ առաջարկությունները, դիմումները, գանգատները:

10) պետական գույքի մասնավորեցման ժամանակ իրականացնում է պետության սեփականությունը հանդիսացող կառուցապատված հողամասերի՝ սահմանված կարգով մասնավորեցումը,

11) մասնավորեցման նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակով ներգրավում է փորձագետներ, ինչպես նաև մասնավորեցման աշխատանքներում ներգրավում է գիտահետազոտական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև առանձին մասնագետների, այդ թվում՝ փորձաքննության նպատակով,

12) համակարգում է մասնավորեցվող և օտարվող պետական գույքի արժեքի հաշվարկման (գնահատման և վերագնահատման) աշխատանքները,

13) իրականացնում է վերահսկողություն իր կողմից կնքված պայմանագրով մյուս կողմի համար նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ,

14) կազմակերպում է մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների (այդ թվում՝ ազդագրերի) հրապարակումը,

~~15) իրականացնում է պետական գույքի մասնավորեցման, տնօրինման, ինչպես նաև հաշվառման գործընթացների վերլուծությունը և ամփոփում դրանց վերաբերյալ առաջարկությունները:~~

~~16) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:~~



17)15)

**Հողված 3.** Օրենքում «լիազորված պետական մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «կոմիտե» բառով և դրա հոլովածներով:

**Հողված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍՍՐԳՐՔՈՒՄ**  
**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի անտառային օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին հոդվածով..

**«Հոդված 7.1. Անտառային կոմիտեն»**

1. ~~Անտառային կոմիտեն նախարարությանը ենթակա մարմին է:~~

2.1. ~~Անտառային կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

3. ~~Կոմիտեի նախագահն ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~

4.2. ~~Կոմիտեն ապահովում է՝~~

1) իրականացնում է անտառային պետական ծառայությանն օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացումը:

2) կազմակերպում է անտառների և անտառային հողերի պետական հաշվառումը և կազմակերպումը և վարում է անտառային պետական կադաստրի վարումը:

3) մշակում է անտառային պաշարների արդյունավետ օգտագործման ծրագրերի մշակումը՝ համագործակցելով նաև միջազգային համապատասխան կառույցների հետ:

4) կազմակերպում և հսկողություն է իրականացնում պետական անտառների անտառաշինության աշխատանքների նկատմամբ կազմակերպումը և հսկողությունը:

5) անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտի մթերումն իրականացնելու համար փաստացի ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություններ տրամադրելու նպատակով ստեղծում է մասնագիտական հանձնաժողովների ստեղծումը և եզրակացությունների համաձայն տրամադրում է թույլտվություն և տրամադրումը:

6) [հրականացնում է](#) անտառային մոնիթորինգի ~~իրականացումը~~.

7) [մասնակցում է](#) անտառային բնագավառի ինստիտուցիոնալ բարեփոխումների ու ֆինանսական ռազմավարության մշակմանը—~~մասնակցությունը~~, հատկացված ֆինանսական միջոցների կառավարումը, ինչպես նաև դրանից բխող ներդրումային ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը, պայմանագրերի կնքումը.

8) [մշակում և կազմակերպում է](#) անտառային հողերում հողեհային անվտանգության, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերը ~~իր մշակումը և կազմակերպումը~~.

9) [կազմակերպում է](#) պետական անտառային տնտեսությունների վարումը ~~և կազմակերպումը~~.

10) [կազմակերպում է](#) անտառների վերականգնման և անտառապատման, ինչպես նաև սելեկցիոն-սերմնային տնտեսության վարման, ագրոանտառաբուծության, տնկարանային տնտեսության ընդլայնման, անտառամելիորատիվ միջոցառումների ~~կազմակերպումը~~.

11) շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա [տրամադրում է համաձայնություն](#) անտառավերականգնման, անտառապատման, անտառային ճանապարհների կառուցման և վերանորոգման նախագծերի, անտառային ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի վերաբերյալ ~~համաձայնության տրամադրումը~~.

12) [հրականացնում է](#) պետական անտառների տիրապետումը և օգտագործումը.

13) [հրականացնում է](#) սահմանված կարգով անտառատնկարկներն անտառի շարք փոխադրելու հետ կապված գործառույթների ~~իրականացումը~~.

14) [ներկայացնում է առաջարկություններ](#) անտառային հողերի և անտառների՝ ըստ նպատակային նշանակության դասակարգելու վերաբերյալ ~~առաջարկությունների ներկայացումը~~.

15) օրենքով սահմանված դեպքերում [տրամադրում է եզրակացություն](#) արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին ~~եզրակացության տրամադրումը~~.

16) կազմակերպում է անտառների արտադրողականության բարձրացման, անտառավերականգնման, անտառապատման և խնամքին ուղղված պետական նպատակային ծրագրերի իրականացումը ~~և կազմակերպումը~~։

17) կազմակերպում է անտառային օրենսդրության խախտումների կանխարգելման և հայտնաբերման աշխատանքները ~~և կազմակերպումը~~։

18) տրամադրում է համաձայնություն անտառներում և անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման համար ~~համաձայնության տրամադրումը~~։

19) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով անտառների կամ անտառային հողերի նկատմամբ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի ձեռքբերման հայտերի ընդունումը և մրցույթների կազմակերպումը, համաձայնության տրամադրումը։

20) հրդեհավտանգ ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում, անտառի առանձին հատվածներում քաղաքացիների և տրանսպորտային միջոցների օրենքով նախատեսված դեպքերում ապահովում է մուտքի արգելումը կամ սահմանափակումը, ինչպես նաև այդ հատվածներում որոշակի աշխատանքների իրականացումը։

21) մասնակցում է թյուր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովմանը և անտառային ոլորտում նախատեսվող միջազգային ծրագրերի մշակմանը։

22) կազմակերպում է անտառային օրենսդրության խախտումների հայտնաբերումն ու կանխարգելումը ~~և կազմակերպումը~~ և այդ մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական պետական վերահսկողություն իրականացնող մարմնին և իրավապահ մարմիններին անհապաղ տրամադրում է տեղեկություններ ~~և անհապաղ տրամադրումը~~, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում է համատեղ միջոցառումներ ~~և կազմակերպումը և իրականացումը~~։

23) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր ~~իրավասության լիազորությունների~~ սահմաններում իրականացնում է վարչական վարույթի ~~իրականացումը~~, ընդունում է համապատասխան որոշումներ ~~և ընդունումը~~։

24) [հրականացնում է](#) ծառայողների և անտառային ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման կազմակերպումը.

25) [հրականացնում է](#) գիտահետազոտական աշխատանքների, անտառային արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների և առաջավոր փորձի ներդրման կազմակերպումը.

26) [հրականացնում է](#) անտառային ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման, այդ թվում էկոլոգիական կրթության, աշխատանքների կազմակերպումը.

27) [հրականացնում է](#) իր ենթակայության անտառային հողերում գտնվող հատուկ պահպանվող անտառային տարածքների կառավարումը.

28) [մշակում և հրականացնում է ներդրումային ծրագրեր](#) պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ~~ներդրումային ծրագրերի մշակումը և հրականացումը.~~

29) [աջակցում է](#) համայնքային անտառների ստեղծմանը և զարգացմանը ~~աջակցությունը.~~

30) [ստեղծում է](#) անտառային արդյունքի արտադրության և վերամշակման հզորությունների ~~ստեղծումը.~~

31) [մշակում և հրականացնում է](#) հանգստի, զբոսաշրջության, այդ թվում՝ էկոտուրիզմի, զարգացման ծրագրերի ~~մշակումը և հրականացումը.~~

32) [աջակցում է](#) ագրոանտառաբուծության զարգացմանը ~~աջակցությունը.:~~

~~5. Կոմիտեն հրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ.:~~

**Հոդված 2.** Օրենսգրքի [6-րդ հոդվածի «թ» կետում](#), 7-րդ հոդվածի 1-ին մասի «ժե» կետում և 8-րդ հոդվածի «դ» կետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի մարտի 30-ի ՀՕ-52 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ հոդվածով.

**«Հոդված 6. Լեզվի կոմիտեն**

~~1.—Լեզվի կոմիտեն նախարարությանը ենթակա մարմին է:~~

~~2.1. Լեզվի կոմիտեն ղեկավարում է կոմիտեի նախագահը, որին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:~~

~~3.—Լեզվի կոմիտեի նախագահին ունի տեղակալ, որին կոմիտեի նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:~~

~~4.2. Լեզվի կոմիտեն՝~~

1) մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը և ապահովում այդ քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերը:

2) ապահովում է՝

ա. սույն օրենքի պահանջների կատարումը և լեզվական քաղաքականության պետական ծրագրի իրականացումը.

բ. հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում դրա լիակատար գործածությունը.

գ. ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը.

3) աջակցում է՝

ա. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանը.

բ. հեռուստառադիոընկերությունների՝ մշակութային, տեղեկատվական, տեղեկատվական-վերլուծական, հասարակական-քաղաքական, գիտահանրամատչելի, կրթական և մարզական հաղորդումների լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարմանը.

4) իրականացնում է լեզվաքարոզչություն, լեզվական փորձաքննություն, լեզվավիճակի մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կանխարգելիչ միջոցառումներ, գնահատումներ, ինչպես նաև կազմակերպում լեզվաքաղաքականության հարցերին նվիրված միջոցառումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ, ասուլիսներ.

5) լեզվական պարզաբանումներ է տալիս հայերենի կանոնարկման և կիրառման, անձնանունների, հայրանունների և ազգանունների, աշխարհագրական տեղանունների ինչպես նաև առանձնահատուկ բարդության տերմինների, հասկացությունների վերաբերյալ:

6) նպաստում է՝

ա. Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը.

բ. ոչ հայախոսների համար լեզվական ուսուցման հատուկ ծրագրերի մշակմանը:

~~7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:~~

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԻՄՆԱԴԻՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությունում «անդամներն» բառը փոխարինել «նախագահը, համանախագահները և մյուս անդամները չեն համարվում հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և» բառերով:

Հոդված 2. 24-րդ հոդվածի 2-րդ մասում «Հոգաբարձուների խորհրդի նախագահի, հիմնադրամի կառավարչի ընտրության և պաշտոնից ազատման» բառերը փոխարինել «Հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և ազատման, հիմնադրամի կառավարչի ընտրության և պաշտոնից ազատման» բառերով:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը» բառերը փոխարինել «հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի կարգավիճակը կամ հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: